

ԻՐԱՋՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Հեղինակութիւն

ԱԵԳՐԵՎ ՄԵՆԳՐՈՒԵՑՆԵ

ԹՐՅԱՐԱ

Կ. Բակ. | Տիոգր. Դ-րա «Կուլտուրա»
Խոնսկայ պ. 16.

1909

5/075)

Մ-25

20 MAY 2010

26 MAY 2005

6 (078)

8-25

ԻՐԱՋՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Հեղինակութիւն

ՍԵԳՐԵՔ ՄԵՆԴԻՆԵԼՆԻ

ԹԻՎԻ

Տպարան «ԿՈՒՆՑՈՒՐԱ» Բնկ. | Տիպogr. Տ-վա «Կուլտуրա»
Յովլյամինովսկայ ոլ., յն 18.

1909

24 JUN 2013

450

Յ Ա Խ Ա Զ Ե Բ Ա Ն

Ով որ փոքր ինչ ուշադրութեամբ հետեւ է այն ցանկութիւններին, ինչ որ վերջին տարիներում լսվել են, թէ մեր և թէ տաճկահայոց գրականութեան մէջ դպրոցական վիճելի խնդիրների մասին, նա կը վկայէ, որ «իրազննական դասերի» նկատմամբ այլ ևս երկու կարծիք չի կարող լինել, որովհետև ամէն կողմերից միաբերան խոստվանում և քարոզում են, որ այն դասերը տարրական դպրոցի էական ուսմունքներից մէկը՝ այն ևս թերևս ամենակարևորագոյնը՝ լինելու արժանի են, առանց վերապահութեան։ Բայց թէ ի՞նչ պէտք է հասկանալ «իրազննական դասեր» ասելով, այս մասին զարմանալի շփոթութիւններ են տիրում մեր գաղափարների մէջ։

Ի՞նչ է «իրազննական դասերի» նիւթը։ Նախ և առաջ ոչ ոք չի վարանի Շպատասխանել, թէ պէտք է «իրեր» աւանդել, այն ևս «զննելով», և ահա կունենանք «իրազննութիւն»։ Խսկ եթէ նոյն խսկ մեր «փորձված» ուսուցիչներից հարցնէք, թէ որո՞նք են այդ աւանդելի «իրերը», վերջիվերջոյ բոլորի պատասխանը կարելի է երկու բառով ամփոփել, այն է թէ պէտք է դաս տալ «բընական գիտութիւն» և «աշխարհագրութիւն»—միայն թէ տար ական ձևով, ուրեմն կը ստանանք—«տարրական գիտելիք բնութեան մասին» և «հայրենագիտութիւն»։

Այս խօսքերով կարծեն թէ ինսդիրը պարզվեցաւ, և մենք իմանում ենք, թէ կայ «գիտութիւն»—մեծերի համար, և կայ «տարրական գիտութիւն»—փոքրերի համար, և թէ այս երկրորդն է խսկական «իրազննութիւնը», խսկ երը որ ուսուցիչները փորձում են «մեծ» և «ընդարձակ» գիտութիւնից ջոկել մանուկների համար տար ականը, ահա զարձեալ սկսվում են շփոթութիւնները, ուր նոյն խսկ մեր ամեն ափոր ձագած ուսուցիչները ոչ նուազ խարիսխերով են փնտում խնդրի լուծումը։

Նոցանից մէկը կամենալով «Ձրի» մասին մի իրազննական դաս կազմել ընկերներին օրինակ տալու համար, հաւաքեց բազմաթիւ բնագիտական պօպուլեար գրքեր և հետաքրքրական ծանօթութիւններ քաղելով այն նիւթերից՝ վերջիվերջոյ գրեց և



21306-59

Ա.

լցըեց ա ա ս ը մեծ մեծ թերթանոց թուղթ, բայց գարձեալ չկարողացաւ աւարտել իւր յանձնարարութիւնը, որովհետև պ օ պ ու ւ ե ա ը զքերի մէջ հետաքրքրական նիւթեր գեռ էլի շատ պիտի գտնվէին, եթէ այն մէկ օրինակիլ դասի զրութիւնը շալունակվէր— Միւսը մանուկներին հետաքրքրական տեղեկութիւններ աւանդելով «Զկների» մասին, չմոռացաւ և այն հաղորդել թէ ձկնան լողակները յատուկյատուկ անուններ ունին, որք են, պէ կ-դ ո մ ի ն ա ւ ա ը գ ո մ ի ն ա ւ լ ե ա տ է ը ա ւ դ ո ր ս ա ւ կ ո դ ա ւ (աշակերտաց այլէն էր զքի ամել անունները): Ուրեմն մանուկներին հաղորդվում են այնպիսի մանրամասնութիւններ, որ նոյն իսկ Բըէմը աւելորդ է համարում նաև հասակաւորների համար:

Արդ եթէ մեր փորձված ուսուցիչներն այսպէս են ըմբռանում ա ռ ա ր կ ա յ ա կ ա ն զասատուութիւնը, երկակայեցէք, թէ նիշ գժուարութիւններ է ստեղծվում այնպիսի անփորձ ուսուցիչների համար, որոնք միամտաբար յանձն են առնում զպրցներում «իրազնական դասեր» աւանդել: Նորքա այժմ այն սաստիճան յուսահատված են, որ հետզհետէ հ ր ա ժ ա ր վ ո ւ մ ե ն ա յ դ պիսի զանաբերից, այնպէս որ երեխ շուտով մենք կունենանք «իրազնական դասեր» ծրագրով, թղթի վրա, բայց ոչ գործով, իրականութեան մէջ:—

Արդ, որպէս զի այս շփոթութիւնները վերանան, մեր ուսուցիչները նախ և առաջ պէտք է ընտելանան այն մտքի հետ, թէ «ի ր ա զ ն ն ա կ ա ն դ ա ս ը» «բ ն ա գ ի տ ո ւ թ ի ւ ն չ է, և ո չ ա ս ը ա կ ա ն գ ի տ ե լ ի ք»: Այլ «ընագիտութիւնը» զիտութիւններից մէկն է, ի ս կ «ի ր ա զ ն ն ո ւ թ ի ւ ն ը»—լ ո կ մ ե թ ո գ է, ուրեմն զորք խիստ տարբեր բաներ են: Մէկը ա ա լ ի ս պատկերացնելու «ընդունակութիւնը»:

Անզիլական հոգեբան Բէկնը շատ համոզեցուցիչ կերպով ցոյց է տուել այդ տարբերութեան ճիշդ սահմանները, որի ուկցունքները տարիներ առաջ ես և Արարատի» մէջ հրատարակեցի: Այժմ փորկել, Ընթիրցողը կը համոզի, որ ձեռնարկի մէջ յիշատակած առարկաները այն «ընագիտական» առարկաներ են, բայց և այնպէս ամբողջ ուսմունքը սիստեմատիկ «ընագիտութիւն» չէ, այլ մտքի ա ռ ա ն ձ ն ա յ ա տ ո ւ կ հ ր ա հ ա ն պ ո ւ թ ի ւ ն:

Մենք չպէտք է զարմանանք, որ մի այսպիսի տ ա ր օ ր ի-«գիտութիւններ» են աւանդում, միթէ մեր ուսմունք ասած բանը արդարէ «ծանօթութիւններ» աւանդող ուսմունքներ են, թէպէտ

ծրագրի համեմատ այն տեղ «ատարրական» ուսմունքներ պէտք . է ուսուցանիքն, բայց այդ անունը մեզ չպէտք է մոլորեցնե, որպէս զի կարողանանք պարզ կերպով ըմբռնել ուսումնարանների բուն խորհուրդը: Արդեօք զորք «ծանօթութիւններ» ամբարելու թէ միտքը «հրահանգելու» և «զարգացնելու» հաստատութիւններ են:

Ով որ խորն է ըմբռնում զպրցական կոչումը, նա պէտք է համոզված լինի, թէ զպրցի միակ և իսկական զործը այն է, որ գ օ ր ա ց ն է մ ա ն ո ւ կ ի ը մ բ ո ն ո դ ա կ ա ն և պ ա տ կ ե ր ա ց - մ ա ն կ ի հ ա ր ո դ ո ւ թ ի ւ ն ը, որ մանուկը օժանդակութիւն ստանայ այսօրուայ պարզ «պատկերացումներով»՝ վաղը աւելի «բարդ պատկերացումներ» յօրինել, կառաւցանել, ճարտարել, կամ ստեղծագործել: Արդ, իրազնական դասն է այն աւտգագոյն ուսմունքը, որ յատկապէս այդ ու զ ո ւ թ ի ւ ն է պահպանում: Նա ուրեմն ուսուցանում է ոչ թէ «ջուր» կամ «ձուկ», այլ կենդանի մանուկի մէջ շարժում է այն զպայարանքներն ու կարողութիւնները, որով զա պէտք է ըմբռնէ և պատկերացնէ «ջուրը», «ձուկը» կամ հաղարաւոր ուրիշ առարկաները, հարկաւ նախ թանձրացեալ սպա և վերացեալ առարկաները:

Բէնն ասում է. «Դպրոցական» կ ա ն ո ն ա ւ ո ր հրահանգութիւնը միայն այդ հետեւանքը կարող է արտադրել, և միայն այդ արդիւնքն է ցանկալի, թէպէտնա այն ձեռվ է առաջ զնում, ի բ ը հ թէ հաղորդում է զանազան առարկաների մասին որոշ և ամբողջացրած ծանօթութիւններ:,,

Ուրեմն հայ ուսուցիչը նախ այն պէտք է տպաւորէ իւր մտքի մէջ, թէ «իրազնական դասը» «ընագիտութիւն» չէ: Այս հիմնական մոլորութիւնից ազատվեցուց յետոյ, նա պէտք է զգուշանայ նաև իւր շարունակ խարիսխումներից, երբ որ այդ ուսմունքն է աւանդում: Մի ինչ որ ճակատագրական մոլորութեամբ, ամենայն ուսուցիչ անդապարհի արդիւնական ուրութիւնից: Բէնն այսպէս է ամփոփում սովորական սխանները,

1) Շատ անգամ ուսուցիչն այնպիսի բաններ է ուսուցանում, որ առանց գասերի էլ լաւ յայտնի է մանուկներին: (Կատուն մի գլուխ և չորս ոտք ունի, ձին մի գլուխ և չորս ոտք ունի. շունն էլ նոյնպէս, կովս էլ նոյնպէս և այլն).

2) Այնպիսի բաններ է ուսուցանում անժամանակ, որ մանուկն առական հասկանալի չէ: (Փայլատակումը ելեքտրականութիւն է, — իսկ միջամտն ինչ է).

3) Այնպէս չի աւանդում զամբ, որ սովորեցրածը միշտ հետեւրդ ծանօթութիւնն համար հաստատուն հիմք զառնայ. մի սխալ, որ ամենայն աստիճանում կրկնվում է.

4) Գլխաւոր խնդրից անտեղի և անկարգ կերպով շեղվում է կողմանկի, որով դասը մանուկի մտքի մէջ շփոթութիւններ և մը-թութիւններ է առաջացնում:—

Արդ այս իմ ձեռնարկով աշխատել եմ յիշատակած սխալներից խուսափելու օրինակներ տալ: Մեր ուսուցիչներին գուցէ չկարողացայ գոհացնել արած բերած դասերի թուռով շատ չեն, բայց դասերը շատ անգամ այնքան ընդարձակ են և այնպէս յարմար մասերի բաժանած, որ կարիք չպիտի զգացվի քանակի պակասութեան մասին տրուռնջներ յայտնելու: Մանաւանդ, որ յուսով եմ, թէ ուսուցիչներին աւելի պիտի գոհացնեմ ձեռնարկիս ՞Յաւելուածներով”, որոնք նոցա առատ առատ նիւթ կու տան իրանց դասերն աւելի ճոխացնելու և հարստացնելու համար:

Սակայն իմ դասերի ու յաւելուածների խորհուրդն այն չէ, որ ուսուցիչները ձեռնարկիս գերի դառնան: Ես միայն առաջնորդութիւն եմ տալիս ուսուցիչներին, իսկ դասի տէրը, նիւթ ընտրողը, ընդարձակողը, կամ յապաւողը, նոր նոր դասեր ինքնաբերաբար կազմողը, առ հասարակ ամէն բանի նախաձեռնողը—ինքը ուսուցիլ պէտք է լինի:

Տեղ տեղ դասերի վերջը մի մի գործնական հրահանգներ եմ տեղեւի: Թող ուսուցիչը հաճի այս հրահանգները գործ դնել ը ո լ ո ր դասերում, ուղ նոքա պատշաճում են: Եթէ ես ամէն տեղ չեմ յիշտակել նոյն բաները, ես չեմ ուզեցել կրկնութիւններով ընթերցողին ձանձրացնել:

Դասերը աւելի կենդանացնելու համար, դարձեալ տեղ տեղ միայն կցել եմ առածներ, հանելուկներ, երգեր, զուարձալի մանրապատումներ: Արդ ուսուցիչներից պէտք է ինդրիմ, որ նոքա ոչ միայն աւելի լաւագոյնները տեղը դնեն, այլ նաև միւս դասերին իրանց կողմից այլպիտի զարգեր յարմարեցնեն: || Նոքա ինձ շատ կը պարտաւորեցնեն, եթէ լաւագոյնները ինձ հազորդեն, որպէս զի պապայում ես էլ կարողանամ օգտվել այդ նուերներից:

Առաւելապէս կուզենայի ուսուցիչների ուշադրութիւնը դարձնել դասատուութեան ՞ձեռական՞ կոչված աստիճանների վը-ըստ, ես զանագան ձեռի օրինակներ եմ տուել ձեռնարկիս մէջ: Արդ, ինչ ձեռով և աստիճաններով պէտք է ընթանայ դասը: Եթէ ես սկզբից մինչեւ մի ձեռին չենտելեցի, իմ նպատակն այն էր, որ ուսուցիչը իւր անհատականութեան հետեւով, ընտրէ այն ձեռ-րեց մէկը, որը որ աւելի ձեռնուու է համարում, չմուանալով որ բանը նիւթն է, բավանդակութիւնն է, և ոչ թէ նորա արտաքին ձեր: Ինք շատ համակրում եմ հերքարտեան ՞ձեռական՞ աստիճաննե-րին, բայց նոր-հերքարտականները արդէն չափազանցութեամբ

անհամացրել են երախտաւոր Հերբարտի առողջ տեսութիւնը: Նոր-հերքարտականների մի լաւ օրինակ, Պրեբսատի ՞Կատուները“ եւ առաջ և մ բերել ձեռնարկիս մէջ, որպէս զի հայ ուսուցիչը ընտրութեան համար՝ շատ զանագան ձեռի թուռում այդ շկօլայի ձեն էլ իւր տեղը գտնէ: Ես կը ցանկայի, որ հայ ուսուցիչը համոզէր, թէ Պրեբսատ որչափ գեղեցիկ կերպով լուսաբանում է մի ուսանաւոր իրազնուութիւններով, այնչափ անտանելի է նորա գիզ-ված հ ա ր ց ու մ ն ե ր ի ա ր ը ա փ ը, որով աշակերտների ազատ մասձողութիւնը պի տի կ ա ն գ ա ռ ն է, ինչպէս որ ջրազանցները կանգ են առնում և կոտրտվում են ջրի անկարգ վարարութիւնից: Վնասը միայն այդ չէ, այլ աշակերտը նաև թութակ է դատնում, որովհետեւ արդէն ուսուցիչը ամէն բան, այն ամէն բան նորա փոխարէն մտածել և որոնել է և ա ր ո ւ ե ս տ ա կ ա ն պ ա տ ա ս-խան ն ե ր է պատրաստել նորա բերանում գնելու: Աւելի անհետեթեթ են դասից հանած բ ա ր ո յ ա կ ա ն -կ ը օ ն ա կ ա ն ս կ զ բ ու ն ք բ ու թ ի ն դ ա ս ի ց հ ա ն ա ծ ծ կ ա ս ի ց ի ն ո յ ն ի ս կ ՞ կ ա ս ո ւ ն ե ր ի ՞ ն ե ր ը, որ ծիծաղելի կարող էին դանալ նոյն իսկ ՞ կ ա ս ո ւ ն ե ր ի ՞ ն ե ր ը, որ ծիծաղելի կարող է յափշտակող լինելով պառաւ տատի համար, որոնք իրազէս գող և յափշտակող լինելով պառաւ տատի թարմատար էափկայով աշակերտների համար իրեւ թէ առաքե-նութեան տիպար պէտք է դառնան: Միով բանիւ բոլոր քարո-զած իմաստութիւնը կատարեալ իմաստակութիւն է դառնում: Հի-զած միմաստութիւնը կատարեալ իմաստակութիւն է դառնում: Հիմ-ի ուսուցիչը հասկացաւ, որ ես Պրեբսատի ՞Կատուները“ ը իմ դա-սերի մէջ այն խորհրդով չեմ զետեղեւ որ այն մեր աշակերտ-ներին դաս արվի բ ա ռ ա ռ բ ա ռ թ ո ր ն ա ս ի թ ա ր մ ա տ ա ս ո ւ թ ի ս է, ինչ որ մկրատելու է: Ամենայն բեզզամենտացիք, ամենայն կանոնաշատութիւն գտանգաւոր է, բայց նոր-հերքար-տեանների կանոնաշատութիւն արդէն խեղդում է ուսուցիչ հան-ձարեղութեան արձակ ազատութիւնը:—

Որպէս զի մեր զասերը առաջ ա կ ա ն լինին, հասկա-նալի է, որ իրական առարկանները պէտք է ցոյց արվին դասա-խօսութեան ժամանակ: Ես աշխատել եմ դասերի համար առաւե-լապէս այնպիսի առարկաններ ընտրել, որոնց ձեռք բերելը մատ-չելի պէտք է լինի նոյն իսկ յետ ընկած ուսումնարանների աղ-չետիկ միջոցների համար: Բայց և այնպէս ուսուցիչը վոքը ինչ քատար է վարժմի գրատախամակի վրա նկարելու արուեստով: Ինկ պէտք է վարժմի գրատախամակի վրա նկարելու արուեստով: Կարեւը ուսումնարանը չկէտք է զլանայ մի քանի արծաթ զոհել, կարեւը պիտոյթները ձեռք բերելու համար: Կարելի է մեր ուսուցիչներից ոմանք խրանեն, որ մեր զասերում քիմիական փորձեր են պատա-հում: Սակայն ՞քիմիական՞ բառը խիստ մեծադղորդ է, մեր զա-սերը աւելի պարզ բան են ենթադրում, այն փորձերը շատ չնշն մերը աւելի պարզ բան են ենթադրում, իւր կողմի կեղագործից կամ բժշկից բաներ են: Թող ուսուցիչը իւր կողմի կեղագործից կամ բժշկից:

Խորհուրդ հարցնէ, և նոքա շատ հեշտ կերպով կը փարատեն նոր աելորդ սարսափները:—

Ես պէտք է մի խոստվանութիւն անեմ: Իմ գործը շատ դժուարացրին մեր զպրոցական ծրագիրն եւ ը հթէ կաշկանդ- ված չլինէի, իմ դասերի նիւթերը ուրիշ կերպով պիտի բազա- դրվէին: Խուսահայոց ծրագիրը իրացնութեան յատկացրել է մի- այն շարի, տաճկահայոց ծրագիրը փոքր ինք աւելի, այն է 3 տարի, որ դարձեալ քիչ է, ինչպէս որ վերեկ բոլոր բացատրու- թիւներից պէտք է եղրակացնել: Սական ոռւսահայոց ծրագիր մէջ սխալմամբ սպողել է մի այլանդակ՝ ուսմունք “աշխատագի- տութիւն”, անունով, բայց ամէն նշաններից երեսում է, որ դա նոյն իրազնութիւնն է, որքին բարեբախտաբար վաղ թէ ուշ ծր- բագիրը կը փոխուի, նորա մէջ անունները կը ճշդվին, և իրազն- նութեան համար կունենանք 4 տարի ժամանակ: Յամենայն դէպս ես առ այժմ միջին ճանապարհ ընտրեցի և ձեռնարկը կազմեցի Յ տարուայ դաստիացով:

Դրբի մէջ այդ տարիները բաժան բաժան չեն ցոյց տուած. միան ց անկի մէջ իւրաքանչչերը տարուայ նիւթը գծիկով(—) ջոկած է միւսներից:

Ոմանք կարծում են, որ «իրազնական դասերը» մանուկ- ների դասագիրը պէտք է լինի: Ես ընդհակառակ կարծում եմ, որ մանուկները մեռած գրքի մէջ ոչնչ զննել չեն կարող նոքա պէտք է զննեն կենդանի բնութեան մէջ:

Իմ ձեռնարկը կազմելիս բացի յիշատակած Ալէքսանդր Բէ- նից օգտվել եմ նաև Ֆրիդրիխ Իւնգից, Էրնստ Պիլցից, Հայնրիխ Շիմմերմանից և Զ. Սիմոն Երեմեանից, որի «Պատկերազարդ բա- ռազիրը գործնական գիտութեանց» արուեստական բառերը շատ նպաստեցին զորդին:—

Ի վեջոյ զիմում եմ մեր արգոյ և ժրաժան ուսուցիչներին, որպէս զի կարողները իրանց ոյժերով նպաստեն մեր ուսումնա- րաններում իրացնութիւնը աւելի բեղմնաւոր կացուցանելու: Եյսպիսի դասերին խիստ կարեոր են իրական առարկաներ, խըս- ուիլակներ, ժողովածուներ, կազմածներ, սարուածքներ, առ հա- սարակ դասի օժանդակիչ պիտոյքներ: Աբդ, ով ինչ կարող է պատրաստել, խնդրում ենք նոցանից, որ նոքա լրագիրներում յայտարարեն, որպէս զի այդ բոլորը հրապարակ հանվելով, այսու- հետեւ ցանկացողը գիտենայ, թէ ում զիմէ հարկաւոր դէպում:

Թիֆլիս

Մօղնիսկայ, 4.

Փ Ա Ս Ե Բ

Սնորհամ Մանդինեան,

Հ Ա Յ Ե Լ Ի Ւ

Թէ իմ առջեր կանգնես, կը տեսնես երեսդ՝
ապստ կամ մաքուր՝ հէնց իշպէս որ կա:

I. Ահա մի այդպիսի հայելի:

II. Զեր տանը ինչ տեսակ հայելի ունիք: Պատիւ
իսկ այս հայելին—ծոցի, զրպանի հայելի է: Ի՞նչ մա-
սեր էք նշմարում հայելու մէջ: Ի՞նչ զիտէք սորա զոր-
ծածութեան մասին:

III. Սենեակի մէջ շատ առարկաներ կան, հայե-
լին էլ նոցանից մէկն է: Հայելին սենեակի առարկայ-
է: Մենք տեսանք, որ զանազան տեսակներ կան—պա-
տի, ծոցի հայելիներ:

Չեով նոյնպէս զանազան են լինում: Ահա ևս կը
նկարեմ նոցա ձևերը՝ քառանկիւնի երկարացած, ձռւա-
ճե, բոլորակ և այլն:

Մասեր—ապակի (ապակէ տախտակ), շրջանակ: Հայ-
ելու ապակին ողորկ է (շօշափել ձեռքի ափով), անթա-
փանցիկ է (հայելու միջից զրոխ բան տեսնելը՝ անհնարին-
է, իսկ հասարակ ապակու միջից կարելի է տեսնել:) Հայելու յետել արծաթաթերթ կայ, բայց արծաթ չէ
(կլէկ և սնդիկ): Փոքր ինչ քերենք այդ թերթից, ա-
պակին բացվեցաւ—թափանցիկ: Որ վայր ձգենք, չի
զիմանայ, կը փշրվի: —Շրջանակը տախտակից... ուն-
գորշ կամ ոսկէզօծ:

Գործածութիւն. միջից նայելով՝ դրսի բան չենք
տեսնում, բայց մէջը նայում ենք և տեսնում ենք մեր
պատկերը: Առանց հայելու մենք մեր երեսը չենք կա-

լող տեսնելի եւ որպէս զի իմանանք, թէ արդեօք ժամփուր ենք կամ թէ աղտոս, որպէս զի մեր մազերը լաւ սանրենք—մենք նայում ենք հայելու մէջ: Ով որ անօգուտ կերպով շուտ շուտ հայելի է բռնում իւր առաջ—սնուտիսսէր է, փուչումուչ բաներ սիրով է: Դոքա շատ անգամ իրանց բռն գործը մոռանում են իրանց ու նայնասիրութեամբ:

V. Սենեակում ուրիշ ի՞նչ առարկաներ կան: Ամէնքը միասին—կահ կարստիք: Բացի հայելուց ուրիշ ի՞նչ առարկաներ կան քառանկիւնի (զբատախակ, դուռ, պատուհան և այլն),

Տախտակ անունը զանազան առարկաներին ենք յարմարեցնում—ապակէտախտակ, քարէտախտակ, զրատախտակ:

Ծառը ողորկ չէ, անդած տախտակը ողորկ է, արձանի մարմարը, տիսէն, բաժակը—ողորկ են:

Հայելու ապակին—անթափանց, պատուհանի ապակին—թափանցիկ:

Փշրվող առարկաներ... Շրջանակ ունեցող առարկաներ...

Երբ որ նայես հայելու մէջ, ումի ևս տեսնում: «Ինձ»: Ո՞չ, իսկապէս դուք տեսնում էք ոչ թէ ձեզ, այլ ձեր պատկերը: Իսկ ևս տեսնում եմ ձեզ:

V. Հայելին սենեակի առարկայ է, կահ կարստի է: Մեզ յայտնի են պատի և ծոցի հայելիներ: Հայելին կարող է լինել քառանկիւնի - երկար, ձուածկ և այլն: Հայելին քաղկացած է ապակէ տախտակից և շըջանափշրուն է: Նորա ապակին) ողորկ, անթափանց, Հայելու մէջ տեսնում ենք մեր պատկերը.

ԵՐԵՒԱՆ ՀԱՅԵԼՈՒ ԱՌԱՋ.

Մի օր գաղթականի տղէն, վեց տարեկան Պողոսը, իւր փայտէ ձիու վրա նստած, բարձրացաւ պատշտամբը,

մտաւ աղայի սենեակը: Այս տեղ ոչ ոք չէր երկում, բայց պատին կախ տուած կար մի մեծ հայելի: Նորա մէջ Պօղոսը տեսաւ մի երեխայ, որ նորան զարմացած նայում էր: Հայելու միջի կամբաթուշ և սեաչեայ երեխան շատ գեղեցիկ էր: Պօղոսը հիացած՝ ժարեան էր երեխան էլ ժպտաց: Ժապտաը Պօղոսին ուրախացրեց, նա ձեռքով նշան արեց երեխին և ասաց, «Արի, կուզես քեւ ձեռւ վրա նստացնեմ»: Երեխէն էլ ձեռքով նշան արեց: Պօղոսը գլուխը շարժելով ասաց, «Չէ, եկ զու ինձ մօտ, ես չեմ գայ»: Երեխէն էլ զլուխը շարժեց: Տիրեց Պօղոսը և թթու կերպարանք շինեց: Երեխէն էլ նոյնպէս թթուեց: Հիմի Պօղոսը սպառնաց բռունցքով, Պօղոսը նեղացաւ և երեխայի գէմ գեղու հանեց: Երեխէն էլ լեզու հանեց: Այս անգամ Պօղոսը չարայաւ և սկսեց իւր ձեռվ ծեծել անպիտան երեխին: Բայց աւաղ, հայելին հազար կտոր եղաւ:—Հիմի աղէն ի՞նչ վայ պէտք է բերէնգաղթական ծառայի գլխին:

Պ Ա Տ Կ Ե Բ.

Այս իմ ձեռքն է: Նայեցէք այս կողմը. ձեռքի վրա ի՞նչ կայ առջեւում: Էղոնք մատներ են: Ո՞ր տեղ են գանգում մատները: Մատն ե ը ը ձ ե ո ք ի վ ը տ ե ն: Ցոյց տուէք ձեր աջ ձեռքի մատները: Զախ ձեռքի մատները: Համարեցէք այնի մատները: (Ուսուցիչը բարձր բռնած ձեռքը՝ ինքն էլ նոցա հետ համարում է): Քանի մատ եղաւ: Մի անգամ էլ համարեցէք: Ասացէք. Աղ ձ ե ո ք ի վ ը ա հ ի ն գ մ ա տ ո ւ ն ի մ: Հիմի համարեցէք ձախ ձեռքի մատները: Ասացէք. Զախ ձ ե ո ք ի վ ը ա հ ի ն գ մ ա տ ո ւ ն ի մ:

Տեսէք, այս մատներս ի՞նչպէս տրտինգ են անում: Դէ, դուք էլ փորձեցէք խաղացնել ձեր աջ ձեռքի մատները: Ձեր ձախ ձեռքի մատները: Ձեր երկու ձեռքի մատները: Բայց մատները ուրիշ նարներ և ձարպիկոթիւններ էլ գիտեն բանեցնել: Ահա տեսէք:

(Ուսուցիչը մատերը իրարից հեռացնում փոռում է և գարւծեալ իրար մօտեցնում է): Զեր մատներն էլ կարժղ են այս անել: Դէ, հանգիստ կացէք, Փռեցէք մատերը, իրար մօտեցրէք: Դրանք դեռ ուրիշ խաղեր էլ գիտեն: (Ուսուցիչը մի բռունցք է շինում և իսկոյն մատերը կրկին բաց է անում: Դուք էլ այսպէս, բռնցքը, — մատերը ձիգ:—

Մատերը մի մի անուն էլ ունին: Գիտէք, նոքա
ինչպէս են կոչվում: Նայեցէք ինձ: Այս կարճ հաստիկը
ինչպէս է կոչվում:—Ասացէք. Սա բութ մատն է:
Նշանով ցոյց տուէք լուան կողմը: Պատուհանի կողմը:
Գրասախտակի կողմը: Ո՞ր մատն էք ձգում տեղից, երբ
որ մի բան մատնացոյց էք անում: Դա ուրեմն ինչպէս է
կոչվում: Ասացէք. Սա ցուցամատն է: Այս մա-
տը մէջ տեղն է կարգված: Ուրեմն ինչ է անունը:
Ասացէք. Սա միջի մատն է: Այս մատին մա-
տանի են հագցնում: Ուստի կոչվում է Մատն ե-
մատ: Բայց ինչպէս է կոչվում վերջինը: Ասացէք.
Սա ճկոյտն է: Մտքներումդ պահեցիք: Այս մա-
տը ինչպէս է կոչվում:—Խոկ սա:—Սա և այլն: Նոցա-
նից որն է ամենափոքրը, ամենամեծը. ամենահաստը:
Լաւ նայեցէք տղերանց ցուցամատն ու մատնեմատը
և աղջկերանց մի և նոյն մատները. ինչ տարբերու-
թիւն կտաք: (Տղերանց ցուցամատը կարճ է մատնե-
մատից, աղջկերանցը միմեանց հաւասար էն).

Մասները պատմութիւն էլ ունին. լսեցէք, Ճեզ պատմեմ:

Ճկոյթն ասաց «Քաղցած եմ». մատնեմատը՝ «Ի՞նչ ուտինք». միջինը՝ «Ինչ որ Աստուած տայ, էն կուտենք», ցուցամատը՝ «բա որ ոչինչ չտայ»; Էս տեղ բութը վրա տուեց և գոյեց, «Կերթանք, կը գոլանանք, կուտենք»; Այս որ լսեցին միւսները՝ զայրացան, նորան ծեծեցին, ծեծեցին, այնքան ծեծեցին, մինչև որ նա ընկերների շարքից թշտւ, յած գնաց:

ԳՐԱՎԱԾԱԿ ԵՒ ՔԱՐԵՏԱԿԱԾ.

Նմանութիւնները. Քարեատախտակը Ի՞նչ տեսակ
պիտոյք է: Դպրոցական պիտոյք է: Գրատախտակը:
Նա էլ դպրոցական պիտոյք է: Այդ երկու խօսքը մի
խօսքով ձևացրեք: Ի՞նչ տեսակ պիտոյքներ են քարե-
տախտակն ու գրատախտակը: Քարեատախտակը: Պարեա-
տախտակն ու գրատախտակը: Պարեատախտակը: Պարեա-
տախտակն ու գրատախտակը:

ի՞նչ ձեւ ունի քարետախտակը։ Նա երկայնաձև
քառանկիւնի է։ Գրատախտակը։—Ասա ուրեմն երկու-
սի համար էլ մի և նոյնը։ Ասացէք. Քարետախ-
տակն ու գրատախտակը երկայնաձև
քառանկիւնի են։ Կամ՞ երկու տախտակներն էլ
երկայնաձև քառանկիւնի են։

ի՞նչ զոյն ունի քարետախտակը: Ահ զոյն: (Դաս-
սի ժամանակ պատասխանը միշտ լրիւ պէտք է ստա-
նալ): Գրատախտակը: (Հարցմունքն էլ լրիւ պէտք է
տալ): Ռւբենին ի՞նչ ասենք երկուսի համար էլ: Ասա-
ցէք. Եթէ կու տա խտակն էլ և հ զոյն ու-
նին: Էլ ի՞նչ ենք տեսնում երկուսի մէջ նոյնու-
թեամբ: Ասացէք. Եթէ կու տա խտակն էլ կար-
միր գծեր ունին:

Ամփոփել մինախաղասովթեամբ, Եթէ կուտա լսա-
լսակն էլ ունին սկզբան կար մի բ

Քարետախտակի շրջանակը ովկէ շինել։ Հիւսնը:
Գրատախտակն ովկէ շինել։—Ռւրեմն ովլ արհեստառ-
բրի գործ է երկուսն էլ։ Եթիու տախտակի շին

*) Որպէս զի ամփոփումները, կը կնութիւնները, բովանդակութեան միացումները լաւ յաջողգին, կանխաւ պէտք է բարկացուցիչ մասերը զբատախակի վրա մի առ մի գրով նշանակվէին: Ուրեմն պէտք է գրվէին «սկ ոռյն», «կարմիր գծեր», որպէս զի... և այլն:

Նողը հիւսն է: Ի՞նչ բանի էք գործածում ձեր քարետախտակը: Գրելու, հաշուելու և նկարելու: Իսկ զրատախտակը:—Ասացէք. Երկու տախտակն էլ գործ ենք ածում գրելու, հաշուելու և նկարելու համար:

Ձեր տախտակը միշտ ի՞նչպէս պէտք է պահէք, որպէս զի սիրուն լինի և վերան կարողանաք գեղեցիկ գրել: Մաքուր: Գրատախտակն էլ միշտ ի՞նչպէս պէտք է լինի:—Երկու տախտակի համար էլ մի հնոյնն ասա: Ասացէք. Քարետախտակի լին ու գրատախտակը միշտ պէտք է մաքուր լին են:

Ի՞նչով ես մաքուր քարետախտակի:—Ի՞նչով եմ մաքուր զրատախտակը*:—Ասացէք. Երկու տախտակն էլ մաքուր ու մաքուր ենք սպունդով:

Տարբերութիւնները. Համեմատեցէք տախտակները մեծութեան կողմից: Ո՞րն աւելի մեծ է: Ասացէք. Դրատախտակը քարետախտակի մեջ է: Ասամեծ է: Ուրեմն ի՞նչ պիտի ասես քարետախտակի համար:—Սա ի՞նչով պէտք է փոքր լինի միւսից:—

Ի՞նչ մասերից է կազմված քարետախտակը: Տախտակից և շրջանակից: Իսկ զրատախտակը: Միայն տախտակից: Այդ երկու նախադասութիւնները միացնենք: Ասացէք. Քարետախտակը կազմակերպ է տախտակից և շրջանակից: Իսկ գրատախտակը: (Այս պարբերութեան մէջ թերեւս աւելի լաւ է ասել «տախտակափայտից», քան «տախտակից»):

Գրատախտակը հաստատված է այս նեցուկի վրա (ցոյց է տալիս): Իսկ ձեր քարետախտակը նոյնպէս նեցնելունի: Ոչ. նա արձակ դրած է սեղանի վրա: Ասացէք. Քարետախտակը գործ է լին ու մաքուր լին ու մաքուր:

*) Դարձեալ յիշեցնում ենք. զրատախտակի վրա գրել ապունդ:

ուեղանի վրա, գրատախտակը հաստատված է մի մի նեցուկին:

Ի՞նչից է շինած քարետախտակը: Թերթաքարից (հերձաքարից) և փայտից: Իսկ զրատախտակը: Միայն փայտից: Երկուսը մի նախադասութեամբ կապեցէք: Ասացէք. Քարետախտակը շին ած է և բարձաքարից և փայտից, իսկ գրատախտակը՝ մի այլ միայն փայտից: Ասացէք. Քարետախտակի լին ած է և բարձաքարից և փայտից:


Ի՞նչով ես զրում քարետախտակիդ վրա:—Ի՞նչով է զրում ուսուցիչը զրատախտակի վրա:—Այդ երկու նախադասութիւնն ասա յաջորդաբար: Ասացէք. Աշակերտը գրատախտակը միայն կազմակերպ է գրատախտակը, ուսուցիչը և դիմումակի մասին: Ասացէք. Քարետախտակը կազմակերպ է գրատախտակը, ուսուցիչը և դիմումակի մասին:

Ի՞նչ կարող է պատահել եթէ քարետախտակը գետնին ընկնի: Կը կոտրվի, կը փշվի: Գրատախտակն էլ: Ոչ, նա հեշտ չի ջարդվում: Ուրեմն ի՞նչ կարող էք ասել երկուսի գլուրաբեկութեան մասին: Ասացէք. Քարետախտակը կազմակերպ է գրատախտակը, ուսուցիչը և դիմումակի մասին:

Զ Ա Կ Պ Ա Կ.

Տղէրք, ձեզ ով կանչեց, որ ամէնքդ միատեղ դասառուն մտաք: «Զանգակի ձայնը լսեցինք և տուն մտանք»: Միթէ զանգակը լեզու ունի, որ ձեզ կանչեց: Այսօր մէնք պէտք է սովորնք, թէ այդ զարմանակի լեզուն ի՞նչպէս է խօսում մեզ հետ:

Ահա մեր առաջ մի զանգակ, սա այժմ խօսում է: Ոչ, իսկ այժմ. Այն, ձայն է հանում: Ի՞նչպէս է պատահում, որ սա մի անգամ ձայն է հանում, իսկ միւս անգամ ոչ. Դուք ասում էք, թէ պէտք է զիացնել, զարնել: Ահա մի փետուր արդանով զանգակը զար-



կում եմ. ձայն հանեց զանգակը. Ո՞չ, պէտք է պիսդ բանով զարնել. Անա մի գիրք, սորան զարնում եմ մատիտով փայտի կտորով, երկաթով. ձայն հանեց. Խուլ ձայն հանեց, բայց լաւ ձայն չէր, զանգակի զիլ ձայն չէր:

Դուք տեսնում եք, որ պէտք է լաւ նայենք, թէ թնջպէս է կազմված զանգակը, որ ձայն է կարողանում հանել. Սա ինչից է շինած: Փայտից է, թղթից է... Նկատեցէք. Զանգակը հնչուն մարմնից է շինած, մնապից:

Հիմք տեսնենք զանգակի մասերը. Նորու կազմութիւնը Զանգակը երկու մասերից է բաղկացած. Նա ունի մի պղնձէ քան ժակ և մի երկաթէ լեզուակ: Թանի որ իմացանք զանգակի կազմութիւնը հրմի աւելի ճիշտ: բառերով ասացէք ինձ, թէ թնջպէս է պատճենում, որ զանգակը մի արտամ ձայն է հանում, ինկ միւս անգամ ոչ: Երբ ոգ երկաթէ լեզուակ ու ակով պարնենք (օդի մեջ բռնած) պղնձէ քան ժակ ըստ դանդաղ կը հն չէ:

Ի՞նչ էք կարծում, զանգակը միայն ուսումնաբաններումն է գործածվում, միայն ազակերտներին ձայն տալու համար: Ո՞չ, նա բազմաթիւ գործածութիւն ունի: Մենք շատ պնդամ լսում ենք զանազան զանգակների ձայնը, որոնցից իւրաքանչիւրը զատքան է նշանակում: Անա—եկեղեցու զանգակ, ժամացուցի զանգակ, տան դռան զանգակ, քարշակի (տրամվայի) զանգակ, հրդեհաշէների զանգակ: Եւ դոքան խօսում են զանազան լեզու: Մէկն ասում է—դաստիարակութիւնը մտէք, միւսը՝ թէ ժամ եկէք, մնացածները՝ թէ դուռը քան արէք, ճանապարհութիւնը այլ եալին:

Երբ որ մի կարծք մարմին ճօճիւրով դիպչում է միւս հնչիւն մարմին և այդպէս ձայն ենք լսում, մենք, հասկանում ենք, թէ այդ ձայնը ինչ պէտք է

նշանակէ. այն ուրեմն խօսում է մեզ հետ, բան է հանկացնում մեզ:

Տան-տին-տօնմ, տան-տին-տօնմ:

Տէրտէրին, տէրտէրին

Խունկ ու մոմ, խունկ ու մոմ:

Շաբարը երեխին:

Ը Ա Խ Ա Ը

(«Լուսաբերի» պատկերն ու ոտանաւորը):

Դուք երբ և թցէ տիսիլ էք շղթայակապ կալանաւորին (չնշիլով ձեռք ու ոտք կազած առւտցաղին): Ի՞նչ էք կարծում, նա գոհ կը լինի իւր վիճակից, շնորհակալ կը լինի իւր կալանաւորզից: — Նա անդագար առանելապէս ինչի՞ մասին մտածելիս կը լինի: Ազատութիւն ստանալ: Ազատութիւն որ ստանայ, նա կը խողացպի: Թերեւս ուզենայ վրէժ առնել, որ ինքը զրկվել էք ազատութիւնից:

Ես գիտեմ մի շղթայակապ արարած, որ այլապէս է մտածում և այլ հոգեր ունի: Անա տեսեք այս պատկերը («լուսաբերի» շնուր): Ի՞նչ է նկարած այս տեղը: Մի սիւն, ինկ սիւնի առաջ շղթայակապ մի շուն, վազաստ դէմքով նստած, կարծես թէ պատրաստ է վազելու: և իւր ատամների զօրութիւնը ցոյց տալու:

Դժուար թէ մենք կարողանանք ինքներս շան մտքերը հասկանալ: բայց անա թէ ուսանաւորից ի՞նչ մնք իմանում այդ մասին:

Հափ հափ, հափ-հափ.

Ահա այսպէս հաշում եմ ես

Ու առնն այսպէս պահում եմ ես:

Կրկնիր, ինչ որ շնուն ասաց: Ամէնքդ կը կնեցէք:

Նա ասում է «ահա այս պէս», այսինքն ինչպէս է պահում տունը: Հաշելով, զգաստութեամբ հակելով: Սա էլ իւր ազատութեան մասին է մտածում, սա էլ դժոխութիւն է յայտնում իրան շղթայողին, իւր տիրոջ դէմ: Ընդհակառակ, սա ոչ թէ իւր անձի հոգսով է զբաղված, այլ միայն այն է մտածում, որ իւր տիրոջ տունը պահպանէ: Սա կարծես իւր գերութեան մասին բնաւ չի մտածում, կարծես հաշտվել է իւր վիճակի հետ, չնայելով, որ նոյն իսկ մի շնարուն էլ չունի, որ մէջը պատսպառվի, Ուրեմն շղթայի ծանրութիւնից աշատվել չի ուզենայ: Անշուշտ կուզենար, բայց դարձեալ ոչ թէ իւր զուարծութեան համար, այլ իւր տիրոջը աւելի լաւ ծառայելու համար: Նա կուզենար աշատ շրջել, որպէս զի հնար ունենայ աւելի լաւագոյն կերպով հակելու: Պատկերից էլ յայտնի երեսում է, որ նա կապանքներից զերծանել է ուզում, որպէս զի հարկ եղած ժամանակ՝ պատրաստ լինի յարձակվելու:

Միթէ նա անխոտիր ամէնի՞ վրա պիտի յարձակվի, ում որ պատահի: Ահա նա այդ մասին ինչուն է դատում.

Թէ գայ մեղ մօտ մի հին ծանօթ,
Մօտն եմ վազում, պոչս շարժում:

Կրկնիր: Կրկնեցէք: Նորա լեզուով ինչ պիտի նշանակէ պոչ շարժելը: Այսինքն՝ թէ էլ թշնամարար չեմ հաշի, այլ իմ ուրախութիւնը կը յայտնեմ նորա բարի գալստեան համար: Այդպիսի ընդունելութիւն է պատրաստում առն բարեկամների համար: Իսկ գիտէք, թէ ինչեր է սպասնում զող աւազակներին: Ահա նորա խօսքերը.

Բայց թէ մի զող, չար կամեցող,
Ուզի թագուն մտնի մեր տուն,
Հափ-հափ, հափ-հափ:

Կրկնիր: Կրկնեցէք: Թագուն մանողին նա ինչ

պէտք է անէ: Հափ-հափ, այսինքն վրան կը հաչէ: Միայն հաչէլ Այս շունը քաղաքավարի է. էլ ուրիշ բան չի սպասնում, սակայն նրա բոլոր վարմունքից յայտնի երես է, որ տեղն եկած ժամանակ իւր ատամների սրութիւնն էլ չի զլանայ ցոյց տալ յանդուզն թշնամուն: Ուստի նա չի մոռանում իւր հաւատարմութեան սեպուհ կոչումը և միշտ կրկնում է այսպէս.

Ահա այսպէս հաշում եմ ես
Ու տունն այսպէս պահում եմ ես:

Կրկնիր: Կրկնեցէք խմբով: —Մի անգամ էլ ամբողջը կասեմ, ինչ որ մաս մաս սովորեցիք: Ո՞վ կարող է բոլորը կրկնել լաւ արտասանութեամբ: Հիմի խմբով:

Ա Կ Ա Զ.

Մեր անցեալ զրուանքին զուք զանազան ծաղիկներ քաղեցիք, ևս էլ ջրվէժի մաքուր աւազը հաւաքեցիք: Մենք այսօր այս աւազի մասին պիտի խօսենք:

Եթէ լաւ նայէք, գուք կը նկատէք, որ սա սովորական հող չէ, այստեղ պարզ որոշվում են հատ հատ փշուրներ: Ապա ուրեմն աւազը բաղկացած է բազմաթիւ զատ զատ հատիկներից կամ աւազ աւազ ի ց:

Մեր աւազը գեղնադոյն է, սակայն բացի որոշ զոյնից՝ նորա վրա նկատվում է նաև մի ուրիշ հանգամանք: Աւազահատերը փայլում են: Աւազ կը փայլում է ապակու պէս:

Աւազը հողի պէս կակուղ չէ, ահա դանակը չի զուռում, չի կարում: Եթէ աւազը թափենք ապակու վրայ և ձեռքի ափով վրէն քամսենք, նա կը խազիսպէ, կը չանկուտէ: Նա ուր եմն կարծը է:

Այս մի աման աւազի վրա ջուր եմ ածում: Սակայն հազիւթէ դէ զուք կարողանաք այս շաղախից նա-

զուք կամ գաթա ձևացնել, ինչպէս որ կաւիցն էք շինում։ Ձեր ճարտարած նազնեքը շատ շուտ կը չորանայ և կը քանդի, գը քայքայվի։ Անապն ուրեմն կաւի պէս փափուկի, կը չունի ու համար գողի խմոր։ Հի դա ու ու ու մաս կը չունի և մաս գողի խմոր։ Հի դա ու ու ու մաս կը չունի և մաս գողի խմոր։

Անա չոր արագի վրա էլ ջուր եմ ածում։ Չորացած կաւի վրա էլ։ Աւագը աւելի քիչ ջուր է ծծում, քան կաւը խոշոր։ Աւագի միջով ջուրն այնպէս է անցնում, կարծես թէ այն մի մաղ լիներ։

Աւագն աւելի նօսը իսկու է, ուստի քամին նորան հեշտութեամբ տեղից շարժում է։ Աւագը շատ շուտ է չուրանում։ Ամփոփեցէք։

ԱՊԱԿԻ

I. Մենք պէտք է իմանանք, թէ ան ինչ բան է, թնչ առարկայ է (մի կտոր ապակի ցոյց տալով)։ Հերթիք չէ անունն իմանալ, պէտք է դիտենանք, թէ ինքն ինչ է։ Դուք սորան տառւմ էք շշուշայ, հայերէն կասենք ապակի։

II. (Հարցմունքներով իմանալ) թէ աշակերտներն ինչ գաղափար ունին ապակու մասին։ Ապակէ առարկաներ, ապակու գործածութիւն, դոյն, թէրեն յատկութիւնները և այլն։

III. Այս, մենք շատ տեսակ առարկաներ ունինք ապակուց—պատուհանի ապակի, հայերի, շշեր, բաժակներ, դեղի անօթներ, լամպարի ապակի, ուլունքներ և այլն։

Սա ապակի է։ Դակ մն (տախտակի կտոր, գրք կաթ, ջուր և այլն)։ Ինչնի մենք իմանում, որ ան ապակի է, և ոչ տախտակ, երկաթ կամ ջուր դրա յատ-

կութիւններով, իրա նշաններով։ Տեսնենք, թէ ապակին ինչ յատկութիւններ ունի։ Ահա իմ առջև քոնում, եմ ապակի, որ նորա միջով ձեզ տեսնեմ։ Ա արգարե ձեզ տեսնում եմ։ Բայց երբ որ գիրք եմ քոնում իմ առջև, էլ չեմ տեսնում ձեզ։ Ինչտես որովհետեւ ապակու միջով լոյսը անցնում է, իսկ գըքի միջով ոչ։ Այս նշանը տեսնելով մենք այսում ենք, թէ ապակին թափանց ի կ է։ Այս նորա առաջն յագկութիւնն է։

Շունը, մուկը կարող է կրծել հացը, գայլը։ Մենք էլ ծամում ենք հացը, կարծող ենք ապակին կը ծել, ծամել։ Ոչ ուրեմն ապակին մի ուրիշ յատկութիւնն էլ է ունեցել։ Նա, կ ա ք. ծ. թ է։

Այս ապակու կոտրի վայր ևմ ձգում հաւելի։ Լաւ է մի ճեղքված ապակի վայր ձգել։ Ապակին ուրեմն փշրվող, դիւրաք եկ է։ Այս բաժակին մատով բախում եմ, թնչ էք վառում—Ուրեմն և նշ ու ու մ արք մին է։ Դեղագործը ապակէ անօթների մէջ ամէն տեսակ կծու, ուտիչ այրոր խարանող հեղուկներ է, ածում, ապակին չի մաշվում, չի ֆանգոտվում։ Հենալում ջրի մէջ, Ուրեմն կասող, գայլքայող ներգործութիւններին դիմանում է։ Այս ապակին, այս հայելին, այս անօթը խորտ ու բորտ չէ։ ուրեմն ող որ կ է։

IV. Բաց արեք պատուհանները, մենք լոյս ենք ստանում։ Փակեցէք պատուհանները, գարծեալ լոյս ու ստիճնք։ Խակ այժմ ինցը վարագողները, կամ խալի ստիճնք ծածկենք պատուհանները։ Մթնեց։ Հապակին չափանցիկ չէ։ Ամփոփեցէք։

Այս հայելին ինչնոց է շինած։ Ապակուց։ Սա Էլ թափանցիկ է։ Այս, եթէ եղեկից վարագողի պէս բան թափանցիկ է։ Այս, եթէ սնդկալոծ չունենայ, որով լոյսը չունենայ, գուած, եթէ սնդկալոծ չունենայ, որով լոյսը արգելվում է և չի թափանցում։ Բայց մենք առաջուայ, արգելվում է և չի թափանցում։ Այս մենք առաջուայ, որ հայելին՝ ուրեմն և ապակին մի գասերից գիտենք, որ հայելին՝ ուրեմն և ապակին մի

յատկութիւն էլ ունի. Նորա մէջ մեր պատկերը, մեր դէմքն է երեռւմ: Զրի մէջ, մաքրած ինքնաեռի մէջ: առ հասարակ ամենայն փայլուն առարկաների մէջ միշտ մեր պատկերն է երեռւմ: Ապա եթէ սենեակը մթնեցնե՞նք. ապակին գարձեալ թափանցիկ կը լինի, դարձեալ մեր պատկերը ցոյց կու տայ: Ուրեմն լոյսը և թափանցում է ապակու միջով, և ապակուց դառնում է գէպի մեզ: Ապակին լոյսը ան դը ա դ ա ր ձ ն ո ւ մ է, ցոլացնում է:

Ասացինք, թէ ապակին դիմացկուն է: Զերծութեան էլ դիմանում է: Այս, մասամբ, ահա ապակին, որ ամբողջ գիշերը վառած լամբարի վրա է լինում և չի հալչում, ահա փորձանակը ձեր առաջ տաքացնում եմ կանթեղի վրա. ահա այս բաժակը, որով դուք ամենայն օր տաքստաք թէյ էք խմում, բայց եթէ ապակին ձգենք թէժ կրակի մէջ, թոնրի կամ կրակարանի մէջ—կը հալվի: Եթէ այսպիսի փորձ ուղենաք անել ձեր տանը, զգուշութեամբ վարվեցէք, որովհետեւ ճաքձկող փշուրները կարող են երեռը չանկսել:

Դուք ինձ ասացիք, թէ այս ապակու կտորը սպիտակ է (պատուհանի ապակու կտոր): Հապա որա դոյնն ի՞նչ է (լուսամփոփի սպիտակ կտոր), կամ սրանը (խոհանոցական անօթների կիտուածը—էմայլը): Հապա որա դոյնն ի՞նչ է (հայելի): Ուրեմն մեծ մասով մեր ապակիները ան դ ո յ ն ե ն, ինչպէս որ օդը, ջուրը դոյն չունին, ապա կան նաև դ ո ւ ն ա ւ ո ր ա պ ա լ ի ն ե ր, ոմանք էլ խիստ փ ա յ լ ո ւ ն —պապղուն են: Կրկնել:

Մենք ապակին գործ ենք ածում լոյս ստանալու, մեր պատկերը մէջը տեսնելու, հեղուկների մէջը պահելու, զարդարանքների համար (ջահ, ուլունք և այլն):

V. Ապակին շատ օգտաւէտ առարկայ է: Նա թափանցիկ, լոյս անդրադարձնող, դիւրաբեկ, հնչուն, բաւական դիմացկուն, անդոյն, դունաւոր և փայլուն առարկայ է: Կրկնել:

Մի մարդ մտաւ անծանօթ տունը, որ ունէր ապակէ դոներ: Ապակիները այնչափ թափանցիկ էին, որ նոցամիջով պարզ երեռւմ էին ներսի բոլոր առարկաները, կարծես թէ մէջ տեղը բնաւ ապակի անդամ չկար: Եկողը նորշմարելով ապակիները՝ կարծեց թէ դուռը բաց է: առաջ դուաց—և փշրեց ապակին: Երբ որ ապակու կտորտանքները զետնին շատացիւն հանեցին, նոր հասկացաւ հկողը իւր առարքը, և սկսեց ներողութիւն ինգրել տանտիրոջից: Տանտիրը պատասխանեց: «Ես եմ մեղաւորը, որ ձեզ չզգուշացրի: այս ապակին թափանցիկ է այնպէս, ինչպէս օդը, ուստի և շատ հեշտ է այն չնկատել:

Կ Ի Բ.

Զեր մայրերը երբ որ անոյշ (մուրաբա) են եփում, զիտէր, որ նոքա երբեմն կիր են խառնում մէջը, որպէս զի անոյշը պնդանայ, ինչպէս որ ձեր մայրերն են ասում (ընկոյզի, բաղրիշանի, դզմի անոյշ): Փորձենք, տեսնենք, թէ ինչ բան է կիրը:

Ահա մի կտոր քար. սա կիր է, կրաքար է: Սա խմորի պէս չէ, ոպ ի ն դ հաստատուն մարմին է, մոխրագոյն ս պ ի տ ա կ է: Սա այժմ փոքր ինչ խոնաւ է (օդի խոնաւութեան պատճառով), ուստի ձեռքիս մէջ առնելով մատներիս չի վնասում: Բայց եթէ թը ծոցից (քարիխանի հնոցից) նոր բերած լինի և բնաւ խոնաւ չինսի, նա կը կծէ, կը դաղէ մատները, կաշին կը պլոկէ: (Աւելի լաւ, եթէ իսկութեամբ կարելի է ցոյց տալ անշէջ կիրը: «Ահա մի կտոր այդպիսի կրից, տեսէք իմ մատները պլոկում է, մի վախենաք, փոքր ինչ դուք էլ շօշափեցէք»): Երբ թրծոցից մեզ կիր են բերում, օդի խոնաւութիւնից նա իր մէջ քիչ ջուր է ծծում, և այսպիսի քար ենք ստանում: Բայց և այնպէս սա դեռ բոլորովին թաց չէ:

Այս ափսէի մէջ կիսով չափ կրաքար է: Վերանածում եմ ցուրտ ջուր: Ի՞նչ էք տեսնում: Դուք նկա-

տում էք, որ ջուրն էլ, կիրն էլ տաքանում են, ջուրը խշացում և եռ է գալիս, գոլորշիրերի ամպ է բարձրանում ափսէից, իրու թէ կրակած ածուխի վրա ջուր եմ թափել: Այս բաւական չէ, մենք ուրիշ բան էլ տեսնում ենք: Նայեցէք թէ նախկին կիսատ ափսէն ինչպէս լցում է, ծարաւ կիրը ինչպէս անյագ ջուր է ծծում. կրի տարածոցը սաստիկ մեծանում է, ուռչում է, և ստանում ենք չոր և սպիտակ փոշի: Անուշի մէջ գործածած կիրը—ահա այս սպիտակ փոշին է, և ոչ թէ սկզբնական քարը:

Կրի վրա ջուր ածելով, նոյն է թէ կրակը հանգցրեցի: Մեր կալատողներին (որմնաղիրներին) շատ լաւ յայտնի է այս հանգանանքը. նորա այդպէս պատրաստում են ծեփելու շաղախ և միշտ զգուշութեամբ են վարդում չհանգըրած կամ անշէջ կրի հետ:

(Կրի շիջուցումը ժամանակ է պահանջում, ուստի մինչեւ որ այդ փոփոխութիւնը ափսէի մէջ լրիւ կատարի՞՝ ուսուցիչը կարող է միջանկեալ խօսել կաւիճի մասին: «Մենք մեր դաստիանի մէջ անդադար զործ ենք ածում այս կաւիճը: Սա էլ կիր է, խիստ սպիտակ է և մէջը ուրիշ բաղադրութիւններ է խառնուած: Եթէ կաւիճը կրակի մէջ ձգենք և սաոցնելուց յետոյ ձեռքով բանենք՝ շատով կը քայլայիի, կը փշրիի: Ահա փորձանակի (նեղ երկայն աղակէ անօթի) մէջ կաւիճ եմ ձգում և (ալկոհի) կանթեղի վրա տաքացնում. կը թողնեմ, որ սառչե»):

Ուրեմն երկու տեսակ կիր կայ, առաջինը կոչվում է անշէջ, չհանգըրած կիր, երկրորդը՝ շիջուցի և լ, հանգըրած կիր: Եւ մենք տեսանք, որ կիրը հանգչում է ջրով, ինչպէս կրակը: Ահա անշէջ և շիջուցեալ կրի ամփոփ պատկրը.

Անշէջ կիրը
պինդ, հաստատուն մար-
մին է,
սպիտակ քար է,
այրում դաղում է:

Շիջուցեալ կիրը
ջրից տաքանում է, ուռ-
չում փփվում է, տարա-
ծոցով մեծանում է, սպի-
տակ փոշի է դառնում:

Մէկ մանուկ վեր առաջ անշէջ կրաքարի երկու կտոր և պահեց ծոցի մէջ: Նա տեսել էր, թէ ինչպէս որմաշէնը այսպիսի կրից սպիտակ և փափուկ խմոր է շինում, ինքն էլ ցանկացաւ նոյնպիսի խմորից խաղալիք ձի ճարտարել: Այդ միջոցին ձի հեծած զախու էր նորա ընկերակիցը ձիանին ջուր խմեցնելու: Մեր չարաճնի մանուկը խկոյն վեր ելաւ ձիաներից մէկի վրա և քչեց նորան գետի խորքելը: Ափից շատ հեռու, ձին պատահմամբ ծովեցաւ, և մանուկն ընկաւ ջուրը: Մակայն նա գիտէր լող տալ, իսկոյն ուղղից ցաւ և սկսեց ծփծփալ ջրի երեսին: Բայց յանկարծ գոռաց: «Օքնեցէք, օգնեցէք, այրվում եմ»: Անցնորդները, նկատելով, որ նա քաջապէս լող է տալիս, կատակ համարեցին նորա աղմուկը, իրեր թէ մարդկանց յիմարացնելու համար զուարձանում է. ջուրն ինչպէս կարող է այրել՝ ասում էին նորա Մանուկը երկու անգամ սուզիցաւ ջրի մէջ, յետոյ երկու անգամ էլ ջրի երեսին երեսցաւ, վերջապէս մի անգամ էլ բարձրացաւ, բայց անշէջացած Անշէջ կիրը մանուկի կազին դաղողել, այրել էր:

Ճ Վ Ճ Պ Ի Կ.

I. Ահա մի ճնճղուկ: Դուք շատ անզամ տեսել էք այս թոչունը:

II. Աշակերտները պատմում են իրանց գիտեցածը ճնճղուկի մասին: Դորան կոչում ենք «ծիտ»: Երգն էլ գիտենք. «Ծիտը ծառին ծլվլում է»: Դա շատ պլզտիկ թոշուն է և այլն:

III. Ասում էք, թէ դա թոչուն է. ինչից գիտէք, ինչ նշաններից: Ամենայն թոչուն ինչ պէտք է ունենայ: Ամենայն թոչուն պէտք է ունենայ մարմնի վրա

փետուրներ, երկու թև, երկու ոտք, տուտ: Սա էլ ուշնի: Բայց մենք պէտք է իմանանք, թէ դա բոլոր թռչունների մէջ ինչով է որոշվում: Սկսենք մարմնի մասներից: Նախ գլուխի ը: Շատ անդամ հեղնելով առում ենք «ճնճղկի զլուխ», «ծտի խելք», այսինքն յիմար, բայց մենք կարող ենք ասել նաև «հաստագլսւխ», որտեհետև այդ մասը մարմնի համեմատութեամբ բաւական հասա է: Գլխի վրա աւենում ենք կտուցը, աչքերը: Կտուցը զլիի համեմատութեամբ կարձ է: Կտուցն ունի երկու մաս, վերին ծնօտ, ստորին ծնօտ: Կտցի բաց եղած ժամանակ տեսնում ենք լեզու, բայց ոչ ատամներ: Հապա ինչով է կտրառում ճնճղուկն իւր ուտեկլիքը: Ուրեմն կտուցը պէտք է լինի պինդ, կարծր, սուր: Ի՞նչ նիւթից է բաղկացած կտուցը: Եղջիւրից, ինչպէս որ մեր եղունգն է: Նորա ուրիշ որ մասը գարձեալ եղջերանման է:

Աչքերը զլիի կողքերիցն են: Այդպիսի աչքերով նա շատ լաւ է տեսնում փողոցում հատիկ, ծառի վրա կեռաս և տերեկի վրա ջորեակ (մայիսի բգէդ).

Յոյց տուր ճնճղկի ականջները: Ինչո՞ւ չենք տեսնում: Արտաքին խորան կամ ականջի խեցի չունի: Հապա ինչո՞ւ ականջի խորշերն էլ չենք տեսնում: Փետրի տակ ծածկված են: Բայց և այնպէս ճնճղուկը տմենայն շոինդ կամ շշուկ լաւ է լսում:

Ի բան. Այս ի՞նչ է: Մարմին, իսկապէս իրան: Իրանը շատ էլ նուրբ չէ, կոպիտ ռւած է, կամ աւելի լաւ է ասել մարմնով զիբուկ է: Իրանը ինչով է վերջանում: — Տտի վրա երկայն փետուրներ կան, բայց ոչ ամէնքը հաւասար երկայնութեամբ: Տուտը փոքր ի՞նչ դուրս է կարած, երկճիղ է:

Ո տք ե ր. ճնճղուկն ունի երկու կարձ առոտիկներ: Քանի՞ մատներ ունի իւրաքանչիւր տուրի վրա. նոցանից քանիսը ուղղած են զէպի առաջ, քանիսը՝ դէպի յետ: 3—1: Մատների ծայրին ի՞նչ կայ: Ճանկ,

ճիրան: Գետնի վրա ման դալ մեղ պէս չի կարողանում ճնճղուկը. հասրա ի՞նչ է անում: Ոստոսառում է: Եթէ այս ճնճղուկը կենդանի լինէր, այսպէս հանգիստ չէր նստի այստեղ: Ի՞նչ կանչը: Տեղից կը թռչէր: Ի՞նչով: — Քանի՞ թե ունի ճնճղուկը: Մէկ խօսքով ասա, նա ի՞նչ պէս է շարժվում գետնի վրա և ի՞նչպէս օդի մէջ: Եթր որ ճնճղուկը պատրաստվում է աեղից վեր թռչել, առաջ նա ի՞նչ է անում: Նախ նա իւր թերը բաց է անում: Յետո՞յ: Յետոյ նա թերը վեր ու վար թափ է տալիս, ապա թէ թռչում: Դուք կարմղ էք թռչել նորապէս: Ճնճղկի բոլոր գործողութիւնների նկարագրութիւնը կրկնեցէք:

Գ ո յ ն ը. Հիմի տեսնենք ճնճղիկի հագուստը: Ի՞նչ գոյն ունի: Գորշ մսիսրագոյն: Մէջքին ի՞նչ էք տեսնում: Սկ թերք: Ի՞նչ շերտ ես տեսնում նորա թերքի վրա: Սպիտակ: Այս երկու ճնճղուկների վիպերը համեմատեցէք: Մէկը սկ վիզ ունի: Սկ վիզ ունեցողը որձ է:

Զ ա յ ն ը. Նորա ձայնը ամբողջ օրը լավում է: Ի՞նչպէս է ձայն հանում: Ճիրպ, ճիրպ: Լաւ ձայն ունի:

Ս ն ո ւ ն դ. Նորա ուտում են հունգ, կեռաս, խաղող, ջորեակ, ճանճ, թթվուռ: Հէնց որ մի կալում ըսկեն կամնել, ծիտն իսկոյն այնակող լոյս կընկնի: Եթէ տանտիկինը կամ աղախինը հաւերին կուտ տայ, իսկոյն ով է ընկերանում սոցա: Հէնց որ կեռասն սկսի կալմրել ամենից առաջ ով կը շտապի ճաշակելու: Այսուհետև ճնճղուկն էլ ուրիշ բան չի շնուռմ, բայց եթէ օրնիրուն կեռասը քրքրում է կացում է: Բոլոր առածները կրկնիր:

Եթր որ ճնճղուկը հաւերի մէջ է խառնվում և նոցա բերանից կուտ է խուռմ, իսկոյն գալիս է աղախինը և քշում է նորան: Բայց միթէ նա երկամր կը դիմանայ, այդպէս հեռու կանգնելով: Հէնց որ աղա-

խինը շուռ գայ, ճնճղուկը դարձեալ գալիս է իւր սիրած վշշրանքները հաւաքելու Երբ որ կեռասի ծառի վրա նստած լինի, թէ սուլէք, թէ ծափ գրաք ձեռքերով, թխթիկացնէք, քար ձգէք, —նա էլի իրա բանին կը լինի, կը ծիծաղէ և հասած պատուղները կը ոչնչացնէ: Պատմիր բոլորը:

Ճնճղուկը թրթուռ և բզեզներ էլ է ուտում: Խսկ սոքա ինչ են ոչնչացնում: Տերեներ, Մատերն ինչ կերպարանք են առնում, երբ որ վերան թրթուռ ու բզեզը ջատանում է: Մերկ, տերևաթթվի: Այսպիսի ծառը էլ պատուղ չի տալիս: Ուրեմն թրթուռն ու բզեզը մեզ պատճառում են մասս: Այս պատճառով ճնճղուկին բոչ տեսակ թոշուն պէտք է կդշենք:

Բայց նոյն ճնճղուկները աւերում են նաև մեր արտերը, մեր պարտէզները, ոչնչացնում են ցորեն, գարի, հպած պատուղ: Ուրեմն նոքա մեզ մաս էլ են տալիս:

Թշնամին եր. Ճնճղուկը մեծ մասով - տշխոյժ և ուրախ է, բայց շատ անգամ մեծ վտանգի մէջ է ընկնում: Նա թշնամիներ էլ ունի կատուն, աղուէսը, գիշատիչ թոշունները: Երբ որ ճնճղուկը մի վտանգ է նշմարում, վախեցած ճլվում է և աղմուկ հանում: Նոյն խսկ մարդուց նորան վտանգ է համառում: Հարկաւերկը պղող տանիկ, որ խւր արտերը աւերակ դառնան: Ճնճղուկներից: Բայց մեզ չի վայելի, որ անգթն-թեամբ վարվենք այդ գուարթ: արարածների հետ:

IV. Էլ ուրիշ մանը թոշուններ գիտէք ճնճղուկների պէս: Ճնճղուկից մեծ թոշունների անունները ասացէք: —Ո՞ր թոշունները ճնճղուկի պէս կարճ կտուց ունին: Խսկ որոնց կտուցը նոցանից աւելի երկայն է: Ճնճղուկը եղջերանման ճիրան ունի: Խսկ կրվը, ձին: Կճղակի: Ամբակ: Ճնճղուկի աչքերը կողքերից են: Խսկ մարդունք: Մի թոշուն էլ կայ, որ մարդու պէս առջե-

ւից աչքեր ունի: Բուռ ճնճղուկի և գեղանիկի իրանները իրարից ի՞նչ զանազանութիւն ունին: Գիրուկնուրը: Ուրիշ թոշունների անունը տուր, որոնք նուրը իրան ունին: Ճնճղուկի տուիկները կարճ են: Ինչպէս են արագիլի ուները: Ճնճղուկը ոստուտում է, ուրիշ որ թոշունն է ոստուտում և որը՝ ոչ: Ճնճղուկը թերով է շարժվում: Խսկ ձնւկը: Լողակներով: Բոլոր ճնճղուկները աև՝ վիզ ունին: —Ճնճղուկը երգեցիկ թոշուն էր նա լոկ միայն ձայն է հանում, չի եղանակում, չի երգում: Նորանից աւելի սիրուն ձայն ունեցողները որմնք են:

V. Ճնճղուկը «ծիտ» էլ է կոչվում: Նա, մի փոքր թոշուն է: Նորա կտուցը կարճ է, եղջերանման է, երկու ծնօտ ունի: Նորա աչքերը պլիսի կողքերումնեն: Նորա ականջի խոռոչները ծածկված են փետուրով: Ճնճղուկը մարմնով գիրուկ է: Երկու կարճ տուիկ ունի: Երեք առջեկ մատներ և մէկ ետքի մաս ունի: Գետնին զարժվում է ոստուտելով: Նա թոշել ևս կարող է: Նոցա որձը աև վիզ ունի: Ճնճղուկը շառակիր կենդանի է: Նա յանդուզն թոշուն է: Նա ոպուտիւն էին, բայց և միասակար թոշուն է:

ՄԻԾՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ.

«Ծիտ-ջան, ձմեռը մոր պիտի ապրես», հացցրեց կալում: —Այստեղ էլ, ամստեղ էլ ամէն տեղ, պատասխանեց ծիտը:

«Կէսօրին մոր պէտք է ճաշես», հարցրեց կատուն: —Կալում, հաւերին ընկերանալով, պատասխանեց ծիտը:

«Գիշերը մոր պիտի հանգիստ առնես», հարցրեց կատուն: —Թող հարց ու փորձդ, նենդ-սատանայ, պատասխանեց ծիտը:

«Զէ, ասա, ծիտ-ջան, հոգուդ մատագ», շարունակեց ձանձրակի պատուն: —Միտքդ ծուռ է, ուզում ես ինձ ճանձարակի պատուն:

Այս ճնճուղիկ,
Կարմիք տառիկ,
Սպիտակ փորիկ.
Ուտեն կուտիկ,
Խմեն ջրիկ,
Առուի նորիկ,
Պատիկ մատիկ,
Փախչին երթան.

Կ Ե Ռ Ա Ս.

Տեսէք, ինչ սիրուն քան եմ բերել։ Սորան դուք
անոնանում էք սրալձ, բայց հայերէն սորա. անունն է
կեռասի Խսկական քալը մուգ կարմիր է, սորա պէս
քաղցր չէ, երկու երեք զարաթից յետոյ կը հասու-
նանայր։

Այս կեռասը ինչ ձև ունի: Բողոքակի: Գնդակները
նոյնակն քոլորներէն: Ուստի մենք կասենք. Հե ու ա-
ս ը կ հաղ ած ն է, ո գ ն դ ա բող ո ր է։ Կը կրկնե-
ցէք: Խմբով։ Ահա այս կրղմից կեռասը փոքր ինչ
ճնշված վու ընկած է: Այս տեղ ինչ կայ հաստատված:
Կոթ: Ասացէք. Կ ե ո ա ս ը ծ ա յ ր ի ն կ ո թ ո ւ ն ի:
Այդ կոթով կեռասը պինդ նստած է ճիւղի վրա. դո-
րա միջնորդութեամբ էլ իւր սնունդն է ստանում ծա-
ռից: Եթէ ինձորի կոթի հետ համեմատէք, կեռասի
կոթը աւելի երկայն է: Եթէ կեռասի կոթը
երկու մատով մէջ տեղը շշափենք, հազիւ կզգանք:
Ինչնէ: Որովհեան բարակ է: Ամփոփել. Կ ե ո ա ս ի
կ ո թ ը երկայն և քարարակ է:

Կեռասից մի քան եմ պոկում: Ի՞նչ է այս: Կաշի:
Ուրեմն կեռասը ինչնի է պատած: — Ասացէք. Կ ե ո ա-
ս ը պ ա տ ա ծ է կ ա շ ւ ո վ: Կաշին ինչպէս է գու-
նաւորված: Կարմրադեղին, հրաշէկ: Ե՞րբ աւելի սիրուն
հրաշէկ գոյն է ստանում կեռասը. Երբ որ հասունանայ:
Նա ինչպէս է երեսմ հապունանալուց առաջ: Կանաչ:

Ահա սա էլ կեռաս է, բայց ինչպիսի: Խակ: Ինչի՞ց ի-
մացաք՝ սորա խակութիւնը: Կանաչ է: Փորձեցէք խակ
կեռասը ճմլել. Սա կոշտ ու պինդ է: Ասացէք. Խ ա կ
կ ե ո ա ս ը կ ա ն ա չ և պ ի ն դ է: Խակ հասուն
կեռասն ինչպէս է: Հրաշէկ և փափուկ: Պարտիզպան-
ները ուրիշ գոյնի կեռասներ են հասունացնում են
(պատուաստելով): Ասացէք. Հ ա ս ա ծ կ ե ո ա ս ը
կ ա ր ո դ է լին ե լ հ ր ա շ է կ, դ ե ղ ի ն և մ ո ւ դ
կ ա ր մ ի ր:

Այս կեռասի կաշին՝ շապիկը պլոկում եմ: Ինչ որ
հիմի տեսնում էք, կեռասի մսուտ մասն է: Դա կաշուր
տակն է նստած: Ասացէք. Կ ա շ ո ւ ի տ ա կ ը կ ե-
ռ ա ս ի մ ս ո ւ տ մ ա լ ի ն է: Ի՞նչ գոյն ունի միսը:
— Հիմի ինչ արեցի այս միսը: Ճմլեցիր: Ի՞նչ է կաթում
նորանից: — Ի՞նչ համ ունի այդ հիւթը: Թաղցր: Աս
ուրեմն կը լինի քաղցր բալ կամ կեռաս, իսկ թթուն
կոչվում է պարզապէս «բալ», որ դուք անունում
էք ալուրալ: Նորից վերաստուգել բացատրածները:
Ասացէք. Կ ե ո ա ս ը ք ա լ ց ր է, բ ա լ ը թթու է:

Մենք իսկապէս կեռասի մի մասն ենք ուտում:
Միսը: Խակ հրը՝ ոչ կորիզը: Դա հրտեղ է նստած: Ասա-
ցէք. Կ ե ո ա ս ի մ է ջ ը ն ս տ ա ծ է կ ո ր ի զ ը: Ու-
ցիշ մը պատուզները կորիզ ունին: Շլորը, դեղձը, ծիրանը:
Որ պտուղի մէջ որ կորիզ կայ, կոչվում է կորիզաւոր
պտուղ: Անացէք: Կ ե ո ա ս ը կ ո ր ի զ ո վ պ տ ո ւ դ
է: Խնձորը սերմով (կուտով) պտուղ է, ոչ թէ կորիզով:
Ես ինչ արեցի: Կորիզը կոտրեցիր: Նայեցէք, կորիզի
մէջ էլ մի բան կայ—մի ջուլի: Կարծդ ես այս ու-
տել: Այս բայց ազդ միջուլը առողջարար չէ, ուտի
և չենք ուտում: Ցանած կորիզից բնում է կեռասի
նոր ծառ:

Մենք ամէնքս ուտում ենք կեռասը. դուք էլ սի-
րում էք այդ միրդը: Բայց կեռասի մի մասը չսէտք է
կուլ տաք: Կորիզը: Աղիքների մէջ մնացած կորիզը

կարող է ծանր հիւանդութիւն պատճառել: Հապա ու-
տելու ժամանակ ի՞նչ էք անում կորիզն ու կոթը:—
Բայց գետնի վրա չպէտք է թափէք կերածի աւելորդը,
որպէս զի յատակը չաղտոտէք: Մանուկներին շատ և
շատ վայել է մաքրասիրութիւնը:—Կեռաս ուտելու
ժամանակ դուք պէտք է նայէք և ձեր շորերին, որ
չաղտոտվեն: Հէնց հագուստի աղասառութիւններով է ե-
րեւում մանուկի անժաքրութիւնն ու անվայելչութիւնը:

Մայրիկն երեմն կեռասից՝ բայց աւելի բալից
անոյշ է պատրաստում: Այնուհետև անուշը պահում
են որ ժամանակուայ համար: Առաւելապէս ձմեռուայ
համար, երբ որ թարմ պտուզ չի ճարվում և անոյշը
նոցա փոխարինել կարող է:

Անուանեցէք կեռասի բոլոր մասերը: Միջուկ,
կորիզ, մսուտ մաս, կաշի, կոթ: Ես կը նկարեմ, դուք
էլ այսպէս նկարեցէք կեռասը:

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ.

Մառի վրա մի մանուկ կայ. հազարը շէկ կրակ է,
որտումը քար ու ոսկոր է: Ո՞վ է նա:

Սպիտակ ձիւն,	Դեղնած երես,
Այր, բեն, տիւն,	Պիտ' համբերես:
Կանաչ գլուխ,	Շէկ, շէկ աչիկ,
Խալ է, ուն:	Հիմի պաշիկ:

Կ Ա Տ Ո Ւ Ե Ր.

Ն պ ա տ ա կ. Տեսնենք, այս պատկերում ի՞նչեր
է նկարած: (Ամբողջ պատկերը կամ պէտք է ուսուցիչը
ստուերագծէ, կամ պատմէ միջի եղածնը):

1. Նախապարասութիւն.

Խօսք ու զրից կամ լեզու բանալը. Զեղանից մի
է տեսել կատու:—Պատմեցէք ինչ որ գիտէք:—Ո՞ր տեղ
են ապրում կատուները:—Ի՞նչ տեսակ մորթի, ի՞նչ
տեսակ պձեղներ, ի՞նչ ձայն, ի՞նչ անուններ ունին կա-
տուները: Նոքա ի՞նչ կերակուր են փնտում:—Ո՞ր
տեղ են փնտում այն:—Այդ վախճանով նոքա ի՞նչ ճար-
պիկութիւն, ի՞նչ արտեստ են բանեցնում:—Ի՞նչ լաւ
և ինչ վատ յատկութիւններ ունին կատուները:—Նոցա
ձագերը առաւելապէս ինչով են զրազվում:—Ի՞նչու հա-
մար ոմանք չեն սիրում կատուներին:—Ո՞վքեր կուզե-
նան, որ միշտ իրանց մօտ կատու ունենան թախ-
տի կամ աթոռի վրա: Ծեր մարդիկ—պապը, տատը:—
Նոցանից ով աւելի է ինամում կատուին, մանաւանդ
պզտիկ ձագերին: Տատը: Այդպէս ինամելու համար որ
տեղ է գտնում ժամանակ: Տատը մեծ մասով տանն է
նստած, ծանր գործերը այլ ևս չի կարողանում կա-
տարել, մնում է կատուներով զրազվիլը:—Հայրն ու մայ-
րը առաւելապէս որ տեղ են գործում: Դուրսը զաւ-
թում, արտում, պարտիզում, արհեստանոցում և այլ
տեղերում: Իսկ մանուկները օրուայ մեծ մասը որ տեղ
են լինում: Դպրոցում և այն:

Ամփոփում: (Երբ որ մանուկները հարցմունքնե-
րի համեմատ իրանց մտքերը հատ ու կտոր յայտնեն,
այնուհետև ասածները պէտք է ուսուցչի առաջնորդու-
թեամբ կարգի բերեն և ամփոփեն այսպէս:)

Մի անգամ էլ պատմեցէք, թէ առ այժմ մենք
ինչ իմացանք: Ի՞նչպէս են կոչվում այս կենդանինե-
րը: (Նոքա կոչվում են կատու. շատ անգամ դոցա
անուանում են «փիսիկ», «փիսօ»): Ի՞նչ կարող էք ասել
կատուի մարմնի մասին: (Նոքա ունին փափուկ, թաւի-
շէնման մորթի և շատ սուր մագիներ, որ կարող են
ներս քաշելու)՝ Պատմեցէք նոցա ձայնի մասին: (Զայնը
մի «միառւ» է, բայց նոքա կարող են և մրմռալ):—Ո՞ր

տեղ էք տեսել կատուներ: (Տանը և այլն): Այս տեղ
ի՞նչ են անում նորա: (Ել պատասխանը չենք գրում):
Դուք կատուի մէջ ի՞նչ էք հաւանում և ի՞նչ՝ ոչ:—Ա-
ռաք կատուի մէջ ի՞նչ էք հաւանում և ի՞նչ՝ ոչ:—Ա-
ռաքելապէս ովքեր են սիրով խնամում կատուներին:

2. Ընձեռումն. խորարափանցումն կամ ուռածումն.

(Ա. Պատկերի մանրամասութիւնները).

Խօսք ու զրից. Այս պատկերի մէջ առաւելապէս
ի՞նչ էք հաւանում: Կատուները: Քանի են դոքա:—
Դոքա հրաշալի կատուներ են: Փորձենք պատկերի մէջ
իմանալ, թէ դոքա որ տեղից կարող էին այդ տեղ
դալ: Պատկերի մէջ հեռու ի՞նչ էք տեսնում: Մի հաս-
տարուն ծառ: Ծառի յետե ի՞նչ էք տեսնում: Մի տուն
զնոնվ և պատուհաններով: Դա տան յետեի դուռն է: Ռերեմն՝
ծառով ծառ որոլորը ի՞նչ կայ դարսոտած: Նստարան-
ներ: Ի՞նչ խորիչով:—Տան բնակիչները աւելի որ
ժամանակ կարող են զալ ծառի շուաքում հանգստա-
նալու: Կէսօրին և երեկոյեան, զաշտային աշխատու-
թիւններից յետոյ: Արդեօք իսկապէս այս ի՞նչ տեղ է,
ուր որ մեր կատուները խաղ են անում: Պարտիզի հո-
գանոցը: Ի՞նչից իմացաք: Դա տախտակներից է շինած,
զաւթի մէջ է և որթատնկով է պատած: Մենք տես-
նում ենք հովանոցի միայն մասերը, Որո՞նք: Դուռը, մի
պատը և յատակի մի մասը:

Ամիտիումն. Մի անգամ էլ պատմեցէք, ի՞նչ որ
տրդէն տեսանք պատկերի մէջ: Ի՞նչ էք տեսնում պատ-
կերի յառաջակողմում և ի՞նչ յետեակողմում,—Պատ-
միր բոլորը՝ ծառին վերաբերեալ հանգամանքներով:
—Նկարագրիր բուն այն վայրը, ուր որ մեր կատուները
պատում են:—

Նիմիթի շարունակութիւն. Տարուայ որ եղանակն
է նկարած մեր պատկերում: Ամառը: Ի՞նչից իմացաք:
—Մենք զաւթի մէջ ոչ մի մարդ չենք տեսնում, և ոչ

հովանոցի մէջ: Արդեօք տնեցիք ուր պիտի լինին զնա-
ցած: Դաշտը, որ տեղ անշուշտ աշխատում են, մանուկ-
ները գպրոցումն են: Ի՞նչից ենք իմանում, որ տան
մէջ դարձեալ անդամներից մէկը մնացել է: Յետին
դուռը բաց է թողած, իսկ հովանոցում մնացել են կի-
ապործ գուլպայ, գոկնոց, գիրք և ակնոց: Դուք ի
հարկէ կարող էք գուշակել, թէ ով է մնացել տանը:
Տատը: Ի՞նչից իմացաք:—Դա ի՞նչն է մնացել տանը:
(Յիշիր նախապատրաստութիւնը): Մենակի մէջ ա-
մառուայ շոգը չտանելով, ի՞նչ է արել զա: Դուրս է
եկել հովանոցը հովանալու համար: Հետո ի՞նչ է դուրս
բերել: Գուլպայ, գիրք, ակնոց և երեկի կատու ևս:
Այժմ զա այդ տեղ չէ, հապա ուր պիտի զնացած լի-
նի: Թերեւս մի մարդ փողոցից բախել է տան դուռը,
կամ զանգ է տուել, և տատը զնացել է դուռը բաց
անելու:—Տատը աճապարանօք ի՞նչ է արել, երբ են-
թագրել է, թէ անշուշտ մի հիւր պէտք է լինի դուռ
ծեծողը: Նա արագ իւր գոկնոցը մէջքից քակել է
(ի՞նչի), գուլպան ձեռքից վեր է դրել և շտապով վա-
զել է սենեակը, որ հիւրին զիմաւորէ:

Ասմիինվումն. Տան բնակիչներից ի՞նչն ոչ ոք
չի երեսում:—Տատի մասին ի՞նչ կարող էք պատմել:—
Ի՞նչ է պատահել, որ նա այժմ այլ ևս հովանոցումը
չէ:—

Նիմիթի շարունակութիւն. Արդեօք ի՞նչն էն զբաղ-
վում տատն ու հիւրը: Երեկի զրոյց են անում: Բայց
տատը անգործ մնալ չի սիրում, որ գործը ընդհատվե-
ցաւ այցելութեան պատճառով: Գուլպայ հիւրելը՝ Զրոյց
անելու ժամանակ էլ ի՞նչ կուզենար անել: Աշխատել:
Ի՞նչպէս է կոչվում մի անձ, որ սիրում է անդամար
աշխատել: Աշխատասէր, ջանասէր: Արդեօք նա ում
համար է գուլպայ գործում: Թոռան համար: Նա կան-
խաւ ուրախանում է, որ շուտով պստիկ տոտիկները
դուլպայ հագին կը վազվին: Բայց ի՞նչն համար նա

ակնոց պէտք է բանեցնէ: Ել լաւ չի տեսնում, աչքի լոյսը թուլացել է: Ակնոցով ի՞նչ կարող է լաւ ջոկել: Գործած գուլպայի ամէն մի աչքը: Ել ուրիշ ի՞նչ բանի համար նա ակնոց է բանեցնում: Գիրք կարդալու համար, որ թողել է աթոռակի վրա: Այդ ի՞նչ հին գիրք է: կարդա վրէն ի՞նչ է գրած: Աղօթագիրք: Ուրեմն տատն ի՞նչ է կարդում: Եւ ինչի մասին է մտածում: Աստծոյ մասին: Ինչպէս ենք կոչում այնպիսինքնին, որոնք աշխատասէր են և մի և նոյն ժամանակ Աստծուն չեն մոռանում: Բարեպաշտու: Այս տատն ուրեմն ի՞նչպիսի կին է:—Արդեօք տատն ի՞նչու համար կունենար գոզնոցը կապած: Նա փափագում է իւր հագուստը մաքուր և ինամքով պահել: Պատկերում մի բան էլ տեսնում ենք, որով իմանում ենք, որ նա առ հասարակ մաքրութիւն և վայելչութիւն է սիրում: Աւել և աքանդազ (թիակ): Էտոնք ի՞նչ բանի համար է նա գործ գրել: Նա հովանոցը լաւ աւել է, մէջը հանգըստանալուց առաջ: Ուրեմն տատն ի՞նչ է սիրում: Մաքրութիւն, վայելչութիւն, կարգ կանոն: Արդեօք նա կը հաւանէ, երբ որ դառնայ և տեսնէ, թէ կատուն գուլպան և գոզնոցը քաշընէլ և անկարգ թափթիւլ է:

Ամփոփում: Պատմիր, թէ ի՞նչու տատին աշխատասէր կոչեցինք:—Նա ի՞նչ բանի է գործածում ակնոցը:—Ինչից ենք իմանում, որ նա բարեպաշտ էլ է:—Ինչից ենք իմանում նորա մաքրասիրութիւնը:—Հապա նորան ի՞նչ կը վշտացնէ, երբ որ հովանոցը դառնայ:—

(Բ. «Կատուներ» առակը).

Ն պ ա տ ա կ. Այժմ կատուներին պէտք է մի մի անուն տանք:

Խօսք ու զրից. Կատուները ի՞նչու պէտք է հովանոցը գային:—Ինչից ենք տեսնում, որ տատը նո-

ցա հոգսն է քաշում: Նա մի աման լիքը կաթ է բերել նոցա համար: Կատուններն արդէն այնքան մեծացել են, որ պէտք է անուններ ևս ստանան: Մի լաւ մտածենք, թէ իւրաքանչէւրին որ անունն աւելի կը յարմարի: Հետազօտեցէք, ի՞նչ գոյն ունին նորա, ով ի՞նչով է զրադիված: Ամէն մէկը տարբեր կերպով է զրադիված: Ուրեմն ի՞նչ անուններ աւելի կը սազի դոցա: Զանազան: Եկեք իւրաքանչէւրին այնպիսի անուն տանք, որ յարմար լինի իւր վարժած ար հ ե ստին, իւր ունեցած ձիք ի ն:—Ուստի մենք այս կատուներին կասենք.

Ել կատուներ, չալ կատուներ,
Ունիք լաւ լաւ փեշակ, հունար.
Հապա ստացէք ձիզ անուններ:

Զեզանից ով կարող է այս խօսքերն ասել կատուներին:—Կրկնեցէք խմբով:—Նախ և առաջ անուն տանք այն կատունին, որ սեղանի վրա է: Նա ի՞նչ բանի վրա է նստել: Տատի գոզնոցի վրա: Ի՞նչ գոյն ունի: Մուգ մոխրագոյն, գրեթէ սև բայց սիրուն սպիտակ գունչ ունի: Ի՞նչ է անում: Քնած է: Արդեօք ի՞նչ կզանք, եթէ շօշափենք նրա գեղեցիկ մուշտակը (քուրքը): Թաւշի պէս փափկութիւնը: Հենց այդպէս էլ կանունանենք, մենք սորան կամենք (ցոյց տալով պատկերում):

«Քո անունդ է Թաւիչ—մորթի»:

Կրկնիր: Ասացէք խմբով: (Տախտակի վրա զրվում է անունը): Այս կատուն ուրեմն իւր անունը ստացաւ: Ի՞նչպէս է կոչվում:—Ի՞նչու:

Սեղանի տակ կատուն բոլորովին ուրիշ տեսակ է: Ի՞նչ գոյն ունի դա: Մոխրագոյն, սև խաղերով: Ուրիշ է պատրաստվում գնալու: Գաւիթթը: Նկատում էք, ի՞նչ պէս է շարժվում: Կամացուկ և զգոյց սողոսկում է: Գաւթթի անասուններից մի շոփնդ լած պէտք է լինի: Արդեօք ի՞նչ անասունից: Մկնից կամ թունակից: Հի-

մի սա ի՞նչ է անում: Կամաց սողում է, ականչները սրել է, աչքերը շեշտակի ուղղել է, որպէս զի մկան կամ խեղճ թռչնակին մի սոսիւն անելով ճանկէ: Եւ որովհետեւ մենք նկատում ենք նրա զ գ ո յ շ ս ո դ ա ց ո դ բնութիւնը, ուստի թող լիսի:

«Նորա անունը Սուս-փուս-փորսող»:

Կրկնիր, ի՞նչ որ ասացի՞նք Թաւիշ-մորթու մասին և այն կատուի անունն ասա, ի՞նչպէս որ սովորեցիր:— Ի՞նչպէս է կոչվում երկրորդ կատուն:— Ի՞նչու:—

Ի՞նչպիսի կատու է Սուս-փուս-փորսողի ձախակողմեանը: Կարմիր: Դա իւր ժիր եռանդով ի՞նչ է անում: Տատի գործած գուլպան խաղացնում է, քըրքում: Նայեցէք կծիկի թելը ի՞նչ է արել: Այստիկ խճճել է: Միթէ չարամտութեամբ է քանզել գուլպան: — Ուրեմն գորա սիրած բանն ի՞նչ է: Խաղ ու կատակ: Դա երեխ ուրիշ բաներ էլ է սիրում խաղացնել: Գընտակ, թղթի կատր, կոճ և քար զլորել, մուկ բռնել:— Մեծացած կատուն ի՞նչ կանի, եթէ փոքրութիւնից այդպէս խաղալու վարժի: Նորա անդադար հետամուտ կը լինեն մկներ բռնելու: Մեզ ուրեմն ապագայում ի՞նչ արուեստ պէտք է ցոյց տայ մի այդպէս կարմիրքիւրքը:— Ի՞նչ կարող է պատահել, երբ որ տատը գայ և տեսնէ այս բոլոր անկարգութիւնները: Նա կը չարանայ կատուի արարմունքների վրա, կը զայրանայ, կը պատժէ և մի լաւ թաթալօշ էլ կուտայ նորան:— Բայց այլ բոլոր բարկաւթիւնը շատ էլ լուրջ չի լինի, նա էլ մեզ պէս ներողամտութեամբ կը մտածէ, թէ այս չարաձճին ապագայում մուկ բռնելու է վարժում: Ուստի անուանակոչութիւնը շարունակելով կասենք.

«Այս մէկինը Մկան-դահիճ»:

Կրկնիր, ի՞նչ որ Թաւիշ-մորթու և Սուս-փուս-փորսողի մասին ասացի՞նք և հետը միացրու վերջին

անուանակոչութիւնն էլ:— Ի՞նչպէս է կոչվում այս երբ-բորդ կատուն:— Ի՞նչու:—

Հիմի մնում է, որ կաթնամանը լզող այս պստը-կին էլ մի անուն տանք: Դա ոչ աջ և ոչ ձախ է նայում: Կարծես ընաւ չի հետաքրքրվում, թէ իւր չորս բոլորը միւս կատունները ինչեր են անում: Ի՞նչպէս է նատած այդ կատուն: Կքած, կծկած: Ո՞ւր է նայում ասուծ աչքով: Կաթնամանին: Հաղա ինչու չի լկում կաթի մնացածը: Արդէն կշացցել է: Հաղա էլ ի՞նչ է դարդ անում և ափսոսում: Որ տմանի մէջ դեռ էլի մի քանի կաթիլ է մնում: Ապա ուրեմն այս կատուի մշտական հոգմն ի՞նչ է: Ուտել, խմել: Տան ո՞ր մասերում աւելի ցանկութիւն կունենայ ելումուտ աներ: Խոհանոցում և մասանում: Ի՞նչու:— Մի այսպիսի ծակաչը կատու անշոշառ երբէք փոյթ չի ունենայ, թէ արգեօք թոյլտութիւն ունի իւր առջև եղած բանը լկելու, թէ չէ: Անտարբակոյս շատ անզամ բռնվել է դա իւր աշքածակ գողութեան մէջ. և այն ժամանակ ի՞նչպէս է վարձատրվել: Լաւ ծեծ է կերել Բայց ի՞նչպէս երեսում է, նա իսկի չի խրատվել. այլ միշտ և անդադար ի՞նչով է զրադիված:— Դա ի՞նչ չի սիրում: Խաղալ և մուկ բռնակ: Դա ուրեմն ի՞նչպիսի անուղղելի կատու կը մնայ: Լզող, լկող: Այն, գա ոչ մի աման շաման չի թողնի, մինչև որ չնոտոտէ և իսպառ չօբրէ և չխատակէ. հետեւապէս գորան էլ կանուանենք, իրան դառնալով՝

«Քեզ էլ կասենք Պնակ-լզող»:

Կրկնիր բոլոր կատունների անուանակոչութիւնը: Ամփիփումն. Ի՞նչ բանի համեմատութեամբ անուաններ յատկացրինք կատուններին: Ի՞նչպէս անուաննեցինք առաջին կատուին:— Ի՞նչու:— Ուտանաւորից ասա նորա տողը: Ի՞նչպէս է կոչվում երկրորդ կատուն:— Ի՞նչու:— Ո՞րն է նորա տողը: Ի՞նչ է երրորդ կատուի անունը:— Ի՞նչ հիմքով: Նորան յատկացրած տողը:

Վերջին կատուի անունն ասաւ—ինչից ծաղեց այդ անունը: Նորա տողը:

Հիմի ժվ կը կրկնէ բոլոր ոտանաւորը: Խմբով ասացէք, բայց այնպէս, իրեն թէ ականջ զնող կատուներին էք ասում: Կարգացէք գրատախտակի վրա գրած անունները, հետն էլ համապատասխան կատուներ ցոյց տուէք պատկերի վրա:

Նպատակ. Հիմի տեսնենք, թէ կատուները ինչպէս մեծացել և զարգացել են: Կրկնիր:

Խօսք ու զրից. Երբ որ կատուները հասակ առան, հէնց այնպէս էլ պատահեց, ինչ որ մենք ենթադրեցինք:

Տառը նոցա մասին պատմում է.

«Ահա այսպէս տարիք առան,
Ենք ու չնորհքով լաւ մեծացան».

Կրկնիր: Մենք չենք գարմանում, որ այդպէս է պատահել. ինչու Տառը այնպէս է իննամել նոցա, որ նոքա պէտք է զօրանային, բարգաւաճէին:

Նախ լսենք Թաւիշ-մորթու պատմութիւնը: Նորա մասին ասված է.

«Թաւիշ-մորթին փափուկ բազմեց»:

Կրկնիր: Այսաեղ հովանոցում ինչպէս է նստած Թաւիշ-մորթին: Այսուհետեւ որտեղ աւելի սիրեց հանգըտանալ՝ Բարձի վրա, տատի զոգում և այլն: Բայց եթէ կատարեալ իսելօք կատու լինէր, նա ինչ պէտք է անէր: Բոլոր ջանքով մկներ բռնէր և առնէտներ բռնէր. Սակայն նա այդ մասին բնաւ փոյթ չունէր: Նա ըստհակառակ այսպէս էր մտածում: «Երբ որ քաղցած լինիմ, թող ողջ լինի իմ տանտէրը»: Նա ինչ հնարներ պիտի բանեցնէր, որ տնեցիք իրան կերակրէին: Կը քըսմըսէր, կը շողոքորթէր: Հետն էլ ինչպէս կաղերսէր ողորմազին: Աղէկոտոր «միառ» կը կանչէր, իւր բախ-

տից, սբացաւ մարդիկ կային: Ովքեր էին: Մենք զիտինք, որ մի բարեհոգի խնամում էր և քաղցած չէր պահում գորան: Անշուշտ զա էլ փափկասիրութեամբ կը մտածէր. «Ես այս կեանքը շատ եմ հաւանում: Միշտ բարձի վրա կամ գոգում նստել, փաղաքշած և փայփայած լինել, լաւ կշտանալ առանց աշխատելու,—միթէ աւելի փառաւոր ապրուստ կը լինի»: Կրկնիր, նա ինչ է մտածում: Իսկ մենք նորան ինչ կողմից պէտք է դատապարտենք: Նա իսկի բան չի շինում, չի աշխատում: Ուրիշն ինչպէս պիտի կոչվի: Դատարկապորտ: Նա ոչ մի բանի պիտ ան ի չէ: Աւելի սաստկացրու պարսաւանքը, որին նա արժանի է: Նա մի անօգուտ գատարկապորտ է:

Բոլորովին այլ կերպ են վարվում հետեւեալ երկուսները.

«Մկան-դահիձ նկուղ գնաց,
Սուս-փուս-փորսողն ամբար վազց»:

Կրկնիր: Մկան-դահիձի մասին ինչ է ասած: Այս տեղ նա ինչ պէտք է անէր: Այդ գործով նա շատ օգտական էր դառնում: Ինչպէս: Սուս-փուս-փորսողի մասին ինչ է ասած: Այն տեղ նա ինչ բան ունէր: Ինչ կողմից այդ երկուսը աշխատակից էին: Մենք դոցա ինչ անուն կարող ենք տալ որ այդպէս եռանդով աշխատաւեր են: Դոքա աշխատաւեր են. չորս կատուների մէջ զոքա աւելի լաւ չնորհք ունին: Տանտէրերը ինչպէս պէտք է վերաբերվէին դոցա: Անշուշտ դոքա գնահատում էին նոցա և սիրում:

Իսկ չորրորդ կատուից ինչ դուրս եկաւ: Նորա համար ասված է.

«Պսակ-լզողն խոհանոցում
Հանգիստ չտուեց իսեղն աղախնուն»:

Կրկնիր: Մենք արդէն այդ գուշակել կարող էինք: Պսակ-լզողն ինչ կանէր, երբ որ քաղցած լինէր:

Կը մտնէր խոհանոցը և ամէն բան կը լկէր կը լզէր:
Այդ սովորութեամբ կատուն միշտ ուժն է նեղութիւն
և ձանձրութիւն պատճառում: — Իսկապէս խոհարարու-
հին ի՞նչ տանջանքներ էր կրում: Նա պէտք է անընդ-
հատ աչք ունենար, որ չլինի թէ որ և է ուտելիղէն
բաց մնար, և հէսց որ Պնակ-լզողին դուրս էր ա-
նում, այդ անամօթը գարձեալ իսկոյն տուն էր
մտնում: Խոհարարունու հալածանքներից փախչելու
ժամանակ և սեղանի ու ամանեղէնների վրա անխտիր
վաղվագելս՝ կատուն էլ ի՞նչ վնասներ կարող էր հասց-
նել: — Նա այդպէս ամբողջ տան համար պատիժ ու
պատոհաս դարձաւ. վերջիվերջոյ ի՞նչ պէտք է անէին,
որ ազատվէին նորանից: Հարկաւ տնից խսպան կը
վճնտէին: Այսուհետեւ նա ո՞ր տեղ պիտի փորձէր իւր
պնակալիզութիւնն ու գողութիւնը. Դրացու տանը:
Իսկ սա ինչ կանէ, երբ որ օտար կատուին բանէ իւր
տան մէջ: Կը սատակեցնէ: Այս այս է այն կատուի
վախճանը, որ ոչ մի օգուտ չունի:

Ամի՞ի ուսմէ. Ինչպէս եղաւ, որ կատուները շէնք
ու չնորհքով մեծացան: — Այդ բանի առիթով մեր ոտա-
նաւորի մէջ ի՞նչ է ասած: —

Պատմիր, ինչ որ ասել ենք Թաւիշ-մորթու մա-
սին: Այդ բանը ոտանաւորի մէջ ի՞նչպէս է նկարա-
գրած:

Ոտանաւորից ի՞նչ ենք իմանում Մկան-դահճի և
Սուս-փուս-փորսողի մասին: Նկարագրիր այս երկու
կատուների կեանքը: —

Վերջապէս ի՞նչ տեղեկութիւն ենք ստանում
Պնակ-լզողի մասին: — Պատմիր նորա կենաց վախճանը:

Ո՞վ կարող է ինձ ասել մեր ոտանաւորի երկրորդ
կէսը: — Հիմի լսենք ամբողջ ոտանաւորը: (Լաւ վար-
ժեցնել նախ առաջին՝ ապա երկրորդ կէսը):

3. Համամատութիւն, կապակցութիւն.

Համեմատութիւն Թաւիշ-մորթուն Պնակ-լզողի հետ:
Ի՞նչ նմանութիւն կայ երկուսի մէջ: Երկուսն էլ մուկ
բռնելու փափակ չունին, չեն աշխատում. դոքա դա-
տարկապորտ են ինչով են իրարից զանազանվում:
Թաւիշ-մորթին քննելով է իւր ուտելիքը կորզում, իսկ
Պնակ-լզողը՝ գողանալով: Թաւիշ-մորթին հեզ է, և ո-
րովհետեւ ոչինչ չարիք չի պատճառում, աւելի սիրելի
է դանում և ինսմքի արժանունում. իսկ Պնակ-լզողը
շատերին վնաս է տալիս, գող է, ամէնուն նեղացնում
է և ողբալի վախճան է ստանում:

Համեմատութիւն Թաւիշ-մորթուն և Պնակ-լզողին
մացած երկու կատուների հետ: Երկու դատարկապորտ
երկու աշխատասէրին ոչնչով նման չեն: Մկան դահճ-
ճըն ու Սուս-փուս-փորսողը իրանց օգտաէտութեամբ
կարողանում են փոխարէնը հատուցանել իրանց բա-
րերար ինսմողներին: Առաջինները ապերախտ են:
Վերջինները հաւատարմութեամբ կատարում են իրանց
պարտքը, որպէս քաջ կատուներ: Առաջինները պար-
տազանց են: Վերջինները արժանանում են գովասան-
քի և գնահատվում են ըստ արժանույն: Եթէ Թաւիշ-
մորթին տանելի է դառնում իր հեղութեան պատճա-
ռ մարդարէջ են թողնում, Պնակ-լզողին ընդհակառակ
արտաքսում են մարդկանց հասարակութիւնից:

4. Գաղափարների կարգաւորութիւն.

ԴԱՏԱՐԱՊՈՐՏԸ Աստծու պատիժ է. Նա բնաւ
բանի պէտք չէ, ոչ ոքին օգուտ չի տալիս և սոսկալի
վախճան է ստանում: Դատարկապորտութիւնը ամեն-
այն չարեաց մայր է: Դատարկապորտութեամբ սո-
վորութիւն են դառնում մոլորութիւնները:

Ժիր ԱՇԽԱՏԱՐ և ԱՌ Հաւատարմութեամբ իւր
պարտքն է լցուցանում, շատերին պիտանի է դառ-
նում, ամէն տեղ յարգ ու պատիւ ունի և երջանիկ է

իւր աշխատութեան մէջ. աշխատութեամբ նորա կեանքը քաղցրանում է: Հալալ է աշխատաւորին իւր ստացած վարձը:

5. Գործադրութիւն.

Ի՞նչ խրատ կարող էք առնել կատուներից: Մենք չենք ուզում դատարկապսրտ լինել, այլ ուզում ենք ժիր աշխատող լինել, այսինքն ուսման դործերը ձըշդիւ և խնամքով կատարել, ծնողներին օգնական դառնալ իրանց աշխատութիւնների մէջ, ամէն բանում օգտակար լինել, որպէս զի ապագայում երախտաւոր մարդկանց շարքում լինենք: Առաջ բան շինել, յետոյ խաղալ ու հանգստանալ, հացն հվ ուտի, բան շինողը և այն:

Մեր պատմութեան տատին ինչով պէտք է աշխատէք նմանել: Մենք էլ նորա պէս ջանասէք պիտի լինինք, նոյն իսկ հանգստանալու միջոցին, դատարկ ձեռքով նստած չմնանք: Մաքրութիւն, կարգ ու կանոն պահպանել մեր հագուստի, գրքերի և մեր քուր բաների նկատմամբ: Նոյնպէս նորա նման բարեպաշտ պիտի լինինք:

Իմաստալից արտասանութեամբ և շեշտադրութեամբ վարժեցնել ուսանաւորառակը:

Դ Ա Ս Ա Բ Ա Կ.

Անոնք. Երբ որ դու այս առաւօտեան թէյ էիր խմում, դու տանն էիր, ծնողաց մօտ: Իսկ այժմ ուր ես—Այնպէս ասա, որ ասածդ պարզ լսեմ. «Ես ուսումնարանումն եմ»: Ուր էք դուք ամէնքդ:—«Միշտ պահանջել լրիւ պատասխան. «Մենք ամէնքս ուսումնարանում ենք»): Հինգ բոպէ առաջ մենք ուր էինք: Գաւ-

թում, պարտիզում, պատշգամբում: Ուրիշ տների մէջ էլ կան՝ գաւիթ, պարտէզ, պատշգամբ: աւելի ճիշտ ասացէք, հինգ բոպէ առաջ ուր էինք: Մեր զավթում, մեր պարտիզում... Ուրեմն դուք ձեր տան զավթումն էիք, ձեր տան... Ո՞չ, մենք ուսումնարանի զավթումն էինք, ուսումնարանի պար... Դուք առաջ ասացիք, թէ մենք ուսումնարանումն ենք: Իսկ այս տեղը, ուր որ հիմի ենք, չէ ոչ ուսումնարանի զաւիթ, ոչ ուսումնարանի պարտէզ և ոչ ուսումնարանի պատշգամբ: Հապա ի՞նչ է: Ուսումնարանի սենեակը: Այդ սենեակը կոչում ենք դասարան կամ դասարանուն: Դու ուրեմն ո՞րտեղ ես, իսկ դու, իսկ դուք ամէնքդ:—Կրկնեցէք:

Մենք ուսումնարանումն ենք:

Ուսումնարանն ունի՝ գաւիթ, պարտէզ,

պատշգամբ, սենեակ, սենեակներ:

Մենք այժմ ուսումնարանի սենեակումն ենք. մենք այժմ դասարանումն ենք:

Մասերը. Դասարանը զանազան մասեր ունի: Ես ի՞նչ եմ ցոյց տալիս: Պատը: Ուր է դարձեալ այդպիսի պատը: Քանի պատ ունի մեր դասարանը: Մեր դասարանը չորս պատ ունի: Կրկնիր դու, դու էլ, ամէնքդ:

Պատերը ձգվում են ուզիգ վերեից ներքեւ. մենք այդ բանը այսպէս էլ կարող ենք ասել: «Պատերը ուղղահայեց են, կամ ուղղահայեց են շարած»: Ի՞նչպէս են կանչնած պատերը:—Կրկնիր նախադասութիւնը մի անգամ էլ:—Ամէնքդ կրկնեցէք նոյն նախադասութիւնը:—Էլ ուրիշ ի՞նչ առարկաներ ուղղահայեց են այս տեղ: Վառարանը ուղղահայեց է: Դուռը ուղղահայեց է: Ես կը գծեմ մի զիծ տախտակի վրա: Ի՞նչ ուղղութեամբ է ընթանում այս զիծը. կամ ուրիշ խօսքով, ի՞նչ ուղղութեամբ է զնում այս զիծը: Ի՞նչ զիծ է ուրեմն սա:—Կրկնեցէք:

Մենք մուր ենք: Մենք դասարանումն ենք,
Քանի պատ ունի մեր դասարանը:
Մեր դասարանը չորս պատ ունի:
Ի՞նչ ուղղութիւն ունին մեր պատերը:
Մեր պատերը ուղղահայեաց են:

Մեր ոտի տակն էլ դասարանի մի մաս կայ. մենք
Նորա վրա ոտներով կանգնած ենք: Սա յատակ է: Դա
առաջ անն ունի յատակ: Ի՞նչ ունի դասարանը:
Յոյց տուր յատակը: Յատակը տախտակներից է շի-
նած: Յատակը տախտակը մաքուր պահպի: Աշակերտներն ի՞նչ
պէտք է չըմափեն յատակի վրա: Կարգին աշակերտը
ի՞նչ է անում իւր կօշիկների հետ, նախ քան դասա-
րանը մանելու:—Ի՞նչու:—

Մեր դասարանը վերևից բաց չէ, ծածկված է:
Մեր դասարանը վերև են ունի առաս-
տաղ: Դասարանն ի՞նչ ունի վերևը: Ամէնքդ կրկնեցէք:

Մէկ խօսքով ամփոփեցէք, թէ դասարանն ի՞նչ
ունի վերևներք: Դասարանն ունի յատակ և առաս-
տաղ: Յոյց տուր յատակը:—Առաստաղը:—

Յատակը չորս պատերի պէս ուղղահայեաց չէ.
Նա այս ծայրից նոյնչափ բարձր է տակի գետնից, ինչ-
պէս և միւս ծայրից. Նա հորիզոնական դիրք ունի:
Ի՞նչ դիրք ունի յատակը: Ասացէք միատեղ, Յատա-
կը հոր ի գոնական դիրք ունի, հոր ի գո-
նական ուղղութեամբ է ձգվում: Ուրիշ
առարկաներ անուանեցէք, որոնք նոյնպէս հորիզոնա-
կան դիրք ունին:—Ի՞նչ դիրք ունի բարտին, նոճին:—
Ի՞նչ ուղղութիւն ունի մեր պարտիզի ճանապարհը:—
Ի՞նչ ուղղութեամբ է ձգվում մեր աշտարակը:—Ի՞նչ
պէս է մեր գետի երեսը, ուղղութեան նկատմամբ:—
Մեր դասարանի առաստաղն ի՞նչպէս է: Ասացէք.
Առաստաղը հոր ի գոնական է: Առաստաղի
և յատակի մասին ուրեմն ի՞նչ կարող ենք ասել:

Ուստի առաստաղի մաս ունի յատակը չորս պատի մասն
ուղղութեամբ ունին: Կրկնիր:—Կրկնեցէք:
Ի՞նչ ունին: Անդամնից վերի:—Ի՞նչ ունին: մե-
զանից ներքի:—Աջ կողմը:—Ձախ կողմը:—Երեսի ա-
սած:—Մէջքի կողմը:—

Ամիսիումն. Մեր դասարանն ունի չորս պատ, մի
յատակ և մի առաստաղ:

Բոլոր ասածների շրջահայեցողութիւն:

Դասարանի խորհուրդը. Դուք իհարկէ ուրախ եք,
որ մեծացել էք և կարողանում էք ուսումնարանը յա-
ճախել: Դուք ամիսնայն օր ինչու էք գալիս այս դասա-
րանը: Մենք գալիս ենք, որ բան սովորենք: Այսաեղ
ի՞նչ բաներ էք սովորում:—Ես այժմ ի՞նչ եմ անում:—
Գրում ես: Խակ պաաշ գուք ի՞նչ էիք անում:—Դու որ
տեղ ես սովորում գրել: Ուրեմն մանուկներն ի՞նչ են
սովորում գասարանում: Դասարանում մա-
սնուկները սովորում են գրել: Ես կերպով նաև հետեւեալ նախադասութիւնները պէտք է մա-
կարեել ամալ:

Դասարանում մանուկները սովորում են կարդալ,

»	»	»	»	» նաշուել,
»	»	»	»	» երգել,
»	»	»	»	» նկարել,
»	»	»	»	» ալոթել:

Դասարան յանախողները. Մտքում պահեցէք,
ով որ գասարան է զալիս բան սովորելու համար, նա
աշակերտ առաջնորդ է այն, ուրեմն ի՞նչ ես զու:—Ի՞նչու:
—Ի՞նչպէս ես կոչում այն աշակերտներին, որոնք քեզ
հետ յաճախում են (զալիս են) այս դասարանը: Դաս-
արան կեր: Արշակը քեզ հետ այս դասարանն է յաճա-
խում. նա ուրեմն քեզ ի՞նչ է:—Ի՞նչու:—Դու այս տեղ
ուրիշ շատ դասընկերներ ունիս: Քոցանից մի քանիսի
անուններն ասան:

Դուք ամէնքդ ուսումնարան էք յաճախում մի բան
սովորելու համար, և այդ պատճառով կոչվում էք աշա-
կերտ: Ես էլ ամենայն օր ուսումնարան եմ գալիս:
Բայց ես աշակերտ չեմ, ինչու չէ:—Ես ոչ թէ ուսա-
նում եմ ձեզ հետ, այլ ձեզ ուսուցանում եմ: Ուրեմն
ի՞նչ եմ ես:—Ասացէք, ովքեր են յաճախում ուսումնա-
րանը: Ուսումածարանը յաճախում ուսումնա-
րանը: Ուսումածարանը յաճախում էն շատ
աշակերտ երան եր: Ուսումածարանը յաճախում մի ու-
սումածարէ կայ: (Ո՞վ է ուսուցանում, ովք է ուսու-
նում):

Եթէ պատահաբար մեզ մօտ մի մարդ գայ, որ
ոչ մեր աշակերտ է, և ոչ ուսուցիչ, նորան կանուա-
նենք հիւր, այցելու: Այցելուն, հիւրը ոչ ու-
սունելու է գալիս, և ոչ ուսուցանելու:

Հ Ա Ն Է Ս Բ.

Հանէսը չէր սովորում, «ղեռ պատիկ եմ,
Որ մեծանամ, ինելօք տղայ կը դառնամ»:
Հսղէս խօսող ինելառը որ բոյ առնէ,
Հացի հետ խելքն էլ կերած կունենայ:

Սեին սապոն, ինեն խրատ:

ԺԱՄԱՅՈՅՅ,

Օր ու ցերեկ պէտք է հակէ,
Ուսներ չունէ, պէտք է ման գայ,
Չեռքեր չունէ, պէտք է խփէ.
Հանելուկ ո՞լ կը լուծէ:

I. Այն, զա ժամացոյց է:

II. Ժամացուցով իմանում էք ուսումնարան գա-
լու ժամանակը, ճաշելու ժամանակը, երկաթուղու գը-
նացքների ժամանակը և այլն:

Ուրիշ ի՞նչ գիտէք ժամացուցի մասին:

III. Մենք այսօր կը խօսենք այս պատի ժամա-
ցուցի մասին:

Մասեր: Պատի ժամացոյցը մի տփի մէջ է զե-
տեղված, որպէս զի փոշուց և ճանձերից զերծ մնայ:

Առջեկց տեսնում ենք մի մեծ կլոր տախտակ, վրէն
թուանշաններ նշանակած: Համարիր, քանի՞ են (1—
12): Այդ բոլորակ տախտակը կոչվում է թուա-
ց ո յ ց (ցիֆէրբատ): Ի՞նչ գոյն ունի թուացոյցը, իսկ
թուանշանները: Այդ տախտակի վրայ ի՞նչ ենք տես-
նում: Ալաք, Քանի՞ հաս: Երկաւ: Ինչով են տաքրեր-
վում դոփա իրարից: Մինը երկայն է, միւսը՝ կարձ: Մի
առ ժամանակ ուշագրութիւններ հետեւցէք մեծ սը-
լաքին: Ի՞նչ նկատեցիք: Շարժվում է, առաջ է ընթա-
նում: Փոքրն էլ շարժվում է: Բայց որն աւելի արագ է
շարժվում: Առաւատեան որ ժամին էք գալիս ուսում-
նարան Ութին: Ահա այդ միջոցին փոքր սլաքը ցոյց
է տալիս 8, իսկ մեծ սլաքը՝ դադարած է 12-ի վրա: (Կամ ժամացոյցի սլաքներով ցոյց տալ, կամ տախ-
տակի վրա նկարել): Մեր գամերը երբ են վերջանում
ամենայն օր: Այն ժամանակ փոքր ու մեծ սլաքները
ի՞նչ թուեր ցոյց կու տան: Դաք երբ էք ճաշում, ընթ-
րում, քնելու էք պատրաստվում: Այդ ժամանակ փոքր
սլաքը և այլն: Ուրեմն սլաքները ի՞նչ պաշտօն են կա-
տարում: Նոքա ցոյց են տալիս, թէ օրուայ որ ժա-
մանակն է, կամ կարձ՝ ցոյց են տալիս ժամերը: Մեծ սը-
լաքը ցոյց է տալիս բովէներ, փոքրը՝ ժամերը՝ բովէ-
ների սլաք, ժամերի սլաք: Ահա այժմ ժամացոյցը
ցոյց է տալիս ժամի ութը, իսկ այժմ՝ (սլաքը քաշելով)
ժամի 8 և 5 րոպէ, իսկ այժմ՝ ժամի 8 և 10 րոպէ և
այլն:

Երբ որ ժամացուցի սլաքները այլ ևս չեն շարժ-
վում, մենք ի՞նչ ենք ասում: Թէ ժամացոյցը կանգնել
է, ի՞նչից էք իմանում, որ կանգնել է ժամացոյցը: Այս
ճամանակից: Ասացէք, Պատի ժամացոյցն ունի մի ճօ-

«Ժամացուցիչ» աջ ու ձախ կողմէն պոքրիկ «դուռակութեան» ներկասն Եթէ Ենթուք քացանինքը լինչ կը տուհանենք մէջը, Բազմաթիւ մեծ ու փոքր ճախարակներու Անապայինինի անախարակների օրինադեմք, Թորաք մասն ձևաւատաներ ուսին, որով ճախարակներից, մէկը միամինապինդ բռնում է, այսպէս որ Եթէ ինքը շարժիկ նույնամ էլ շարժեցնում է ինչ են պառաւ ճախարակներն են քարտերի ծանրութեամբ շարժվում են, որով իրավունք էլ շարժեցնում են ալաքներու ու ճօճախակր»

Ժամացոցի մէջ մի փոքր պանդառ էր կայսերը
և այսում զանգակի ձայնը Անցեալ առարի Մեհք զանց
գակի մատիսին մի դաս ովհցանց էլ ինչ պէտք է ուզ
նհնայ զանգակը, որ ձայն հանէ Մուրճ

“ IV. Մամացոյցը՝ տեսակիներ՝ ուսիր՝ ուրդնք են պառատի, աշտարակի (քաղաքի), ծոցի, զարթուցիչ, արեգակնակի, (երեխայոց) խաղալիկը (անձերու). Դժնաբաշխութեալ և այլ ժամացոյցներ”

ՄԵՆՔ առևանք, որ ճամփարակները շարժվում են բարձրացնելու համար՝ միան սովորությունը Սլավոններն ու ճամփանակն անդամական պատճենագործությունը:

իսականեալու ճօնցնակը կ պարզները մի ուղղութեամբ
հնաշարժվուած ճախարակիները զանազան ուղղութեամբ,
մէկը գէպի աջ, միւսը քէպի ձափա ճօնանակը յետ ու
առաջ է շարժվուած, իսկ ալաքները միջտ միայն ճախից
դէպի աջնակը բնաչ գործիք գրաւէք, որ միջտ դէպի աջ է
ինապէմ կողմէքի դանալին, խցանահանը, ամէն առանկ
պատակները, երգեցիկ տոսկը, պահապանկ ինչ պը
ընալիքով զարդւուած է և այնիւ ուղարկուած է այս մաս

Քանի անգամ մուրճը զանգին դիսկուլ է, և երբ պը
ժամի 4 է: Մուրճի հարուածի միշտ պէտք է համարել
Քանի հարուած ենք լսում, երբ որ ժամի 5 է: Երբ որ
ժամի 6 է և այլն Բոլոր ժամացոյցները չեն զարկում.
ումնք զարկում են բոլոր ժամերին, միւսները նոյն
խակ էն ժամերին, կամ նաև քառորդ ժամերին: Զան-
խակի լոյսանակ ժամացոյցներից զմանք ունենում են
մի փոքր թռչուն, աքաղաղ, հոպուց և այլն: Երբ մի
որ և է ժամ լրանում է, բացվում է մի դռնակ, հոպո-
պը դուրս է պալիս և անփան հօպէհօպ է կանչում, որ-
պէ դուրս է պալիս և անփան հօպէհօպ է ցոյց տալիս: Քանի
քան որ թռացուցի թռանշանն է ցոյց տալիս: Քանի
անոնք է առ ինչում, երբ որ ժամի 12 է:

Պատի ժամացոյցը զետեղված է մի տիր մէջ։ Տուփը ժամացուցին պազտապահում է փոշուց և ճան- ժերից փամացոյցն ուսիր թռացոյցը բակաւառակ ժա- մացոյցն ուսիր մինչ ճանա մեծ և պիծքը սլաք։ Մե- ծը աւելի արագ է շարժմանը, քան փոքրը։ Սլաքները ցոյց են տալիս, թէ ո՞ո ժամանակն է կամ ո՞ո ժամն է։ Առաջնից մէկը ըստ շնորհի սլաք է, միայն՝ ժամերի սը- նոցանից մէկը ըստ շնորհի սլաք է, միայն՝ ժամերի սը- նոց։ Պատի ժամացոյցը հօճանակ ունի նա տիկ-տակ ձայն և անելով հետ ու առաջ է շարժվում ժամացուցից ձայն։ Կանելով հետ ու առաջ է շարժվում ժամացուցից կախ ընկած են երկու շրթայ ծանրութեան քարերով։ Կախ ընկած են երկու մետաղից են լինում։ Ժամա- ցոյցը շարժում է բանալիով կամ թէ ցնթան վեր բար- ցոյցը լարվում է բանալիով կամ բազմաթիւ մեծ ու ծրացնելով։ Ժամացուցի մէջ կան բազմաթիւ մեծ ու փոքր ճախարակներ։ Նոքա շարժվում են քարերի ծան-

բութիւնից: Նոքա (ճախարակները) շարժեցնում են սլաքներն ու ճօճանակը: Մի քանի ժամացոյցներն ունին փոքրիկ զանգակ և մուրճ:

ՎԼ. Այս ինչ է: Ժամացուցի տուփը: Այս թուացոյցը: Սոքա ոլաքներ են: Մի առ մի անուանեցէք ժամացուցի արտաքին՝ ժամացուցի ներքին մասերը Բոլոր մասերը մի նախադասութեամբ ձևացուցէք: Հայրդերը է գիմում ժամացուցին, իսկ մայլդր իսկ գմրւք, իսկ բանուողները և այլն:

Նկարեցէք մի ժամացոյց:

Այս որ ժամացոյցն է իիսու ճարտար շինած, որ դիւեր էւ բանի պէտք չի լինում:

(Արեւի ժամացոյցը):

Ժ Ա Մ Ա Գ Ո Ր Ծ.

Մի քանի որ առաջ գնացի ժամագործի մօտ ժամացոյց շինել տալունորա խանութում կախ տուած կայներ, մեծ և փոքր, արծաթէ և ոսկէ, ծոցի ժամացոյց միասին տարօրինակ կերպվ ազմկում էին իրանց տիկտեսնէիք, թէ երբ որ ժամերից մեկը լւացաւ, պէտք է նեցին ամէն կողմերիցնոքա այդ խանակ ժիրը ինչ ժամացոյց աւելի եռանդով էին գործակցում: Մի մեծ յետոյ ազագակում էր հօպ-հօպ, իսկ նորա կշտի միւտում, որ ժամացոյցն էլ այդշափ խինդ և ուրախ կան կարծես թէ էլ ուրիշ հոգս չուներ, բայց եթէ ճիշտ անսիալ իմաց տայ ժամանակի ընթացքը:

Խ Կ Զ Ո Ր.

Գաղափար: Մի խնձոր եմ բերել: Ո՞րտեղից է քաղած: Ծառից: Նոյն ծառի վրայ բացի խնձորից ուրիշ բան կայ բուսած: Տերեներ, ծաղիկներ, ի՞նչ կար ծառի վրայ առաջ, քան ինձոր երևալու: Ծաղիկներ: Ինչից է կազմվել խնձորը: Ծաղիկներից: Ինչպէս ենք կոչում այն բանը, ինչ որ ծաղիկներից է վոյանում: Պառագ: Ուրեմն խնձորն ինչ է: Ասացէք: ի՞ն ձ ո ր ը ի ն ո ւ պ տ ո ւ ղ է:

Կերպարանը, ի մօտոյ քննենք այս խնձորը: Ի՞նչ ձեւ ունի սա: Բոլորակի Բայց ոչ բոլորովին բոլորակ, այլ բոլորածեն է: Ասացէք: ի՞ն ձ ո ր ը ր ո ւ ո ր ա ծ է կայ պատուղ զրիթէ սորան նման է ձևացած: Կեռացը: Կեռասը քանի կողմից է ճխտած: Իսկ խնձորի համար կեռասի առենք: Երկու կողմից է ճխտած: Ո՞ր տեխնչ պիտի առենք: Երկու կողմից է ճխտած: Ո՞ր տեղում պիտի առենք: Ասացէք: ի՞ն ձ ո ր ը վ ե ր ե ի ց և ն ե ր պ ի ց է ճնշած: Արտաք ե ի ց փ ո ք ո ւ ի ն չ ն ե ր ս է ճնշած: Խնձորը վերեից և ներքեւց վոսիկներ (խորշեր) ունի:

Մասեր. Այս փոսիկի մէջ ինչ է նստած: Կ ո թ ը: Իսկ այս խորշի մէջ: Ծ ա զ կ ի թնացորդու: Դա այժմ յու այս կողմից է: Թագող խնձորին ի՞նչ է ի՞նչ վիճակումն է: Չորացել է: Ամբողջ խնձորին ի՞նչ է պատում: Կ ճ ե պ ը: Այս կարգով մենք թուեցինք խընդուած: Երկու մասերը որոնք գրակց են երևում: Ես մի ձորի բոլոր մասերը որոնք գրակց են երևում: Իսկ դուք անուան կու հատ հատ ցոյց կու տամ, իսկ դուք անուան կու: Այս կոթ է և այլն:

Ամփոփումն. ի՞ն ձ ո ր ն ու ն ի կ ո թ, ծ ա ղ ի կ, կ ճ ե պ:

Ո՞ր տեղ է նստած կոթը: Փոսիկի մէջ: Էլ ո՞ր պըտուղի վրա կոթը նստած է նոյնպէս փոսիկի մէջ: Իսկ անսիալ իմաց տայ ժամանակի ընթացքը:

թըսն ի՞նչպէս է։ Ամոցեա. զի՞նձ որովի կ ո թը կ արձ
է։ հաստ է։

Խնձորի կճեպը խորտոքորդ չէ: Հապա ինչպէս է: Ողգործ: Այս խնձորի կճեպն ի՞նչ զոյն ունի: Կանաչ: Խոկ այս կճեպը ենթին: Հապա մայս: Խարմիքու... Քայց: Կարմիք խնձորը միայն այս: Կողմից է... Կարմիքը և անշպէս է միօս կողմը: Ենթին: Այս կողմն մվ է, այսպէս ափուն կարմբացրել: Ճիշտ է, արեւ է, այդպէս ներկործել: Տա խնձորին արից ծառերը միշտ միկողմից է կարմբացնում: Դուք ժր խնձորներն աւելի էք հասանումն անրմբաթուշ խնձորները:

Ամենավայրից կամ առաջ կամ առ և առ ի
կամ առ շատ եղած ին կը առ մաս կը առ մաս իր Ակադեմիա-
թու գու կը ճեպար ուստում էք առանց կապելու գու-
մակ չունիք չէք ել կարող կարողն ինպելու բայց ա-
հա եւ կծպում իմ Հիմի Բնագետ է երկամք Ապիտակ Այս սպիտակը իննարի մ. թ. ս. ն. է որ մենք այնպէս ախորժով ուստում ենք իննար դաշնակութ կիրարից առաջ առաջ կամ մեջքից կողմից Այս ինչ է որ թափառմ է ին եւ տ-
տ եր կուտերն էլ մարդկանց պէտ ապրում են պա-
տշապարքած յարկե տակ պատ եան ի մէջ Այդ պատեանը ինչպ իսորդիկներ ունի որոնք իրարից բա-
ժանիք են ողորկե կաշուն պատերով Ամեն մի կող-
շիկ մէջ երկու կուտ կայ Ընդ ամենը քանի մի խը-
ձորի մէջ Հիմի պիտինք իննարի ներքին մասերն էլ Ա իս և պատ եան կը առ եան կը առ եր ով

Խակ թնչ գոյն ունի խնձորի միսը Սպիտ ի ո ա կո
Այժմ հմլում եմ խնձորը թնչ է ծորում Հիւթը Մսի
մէջ թնչ կայ ուրեմն Հետևապէս նաև թնչպէս է
Հիւթ ե թ ու հ իւթ ա թից ից Միսը հ ա մ ե զ է
Ամփոփութիւն խնչ ծորում միսը ո պ ի ո ա կ
Հիւթ ե զ ա ե հ ա մ ե զ է ու դուռը ու կ ա կ ա կ
Այս խնձորը երբ չի ունեցել այսպէս սկրտու

ଓଡ଼ିଆ ଲେଖକ

Գոյնը. Ծիծեռնակները մէջքը կապուտ
ական է, փորը սպիտակաւուն:

Բոյնը. Ծիծեռնակները իրանց բոյնը շինում են
կտուրի տակ կամ թէ դուրս կարկառած գերանների
տակ, իսկ արագինները կտուրի վրա: Այդ կերպով նա
աւելի լաւ է պաշտպանվում անձրևից: Յիշում էք մեր
բանաստեղծի խօսքը.

Ասդ լինիր քո բունը,
Հայրենի կառւը իտակ:

Ծիծեռնակները մարդուց չեն քաշվում: Կարծես
զգում են, որ ոչ ոք չի վկասի իրանց, այդ մտերիմ
կենդանիններին: Մանաւանդ դիւղացիք սիրում են այդ
թռչուններին և դիւղացնում են նոցա բոյն շինելու
դործը, զոր օր, մի տախտակ են աւելացնում պատին
և այլն: Բայց ծիծեռնակները շատ անդամ սոխպվում
են մերկ և հարթ պատին պնդացնել իրանց բոյնը—
Նոքա իրանց բոյնը շինում են թաց
հողից: Նոքա ճի ափից կամ առ հասարակ խոնաւա-
ցած տեղերից մի կտոր ցեխ են վիրցնում կտուցով, լաւ
կակզեցնում և պատին կպցնում են իրանց բերանի
շղիքով: Այդ ժամանակ նոքա իրանց ճիւերով պինդ
կպչում են պատին և յենիւմ են իրանց տափ վրա:
Ծիծեռնակները շատ խելօք որմնագիրներ են: Նոքա
իրանց բոյնը միայն առաւտուեն ժամերին են շինում:
Ապա որքան որ լինել են այն թողնում են չորսնա-
լու 8-ից մինչև 14 օրում աւարտում են բոյնը, որ
գնդակի ձև է սաանում: Վերեկը բոյնի կողքից մի փո-
քը ծակ են թողնում մուտքի համար: Մուտքի բաց-
ուածքը միայն այնչափ է լինում, որ ինքը ծիծեռ-
նակը հագիւ կարողանայ ներս սահել եթէ մուտքը
մեծ լինէր, այն ժամանակ աներես ճնձուկը կերթար
և մէջը առօք փառօք կը նստէր: Շատ անդամ այդպէս
էլ պատահում է, և այնուհետեւ ննար չի լինում այդ
անքաղաքավարի բոնաւորին դուրս հանել, որչափ որ

ահարեկված ծիծեռնակները ճըվճըվան և աղմուկ հանեն:
Հէնց որ բոյնը հողից շինվի, ծիծեռնակը մէջը
կրում է մազ, բուրդ և փետուր: Այդ դէպքում բոյնը
արդէն պատրաստած է լինում: Ապա նա մէջը ածում
է սպիտակ ծիւնափայլ ձուեր: Այնուհետեւ ձագեր են
դուրս գալիս, և բոյնի մէջ սկսվում է կենդանութիւն:
Հիմքի ճնողներին ինչ է մնում անելու: Ի՞նչ հրաշալի
բան է տեսնել, եթե որ ձագերն արգէն կարողանում
են իրանց զլաւինները փոքրիկ զեղին կտուցներով դուրս
հանել բոնից և ամէնքը միասին բերանը լայն բաց
են անում, որովհետեւ արդէն նկատում են, որ իրանց
ճնողներից մէկը հնուուից կտուցով ճանձ է բերում:
Այդ դէպքում ճնողները պինդ կպչում են բունին և
ձագերի բերանն են կոխում բերած ճանձը: Այսպէս
սիրով հոգս են քաշում ծիծեռնակները իրանց ձագերի
համար, ինչպէս ձեր ճնողները ձեզ համար:

Զագերը առաջ մերկ են լինում, յետոյ փետուր-
ներով են ծածկվում: Նոքա այս ժամանակից քէչ-քիչ
սովորում են բնից դուրս գալ, թոչել, բայց խկոյն
վերադառնում են իրանց բոյնը, որովհետեւ զեռ կաղ-
զուրփած չեն լինում բաւականաչափ և շուտ յոգնում
են: Հետզհետէ ճնողները պակասեցնում են նոցա կե-
րակուր մատակարարելու հոգսը, այնպէս որ այնուհե-
տեւ ձագերն իրանք հետամուտ են լինում, որ անձամբ
բռնին ճանձեր ու մժղուկներ, իրանց պարէնը հայթայ-
թելու համար:

Մելոնիք. Ծիծեռնակը զրեթէ օրնիբուն որսալով
է զրաղված: Նոքա վնասածն է ճանձ, մժղուկ, պզտիկ
միջատ: Հէնց որ օդի մէջ մի ճանձ կամ մոծակ է նկա-
տում, թուած տեղով ծիծեռնակն իւր կտուցը լայն բաց
է անում—և խեղճ զոհը կտուցի մէջ է անցայտանում:
Ուրեմն ծիծեռնակն իւր կերպուրը զետնի վրա չի
որոնում: Հապա ինչպէս է բռնում իւր զոհերին: Ասա-
որոնում: Հապա ինչպէս է բռնում իւր զոհերին: Ասա-

քում բանում է ճանճեր, մժեղներ, բգեզներ, Անձեւելուց առաջ մժղուկների բայլը ջրի երեսին է պար զալիս. Այդ ժամանակ ծիծենակներն էլ ուրի են լինում: — Խոկ եթէ եղանակը հանգիստ է և ոլարզ, այն ժամանակ մժղուկները դէպի վեր են բարձրանում օդում. Խոկ ծիծենակներն էլ ինչ են անում:

Յատկութիւնները, ձանձերն ու մժղուկները ձանձրալի արարածներ են: Հապա ինչպէս կաշնոք ծիծենակներին, որ նորա հէնց այդ ձանձրալի կինդանիներին են ոչչացնում: Ասացէք. Ծիծ եռն ակն է թը մարդու համար օգտաւու է տի թու չու նշն եր են:

Ճատ քիչ կը պատահի, որ ծիծենակներ երկար ժամանակ մի անգում նատած մնայ. Նա զրեթէ անզագար շարժման մէջ է: Ծիծ եռն ակը տշշ իւս ոյժ, կայտառ կենադանի է:

Ծիծենակներ մարդու հետ մի յարկի տակ է ապրում, բայց շատ էլ նորան չի վատահանում մօտենալ: Ծիծ եռն ակը տնըն առեւ, վախ կոտ կենադանի է:

Չայելք. Ծիծենակներ Երգել ես կարող է: Բայց նորա երգը միակերպ պարզ է, մենք այն չենք էլ անուշանում երզ, այլ ասում ենք, թէ ծիծենակներ ճշում, ճուղում, ճուղում, էլ երբ որ բազմաթիւ ծիծենակներ ճրվագում են, այնպէս է թւում իրեն թէ նորա իրար զաղակրատում, խօսք ու զրից են անում, և ով զիտէ, թէ ինչ անդիկութիւններ են իրարից հարցնում, կամ իրանց թօնիւրի, կամ իրանց ձագերի, կամ թէ տտիս շատ երբ մասին: Ծիծ եռն ակը շապէս ճրվագում:

Ճիւ-ճիւ, ճիւ-ճիւ, ծիծենակներ
Քո հայրն ինչ քո մայրն ինչ
Բաշխութ հատի աշերն ինչինչ

Չուղի թոշովն. Զմեռն ինչ պէտք է անեն ծիծենակները: — Աշունքին արդէն ծիծենակների բանը դժուարանում է: Մօտենում է ցրտաշունչ ձմեռը, երբ որ արտերը պէտք է մերկանան, և ամայանան, երբ որ մժղուկները, ձանձերը, բգեզները և այլ միջատները կամ պէտք է սատկոտեն, և կամ ծակերը սոզոսկին ձմեռուայ գունը մտնելու համար, — ահա այդ ժամանակ ծիծենակները տեղից շարժվում է և արագ-արագ հետանում է: Եւ մարզը, որ նորան սիրել և փայտայել էր, շուարած հարցնում է:

Քէպի ուր ինձ ասա,
Թոշում ես այդպէս արագ:

Բայց ծիծենակները հատ-հատ չեն հեռանում, մէկը միւսից յետոյ, այլ ամէնքը միատեղ վեր են կենում և չուում են հեռու աշխարհներ: Խոկ ինչ են անում նորա, ձանապարհ ընկնելուց առաջ: Ամէն կողմերից զալիս են ժողովում են մի տեղ, կամ տանիքի կամ աշտարակի վրա: Այդ տեղերում շատ անգամ հարիւրաւը ծիծենակներ են երեւում մէկ մէկու կշտին նատած: Սակայն նորա այնպէս հանգիստ և լուս չեն նատած, ինչպէս այժմ զուք: Եւ ինչի՞ մասին են շատափօսում: Թիրես իրանց ճամբի մասին: Յանկարծ մին էլ ահանես նորա վեր են կենում և օր ու զիշեր անընդհատ սաւանում են հեռու, զէպի հարաւ, զէպի արք երկիրները: Ասացէք. Աշունք ինչ ծիծ եռն ակն երը զա զ թում են տաք եր կի բն անքը նոր ա զա զ թում թու չուն եր են: Ճնազուկն այդ ժամանակ մնամ է իր տեղը: Ճնազուկը հաստատարնակ է:

Մինչդեռ մեղանում ցրտում է, Ճիւն եւ զալիս, եղանակը փոթորկում է, ծիծենակներն այն տեղ խրանքում են տաք արեգակի տակ, ծաղկող ծառերի շուրջ, ուրախ ապրում ու խնդում են, որովհետեւ առաջառաջ ձանձեր, մժղուկներ և այլ միջատներ են գտնում: Բայց

նոքա այնտեղ, տաք երկրում ապրում են հիւրերի պէս
առ ժամանակ, բոյներ չեն շինում և ձաղեր չեն հանում,
Հէսց որ գարնան արեի ճառագայթները մեր ձմեռուայ
խստութիւնը հալածէ, այդ բանը հեռուից ծիծեռնակն
էլ նկատում է և գարունքին վերադառնում է մեզ մօտ
Այդ պատճառով մենք նոցա անուանում ենք «գարնան
սիրուն թունակ», Ո՞հ, ինչպէս ուրախանում ենք, երբ
որ տեսնում ենք նոցա գալուստը. «մեր ծիծեռնակները
եկել են, մեր ծիծեռնակները եկել են» կանչելով, իրար
շնորհաւորում ենք: Զարմանալին այն է, որ ծիծեռնակ-
ների իրանանչեր գոյգը իւր հին բոյն է փնտում
և գոնում: Նոքա անջուշտ լաւ յիշողութիւն պէտք է
ունենան:

ԾԻԾԵՐՆԱԿՆ ԻՆՉԵՐ Է ՊԱՏՄՈՒՄ.

Երբ որ հրաժեշտ տուի, երբ որ հրաժեշտ տուի,
Ամբարն ու շտեմարանները լեցուն էին, լեցուն էին.
Երբ որ ճամբից դարձայ, երբ որ ճամբից դարձայ,
Ել ոչինչ չկար, ել ոչինչ չկար, կերել պըծել էին,

ԱՇ ԵՒ ՇԻԲ.

Մեր տներում այս երկու փոշիները շատ ենք
գործածում. գիտէք ինչ են սոքա: Փորձեցէք համը:
Մէկը աղ է, միւսը՝ շիր: Երկուուն էլ լուծենք մի մի
բաժակ ջրի մէջ, և գրով նշանակնեք, թէ ո՞րս է աղը,
և որը՝ շիր: Այդ փոշիներից քիչ քիչ թափում եմ բա-
ժակների մէջ, գդալով խառնում եմ. էլի և էլի աւե-
լացնում եմ սիւթը ջրի մէջ: Ահա վերջացաւ, էլ չի
լուծվում, ջուրը կտացաւ, տակը մրուր է նստում:
Հեղուկները այս բաժակից ածում եմ նոր բաժակնե-
րում, բայց այնպէս որ մրուրը հետը չգնայ:

ՊԱՄԵԿՑԷՔ ԲՈՂՈՐԸ, ԻՆՉ ՈՐ ՄԻՍԱՔ:

Աղաջուրը թափում եմ երկաթէ թ ա վ ա յ ի (տա-
պակի) մէջ, որ և դնում եմ օճախի վրա (կամ վառարա-
նի մէջ): Տաքութիւնից բոլոր ջուրը քիչ քիչ գոլորշի
է գառնում և դէպի վեր է ցնդում, իսկ աղը մնում է
թափայի մէջ, մասր հատիկների նման: Ահա մի ոսպ-
նեակ (ոսպնաձև խոշորացնող ապակի, լուպապա): ե-
կէք, սորանով նայեցէք այդ հատիկներին: Ի՞նչ էք
տեսնում: Կանոնաւոր մանր խորանարդներ: Հեղուկից
գոյացած այդպիսի անկիւնաւոր բազմանիստ կազմու-
թիւնը կոչվում է բիւրեղը թորա- թիւնը է:

Մինչ որ աղաջուրը գոլորշիանայ օճախի վրա,
տեսնենք թէ շրի հետ ինչ պիսաի անենք: Մի կտոր
չծեծած շրի կապում եմ թելով և այն իշեցնում եմ
շրի բաժակի մէջ: Այժմ այն թելը միւս ծայրով կա-
պում եմ փայտի կտորի վրա, իսկ փայտիկը բաժակի
պուռնգների վրայ այնպէս եմ զնում, որ թելով կա-
պած շրի կտորը բաժակի մէջ տեղը կախ ընկած մնայ:
Հիմի պէտք է համբերութեամբ սպասենք մինչև վաղը,
որ տեսնենք, թէ շրի շրի հետ ինչ կը պատահի:

Ժամանակ ժամանակ նայելով, մենք տեսնում
ենք, որ կախ արած շրի կտորը սկսում է աճել, մե-
ծանալ, մինչև որ վերջապէս մի բարդ կոյտ է գառ-
նում, բիւրեղների մի սիրուն կոյտ: Շրի բիւրեղը աղի
բիւրեղից աւելի խոշոր է, Շրի բիւրեղը խորանարդա-
ձև չէ (ութանիստ է):

Կ Ա Տ Ո Ւ Ի.

I. և II. յայտնի է:

III. Մենք առաջ կը խօսենք մարմնի ձեւի

և ծածկոյթի մասին։ Մարմինն աւելի ճգված է։ այդ տեսնում ենք այն համամատութից, որ հաստութեան համեմատութեամբ մարմինն աւելի երկայն է և համատափած է կարճ ուսների վրա։ Կատուն իւր գլուխը բռնում է մարմինի երկանութեան ուղղութեամբ (ոչ դէպի վեր), Նորա գուխը բռնորածն է, ագին գրեթե այսչափ, որչափ որ նացած մարմինն է։ Նա ունի փափուկ մուշտակ, պահտակ, ոն, խայտարդիք (չալ) կամ մոխրագոյն։

Շարժումն. Կատուն կարող է քայլել, վազել, ոստնել և մագլցել, նորա քայլը կամացուկ, անլսին է ինչու, եթէ շօշափինք նորա ոտք, կը տեսնենք, որ այն (իսկապէս մատերը) տակից կակուղ են։ Նա հանգարտ չի վազում, այլ աւելի ոստնելով։ Երբ որ տնից դուրս է գալիս և ուզում է փողոցն անցնել, նա պկանջները սրելով՝ նախ աջ ու ձախ է շրջանայում, և եթէ մի շուն կամ ուրիշ վահանգաւոր բան չնկատէ ոչ ոչ կողմից, մեծ մեծ ոստիններով պանում է իւր նպատակին։

Մի լաւ նայիր կատուն, երբ որ նա աթորի կամ թախտի մքա կիսախորփ աչքերով հանդիսաւ մրմրում է։ Կարծես թէ նա ոտքեր չունի, որ այսպէս կուշ եկած և կծկված իւր մարմին տակ է պահում։ Բայց յետոյ երբ որ վեր կենակ և մէջքը կուզ անելով ճգճգվի, դու կը տեսնես, որ ոտքերը, մաստամագ եղին ոտքերը, կարողանում է բաւական երկարացնել։ Երբ որ իւր կծկված տեղից լանկա ը թէ եղի ոտքերը ամբողջ երկայսութեամբ ճղակ, աղիքանը բաւական է, որ նորա մարմինը դէպի առաջ սլանայ կամ դէպի միք ոտքում, նայելով, թէ ինքը ինչպէս է կամեցել։ Այդ միջոցին առջնի ոտքերը գործ է ածում միմիւնյն յենվելու համար։ Նա ուրեմն առաւելագոյն եղի ոտներով է վազգում։

Կատուն կարող է նաև մագլցել և եթէ զոր օր, մի շնից հալածի, կատուն միշտակրթում վեր է մագլցում առդի, առախտակի, ժառի կամ ուրիշ բանի

վրա; և մինչև որ հալածողը ներքմն ապարդիւն կերպով կրակ է կտրվում, նա վերել կծկված և կիսափակ աշքերով ապահով նստում է, ամեննելին ուշ չդարձնելով թըշնամու կատաղութեան վրա։ Նա կարողանում է այդպէս մագլցել, որովհետև ոտքերի վրա ունի սուր, կեր մագիլներ, ինչպէս որ մեր մատների վրա եղունգներ կան — որ մենք կտրում մաքրում ենք, — այսպէս էլ կատունի համապատասխան յօդերում եղունգներ կան, որոնք սակայն ոչ թէ տափակ, այլ բոլորակ են ասղի կամ միւր պէս, և կիսաշրջան կեռ են շատ սուր ծայրով, որովհետև նա չի կարում և մաքրում իւր եղունգը, այլ աւելի զգուշանում է, որ ըլինի թէ բթացնէ։ Կատուն իւր մագիլները ներս քաշած է պահում։ Այս բանը մենք կարող ենք շօշափիմամբ իմանալ և ոչ թէ տեսնել, որովհետև մագիլները մազերի տակ թագնված են, Բայց տեղն եկած ժամանակ, նա կարող է իւր թաթի սուր տուր ասելները դուրս ցցել և յայտնապէս ցոյց տալ։ Երբ որ պէտք չունենայ, կատուն դարձեալ շուապում չ իւր տեղը պահել մագիլները։

VI. Ծովնը այսպէս չի ճգված երկայնութեամբ, ինչպէս կատուն, ուստի նորա ոտները կարծ չեն երեւում։ Ծովնն իւր գլուխը դէպի վեր է բռնում, իսկ կատուն։ Լանդուն իւր մագիլները մագիլների պէս դէպի ներս ծոված լինէին (օրինակով ցոյց տալ). — **Մինք կատունի ման գալը չեն լսում.** դու ինչ ես անում, երբ որ ուզում ես կամաց քալել։ — Երբ որ կատուն իւր կրծկված տեղից յանկարծ նդի ոտները ամբողջովով ճշգում է և ինքը արագ վեր է թռչում, միայն յինվիտու համար զործածելով առջմի ոտները, նա աւելի որ կենդանուն է յիշեցնում այդ տեսակ շարժմամբ։ Համեմատիր ոստնող գորտին։ — Եթէ կատուն շան պէս իւր մագիլները միշտ ցցված թողներ, ինչ վր պատա-

հէր, և այնուհետև մագիլները ի՞նչ բանի էլ պէտք չէին գայ:

Վ. Կատուն ուրեմն կամաց անշղուկ ման է զալիս, հանգիստ քայլում է իւր փափուկ ոտներով, վազելու ժամանակ էլ մագիլները թագցրած է պահում: Կարող է վազել բոլոր չորս ոտներով, կարող է ոստնուլ—եղի երկայն ոտքով, կարող է մագլցել—սուր մագիլներով:

Որպէս զի պատսպարվի, ապահովվի, վտանգից փրկվի, կատուն վազում և մագլցում է: Ուրեմն նախը ոտներն ու մագիլները գործ է ածում իւր գոյութիւնը պահպանելու համար: Նոյն իսկ եթէ թշնամին երես առ երես մերձ լինի, նա դարձեալ իւր ոտների թաթալօշներով է իրան պաշտպանում: Յարձակելիս ևս դարձեալ նոյն առաւելութիւնները (սուր մագիլները, փափուկ ոտքը, կամացուկ քալուածքը) կարող է գործ դնել:

III. Սնունդ. Կատուն սիրում է ուտել մկներին, թոշուններին և ուրիշ մանր կենդանիներին: Ի՞նչպէս է բռնում դոցա: Միշտ կարելի է տեսնել հետեւեալ տեսարանը: Ծառի տակը մի ծիտ կուտ է փնտուում: Տախտակների տակից մի կատու յամբաքայլ գուրս է գալիս: Գետնին կիպ կպած, փորսող, ցցուած մազերով, պոչը ետեկից ձիգ բռնած—միայն պոչի ծայրը խաղացնելով, այն ևս գրեթէ անտեսանելի կերպով, մեծ աչքերը անթարթ սևեռելով միամիտ ոստոստող զոհի վրա,—ահա այսպէս ամենայն զգուշութեամբ ոտները մէկ մէկ առաջ է քաշում իւր մարմնի տակից, և թէպէտ շտապելով բայց շշտակի մերձենում է իւր որսին, որ ոչինչ կասկած չունենալով այդպէս անշարժ թուած կատուից, նոյն իսկ կարևորութիւն չտալով իւր ընկերների աղմուկին, որոնք ծառի սաղարթից իրան զգուշացնում են վերահաս վտանգից, անհոգ շարունակում է փնտուել իւր կեսիքը: Յանկարծ կատուն

մի ամենի ոստիւն է անուում: Թոչունը նոր փորձում է թըռչել, բայց արգէն ուշ է: կատուն իր առջեկի մագիլներով պինդ բանում է նորան: անմիջապէս բերանի մէջ է առնեում և չնայելով նորա աղիողորմ ձէերին՝ ծառի տակից փախցնում է այդ սքանչելի և համեղ պատառը:

Գալով մկներին, նորա ցերեկը կորչում են: Նոցա պէտք է անշուշտ գիշեր ժամանակ որսալ: Բայց այդ դէպքում կատուին ի՞նչ պիտի օգնէ ոստնելու ճարտարութիւնը և մագիլների սրութիւնը, եթէ մթութեան մէջ չկարողանայ նշմարել մկներին: Սակայն յայտնի է, որ կատուն մութ տեղը շատ լաւ է տեսնում: Նորա աչքերը մեզ պէս ունին աչքի օզակ, բայց այդ տեղի բացուածքը բոլորակ չէ: Կատուի բիբը երկայնացած է, որ երեմն լոկ իրբ մի բարակ գիծ է երկում, վերկից ներքե ուղղութեամբ: Սակայն հէնց որ լուսի սաստկութիւնը աչքից հեռանայ՝ այդ գիծը կը լայնանայ, այն ևս քանի աւելի լոյսը պակասի, այնքան ձուածե գիծը հետղինետէ աւելի կը լայնանայ, մինչեւ որ վերջապէս գրեթէ աչքի չափ կատարեալ բոլորակ կատնայ: Ուրեմն սաստիկ լուսի տակ՝ բիբը ներ է, իոկ թոյլ լուսի տակ՝ բիբը խիստ լայնացած: Այսպիսի բրով կատուն մթութեան մէջ մեղանից աւելի լաւ է տեսնում:

Բայց կատուն աչքով միայն մօտիկ որսը կարող է նկատել, հեռաւորը պէտք է լսողութեամբ իմանայ, Փորձիր եղունգներովզ այնպէս աղմկել իրերի թէ մուկը կրծում է, իսկոյն կատուն ականջները կը սրէ և նորա աչքերը կը վառվին: նա նոյն իսկ ուղղութիւնը կիմանայ, որ կողմից որ աղմուկն է լսվում: Նորա ականջները խիստ շարժուն են: Նորա ևս ուստեւ իքը այնպէս սուր չէ, ինչպէս լողութիւնը եթէ նորան մի կտոր միս ձգեն այնպէս, որ այն ընկնի նորա ամանի պուռնպի տակ և անմիջապէս

Նկատելի չդառնայ նորա համար, նա շուշրած կմկնէ հոսոտել զանազան կողմերում, մինչև որ ցանկալի պատճռը գտնէ:—Այսու հանդերձ նորա գիշերայած կիսցաղավարութեան համար ոչ նուազ օգտաւէտ է մի ուրիշ օժանդակութիւնը, այն է ն ո ր ա բ ի զ բ ի զ բ ե ի բ ը (ակերկաշաքը). եթէ նորա բեխի խոզանաւուել կամցուկ շօշափենք կամ փշնք վերան, կատուն իսկոյն կը ցնցէ գլուխը, իսկ եթէ նոյն անհանգստութիւնը շարունակվի, նա մինչև անգամ իւր պառկած տեղը կը թողնէ և կը հեռանայ, որ ապացոյց է, թէ այդ զգայարանը շատ դիւրազգաց է: իտոնք մթութեան մէջ կատուի համար ընտիր շօշափենք գագաթ կամ գագաթ անգամ առաջ գտնել և որոշել:

Կատուի կերակուր են ոչ միայն թռչնիկներն ու մկները, այլ և ամէն տեսակ միս, կաթ, եփած բանջար, հաց: Բայց աւելի գերադասում է կենդանական կերակուրը, ուր միսը, կաշին, ոսկորները անխտիր լափում է, և մենք շատ անգամ լսում ենք, ինչպէս նա ոսկորներ է կրծոտում: Ուրեմն նա պէտք է օժտված լինի ուժով կ ծ ե լ ու կարողութեամբ: Եթէ զիտենք նորա ըերանը, երբ որ նա յորանջում է, կամ եթէ նրա շրթունքները փոքր ինչ բանանք, մենք կտեսնենք իւրաքանչիւր կողմից վերև և ներքև մի մի երկայն ատամ: Այդ ատամները աւելի լաւ են նշմարվում այս գանգի վրա: *)

Այս երկայն սուր, փոքր ինչ ծռած ատամները կողմանական (պատառող) ատամներ են կամ ժանիքներ։ Երեսակացեցք, որ կատուն մի մուկ ունի իւր ատամ-

*) Հետամուռ ուսուցիչը չպէտք է դժուարանայ մի երկու գանգեր (կատուի, շան, ճագարի, ոչխարի և խլուրդի) ձեռք բերել, որ խիստ կարեւը են բնագիտական դասերի համար, Գանգերը պէտք է լինեն կէծ ջրի մէջ և փած և մսից ու ուղեղիկ մարրած:

ների մէջ, այս ժամանակ այս ժանիքները՝ որպէս երկու սուր զաշոյներ՝ պիտի խրվեն գոհի մարմնի մէջ, պիհնդ պահեն նորան և անմիջապէս շնչառապառ անեն:

IV. Ինչու համար շունը կատուի պէս հեշտութեամբ չպիտի կառողանայ բռնել թռչնակին։ Կրկնիր կատուն ինչպէս է բռնում իւր...—Կատուի աչքը լաւ յարմարեցրած է մթութեան համար։ Իսկ մէրը... Երբ և իցէ փորձել էք պայծառ լուսաւորված գաւթից՝ յանկարծ իջնել մութը նկուղի մէջ. այդ տեղ ձեր աշքը կարողանեմ է բան որոշել։ Իսկ կատուն ամենայն ինչ լաւ կը տեսնէ, Կրկնիր կատուի ըրի նկարագրութիւնը... ուրեմն նորա բիբը շուտ չի յոզնում և դիւրազգաց է մնում շարունակ։ Եկէք, երկ-երկու կանգնեցէք լուսի առաջ (կամ գնամաք գուրալը) և այնպէս զննեցէք միմեանց բիբը, այնպէս որ երկուսից մէկը երեսը ճիշդ լուսի դէմ բռնած ունենայ, իսկ միւսը՝ լուսից շրջած կամ մէկուսացած՝ իւր աչքերը ձեռքերով ստուերի տակ պահէ։ Այդպէս հեշտ է նկատել ըրի մեծութեան փոխութիւնը, այսինքն լուսի ներդործութիւնը։ Այսուհետեւ զոյց մանուկները իրանց գերերը փոփոխում են, որպէս զի ամէնքն էլ կարողանան զննել ինչ որ հարկաւոր է։—Կատուն բեկինը կարողանում է շօշափել մթութեան առարկաները։ Դու ինչով ևս շօշափում են, որպէս զի ամէնքն էլ կարողանան զննել ինչ որ հարկաւոր է։—Կատուն բեկինը ուների կազմուտուի վիճակը, եթէ փոխանակ իւր ոտների կազմութեան գառան ոտների պէս կազմութիւն ունենար. նա դարձեալ կը կարողանած մուկ բռնել կամ միւս գործերը կատարել։

V. Կատուն կալող է միներ բռնել, և այդ բանին
մեծապէս օժանդակում է այն հանգամանքը, որ նա
ունի սուր կերպով լսող ականջներ և մթութեան յար-
մարեցրած աչքեր. այլ և նա կարող է ճանապարհին
արգելող առարկաները շօշափել: Նա կարող է սողու-
արգելող առարկաները շօշափել: Նա կարող է սողու-
արգելող առարկաները շօշափել: Անչ կարող է մար-
կել, մագլցել, ոստնուու (ինչո՞վ) և բռնել փոքր անա-

սունները իւր սուր, դուրս ցցվող մագիլներով։ Նա կարող է նոցա պահել պինդ բռնած և սատակացնել—որովհետեւ երկայն ժանիքներ ունի։—Մենք ինչ գործարաններ և զգայարաններ յիշատակեցնոք։ Կատուն այդ զէնքերը դործ է ածում

1. վասնգից ազատվելու,
2. թշնամու դէմ պաշտպանվելու,
3. կերակրվելու համար։

III. Հոգեկան կեանքը. Կատուն համարվում է նենգ Այն, նա մարդուն այնպէս հաւատարմութեամբ չի ուղեկցում, ինչպէս շունը. նա մեծ մասով տանն է մընում, երբեմ կը պատահի, որ պարտիզում, զաշտում փոքր ինչ հետեւ իւր տան տիրոջ. բայց փողոցում դուրս գալ նորա հետ չի համարձակվում. Ինչու—Նա ընտանիքի անդամներին ճանաչում է։ Պատահում է, որ մի տարեկան երեխան պոչից բռնած նորան բաշքը։ Նա թերեւ մընույ, գուցէ իւր փափուկ թաթը մանուկի ձեռքին դիպցնէ, բայց դուռար թէ չանգուէ։ Տան մէջ երբեմ գեղձանիկի վանդուկը պատուհանի մօտ կախ տուած է լինում. ընտանեցրած փիսօն եթէ և շատ անգամ գայ առջել նստի և դիտէ, բայց հազիւ թէ փորձի թռչնակին դուրս քաշել վանդակից։—Շատ անգամ այնպէս է բարեկամանում տանու շան հետ, որ նորա միասին լակում են մի և նոյն ամանից։ Սկզբում փոքր լակուը զայրանում է, որ կատուիկն էլ մօտենում է ամասին. բայց կատուն մեծահոգութեամբ եղ է քաշվում, մինչեւ որ զայրացողը կշատանայ։—Եւ չկարծէք, թէ այսպիսի կատուն վախեցող ծոյլերից մէկն է. ոչ, դա շատ լաւ կարողանում է շների հետ փառաւրութեամբ պատերազմել և տան մէջ կարել մասը ու խոշոր մինչերի իզն ու թողք։—Բայց ի հարկէ նոցա քոյրերից ոմանք արդարի խար-

դախ և նենգաւոր են։ Ուրեմն կատուն կարող է ընտանենալ, բայց շատ անգամ նաև վայրենացած մնալ։ Կատունները մաքրութիւն են սիրում. նոցա մաքրասիրութիւնն արգէն առակ է դարձել։ Խոկ եթէ կատուն աղտոտ է, այդ նշան կը լինի, որ տանտիկինը անհոգութեամբ չի վարժեցրել նորան բարի սովորութիւններին։ Թերեւ աւելի իրաւամբ նորան կոչել կարելի լինի անգութեամբ իւր աւելի գործակի որովհետեւնա բռնած մկան չարաչար տանջում է սատակեցնելուց առաջ։ Սակայն մը կարող է պնդել, որ նորան աւելի զուարձացնում է մկան չարչարանքը, քան թէ նորա հետ խաղալ ը։ Ասած է. կատուի հարսանիքը մկան հոգեհանգիստ է։ Վասնգի ժամանակ կատուն անվեհեր է և քաջութեամբ է պաշտպանվում։ Եթէ նա չկարողանաց շան ձանկից փախէլ, նա փորձում է մի աթոռակի տակ, մի անկեան մէջ կամ պատին կպած մէջքը պաշտպանել և այսուհետեւ այստեղից արիւնլուայ ապտակներ է տալիս շանը, կամ նոյն խոկ շների ոհմակին, այնպէս որ այդպիսի ճակատամարտից ազատված շունը այլ շի համարձակի այսուհետեւ երեալ կատուի զաւթում։—Ի դէպ պէտք է և այն յիշատակել, որ զարմանալի կերպով նոյն կատուն հաւից այնպէս է վախենում և փախչում նորա տուած խրատներից, ինչ պէս որ իւր սաստերից՝ շունը, և այսուհետեւ պարտութիւն ստացած կատուն գլխիկոր այլ ևս չի փորձում նոյն հաւի ճուտերին վնաս հասցնել։— Փոխանակ IV. և V. աստիճաններին լոկ միայն կրկնել տալ կապով և ոճով։

III. Ծնտանեկան կեանքը. Կատուն ցկնում է 4—5 ձագ, որոնց գորովալից խնամքով է պահում։ Նա անդադար նոցա լզում և մաքրում է և տեղից տեղ մինչեւ մասն է ածում, մինչեւ որ նոցա համար հանրերանով մասն է ածում, մինչեւ որ նոցա համար գիստ օթեան գանձ, այնպէս որ շատ անգամ բերում

մանուկների անկողնումն է հանգստացնում նոցա:—
Եթէ այդ ձագերից մի երկուսին փախցնեն, նա ան-
հանգիստ դէս ու դէն է ընկնում մլաւելով. հարկաւ
նա չի կարող համարել 1, 2, 3, 4, 5, բայց երբ որ
ձագերից մէկը պակասի, այդ նա զգում և խմանում է,
ինչպէս այն մանուկը, որ բազմագոյն դնտակներ ու-
նենալով, հասկանում է, թէ երբ է պակասում կարմիր
գնտակը, երբ կապոյալ և երբ միւսները:—Երբ որ
ձագերը մեծանան, ծնողից գաստիարակութիւն են
ստանում, սկզբից ի հարկէ խաղի ձևով, յետոյ մայրը
բռնած որսը բերում է ձագերին և նայում է միայն,
որ նոցա ճանկերից այլ ևս չփախչի: Վերջապէս այդ
խաղալիկ որսը միասին լափում են: Եթէ ձագը՝ խաղը
վերջանալուց առաջ ուզենայ համեղ ինչոյքից իւր բա-
ժինը ճաշակել, մայրը այդ բաժնի փոխարէն նորան
տաք տաք ապահնենք է ընծայում:—Կատուներից ու-
մանք բռնում են առնէտներ (մեծ մկներ), միւսները
այդպիսիներից փախչում են: Երկի ձագերի ստացած
տարբեր գաստիարակութիւնից է կախված այս երե-
ւոյթը:

Փոխանակ 14. և 15. աստիճանների նոյնպէս
կըկնել տալ:

Միանու, միանու, մլաւան,
ի՞նչ փափուկ է այս թաթղ,
ի՞նչ սիրուն է այս զունչղ,
Տրտինդներդ հրաշալի...
Վայ... էս ի՞նչ է, գարշելի,
Մասս ի՞նչու չանգուցիր.

Էյ կատուներ, չալ կատուներ,
Ունիք լաւ լաւ փեշակ հունար,—
Հապա ստացեք ճիշդ անուններ.
Քո անունդ է Թաւիշ-մորթի,
Նը՛ անունը՝ Սուս-փուս-փորսոր
Այս մէկինը՝ Մկան-դահիճ,
Քեղ էլ կասենք Պնակ-լզող.

Ահա այսպէս տարիք առան,
Շէնք ու չնորհով լաւ մեծացան:
Թաւիշ-մորթին փափուկ բազմեց,
Մկան-դահիճն նկուղ զնաց,
Սուս-փուս-փորսորն ամբար փալեց,
Պնակ-լզողն խոհանոցում
Հանգիստ չտուեց իսեղճ աղախնուն:

ԱՊ—ՅՈՒՆ—ՍԵ—ՆՈՅ.

I. Այսպիսի խժաձայն բառ զուք չէիք լսել: Սա
մի առհղծուած, մի հանելուկ է, որ զուք պէտք է սո-
վորէք լուծել: Սա մի քանի ամիսների անուն է:

II. Արգեօք գտաք,թէ յատկապէս որ ամիսների
անուն է այդ «Ապ-յուն-սե-նոյ»: Կարգով ասացէք մեր
բոլոր ամիսների անունները:—Այդ ամիսներից իւրա-
քանչիւրը քանի՞ օր ունի:—Այդ շատ խառը բան է,
որ այսօր պիտք է պարզենք և մաքներումս պահենք:

III. Նախ տեսնենք, թէ որ ամիսը քանի օր ու-
նի: Նոքա ամէնքը հաւասար թուով օրեր չունին: Նո-
նից մէկն ունի 28 օր, իսկ երրենն 29 օր: Այդ փեր-
ցանից մէկն ունի 28 օր, իսկ երրենն 29 օր: Այդ փեր-
ցանից մէկն ունի 28 օր, իսկ երրենն 29 օր: Այս է շփոթն
բայց թէ որոնք 30 և որոնք 31—ահա այս է շփոթն
ու դժուարը: Դուք ինձ կարգով ասացէք ամիսները,
ևս կը գրեմ այն անունները գրատախտակի վրա և
իսկ ես կը գրեմ այն անունները գրատախտակի վրա և
իւրաքանչիւրի կշտին կը նշանակեմ նորա օրերի թիւը:

Յանուար	— 31
Փերբուար	— 28 (29)
Մարտ	— 31

*) Վենետիկի միաթարեաններին հետեւով փոխանակ «յուն-
վար», «փետրվար» ասելու, այսուղ զորդ ենք ածում—«յանուար»,
վար», «փետրվար» ասելու, այսուղ զորդ ենք: Ուով առաջին ամիսն ու
«փերբուար», որ ի հարկէ աւելի ճիշդ է: Ուով առաջին ամիսն ու
յունիսը ել չեն շփոթիլ, որովհետև մէկն վանկը կը լինի «յան»,
իսկ միւսինը՝ «յուն»:

Ապրիլ	—	30
Մայիս	— 31	
Յունիս	—	30
Յուլիս	— 31	
Օգոստոս	— 31	
Սեպտեմբեր	—	30
Հոկտեմբեր	— 31	
Նոյեմբեր	—	30
Դեկտեմբեր	— 31	

Ահա տեսնում ենք, որ միայն չորս ամիսները
30-ական օր ունին, որոնք Այդ էլ գրենք առանձին:
Դոքա են:

ապրիլ յունիս, սեպտեմբեր
ապ — յուն — սե — նոյ

Այդ չորս ամիսների առաջին վանկերից կազմում
ենք մեր փնտառած առեղծուած բառը, այսինքն՝ «ապ-
յուն-սե-նոյ»։ Այս ամիսները, որոնք այս առեղծուածի
մէջ ակնարկված չեն, ամէնքը 31-ական օր ունին, բա-
ցի փերուարից: Հիմի փորձով տեսնենք, թէ այդ օ-
ժանդակութեամբ ինչպէս է հեշտանում մեր ծանօթու-
թիւնը իւրաքանչիւր ամսուայ քանակութեան վերա-
րկրմամբ: Քանի օր ունի յուլիսը: Ի՞նչու: Քանի օր
ունի մարտը... սեպտեմբերը... գեկտեմբերը, մայիսը
և այն: Ի՞նչու:

IV. «Ապ-յուն-սե-նոյ» առեղծուածով միայն մէնք
կարող ենք իմանալ ամիսների օրուայ քանակը, օրուայ
որքանութիւնը: Իսկ հասարակ ժողովուրդը ուրիշ նշա-
նով է իմանում այդ բանը: Նա թէպէտ ձեզ պէս ու-
սում չի ստացել, բայց իւր առողջադատութեամբ նկա-
տել է, որ մեր ամիսների մէջ օրերի քանակը խառ-
նակ կերպով չեն յաջորդում իրար, այլ կարծես մի
կարգ են պահպանում: Ես դարձեալ ձեր առաջ ամիս-
ները կը գրեմ իրանց օրական քանակներով, որպէս
զի իմանանք, թէ ի՞նչ կարգ կայ նոցա մէջ:

Յ.	— 31
Փ.	— (30)
Մ.	— 31
Ա.	— 30
Մ.	— 31
Յ.	— 30
Զ.	— 31
Օ.	— 31
Ո.	— 30
Հ.	— 31
Ե.	— 30
Դ.	— 31

Այս տախտակից իրօք այնպէս է երկում, իրքի
թէ ամէն մի 31-ից յետոյ գալիս է 30. իսկապէս
միայն մի տեղ այդ կարգը խանգարվում է, այսինքն
յու և լիս 31-ից յետոյ ոչ թէ մի 30 է գալիս, այ-
դարձեալ 31, *) որ մենք կը կոչենք չու իստ 31:

Արդ ժողովուրդը այդ կարգը նկատելով, մի ու-
րամիտ միջոց էլ գտաւ ամսի քանակութիւնը շօշափե-
լի կերպով իմանալու համար: Տեսնենք և այդ շօշափե-
լի միջոցը:

Բոնցէք ձախ ձեռքով բռունցքը, մէջքը վերև: Դուք
տեսնում էք չորս մատների այս չորս կոճը, զրանց ա-
ռանքներում երեք փոսիկ: Աջ ձեռքի մատով ցոյց տաւե-
րանքներու կոճով կոճ, յետոյ փոսիկ, նախ կոճ, յետոյ
ցեք կարգով նախ կոճ, յետոյ փոսիկ, նախ կոճ, յետոյ
փոսիկ, և յետոն էլ ասացէք յուն ու ար, և փ և բ-
ր ու ար, մ ա ր ո ւ և այլն: Այդպէս կը հասնենք մին-
ք յու ար, մ ա ր ո ւ և այլն: Այդպէս կը հասնենք մին-
ք յու ար, մ ա ր ո ւ և այլն: Այդպէս կը հասնենք մին-
ք յու ար, մ ա ր ո ւ և այլն: Այդպէս կը հասնենք մին-
ք յու ար, մ ա ր ո ւ և այլն: Այդպէս կը հասնենք մին-

*) Փեր ու ար առ ժամանակ նոյնպէս 30-ով պէտք է հաջուել որով կարգը աւելի զդալի կերպով կը պահպանվի: Իսկ հաջուել որով կարգը աւելի զդալի կերպով մի երկրորդ չու իստ թէ գեկտեմբերին ու յունիսին ու օգոստոսին այդ թիզիրը չզար-
են կազմում 31 օրականներով, աւելի լաւ է այդ թիզիրը չզար-
են կազմում 31 օրականներով, աւելի լաւ է այդ թիզիրը չզար-

կեցէք նոյնը, եղ դառնալով: Այդպէս կոճը միշտ 31 օրուայ նշան կը լինի, իսկ փոսիկը՝ 3^{րդ}-ի նշան:

(Ի՞նչպէս ասած ակնարկեցինք, կարող է պատահել, որ աշակերտները իրանք գուշակեն, թէ ամիսների մէջ մի երկրորդ ջուխտ էլ կայ 31 օրականներով. այդ գէպքում—և միայն այդ գէպքում—ուսուցիչը կարող է ամիսները տարուայ եղանակների համեմատ դասաւորել, որով երկու ջուխտ ըստ ը աւելի զգալի կերպով աչքի կընկնի):

ՏԱՐՈՒԱՅՅ ԵՂԱՆԱԿՆԵՐ

Գարունք	Մարտ	— 31
	ապրիլ	— 30
	մայիս	— 31
Ամառ	յունիս	— 30
	յուլիս	— 31)
	օգոստոս	— 31)
Աշունք	սեպտեմբեր	— 30
	հոկտեմբեր	— 31
	նոյեմբեր	— 30
Զմեռ	դեկտեմբեր	— 31)
	յանուար	— 31)
	փերբուար	— 30

Ուրեմն—ամառ, ձմեռ ջուխտ իստերով:

V. Տարին 12 ամիս ունի: Նոյանից եօթն ամիս 31 օրական են, այն է (տախտակից կարդալ, և ոչ թէ անզիր) յանուարը, մարտը, մայիսը, յուլիսը, օգոստոսը, հոկտեմբերը և դեկտեմբերը: Մէկը 28 կամ 29 օր ունի, այն է փերբուարը: Իսկ մնացած չորսը, այն է ապրիլը, յունիսը, սեպտեմբերը և նոյեմբերը—30

օրականներ են, և հէնց դոցանից է կազմվել «ապշունչ» սեհոյ» անունը:

Vl. «Ապշունչ-սեհոյի» գործածութիւնը այնքան վարժեցնել մինչեւ որ այլ ևս ոչինչ դժուարութեան հանդիպին աշակերտները:

Լ Ա Մ Բ Ա Բ.

(Ի՞նչ պէտք է անէ ուսուցիչը, որ այս և միւս նիւթերը լոկ դ ա ս ա խ օ ս ո ւ թ ի ւ ն և կրաւորական ունկնդրութիւն չգառնան: Պէտք է ամէն միջոց զործ դնել, որ աշակերտը իւր կրաւորական գրութիւնից գուրս զայ և քաջալէրվի խօսելու, նախաձեռնութիւն ստանայ իւր փակ միտքը բաց անելու, իւր որոճածը ուրիշին հաղորդիլու: Դասը պէտք է յարմար մասերի բաժանվի աշակերտների պէտքերի և ընդունակութեանց համեմատ: Ինչ որ կարելի է զննել, այն պէտք է կենդանի զգայարանքներով տեսնել, շօշափել, հոտուտել տալ, և ոչ թէ լոկ խօսքեր կրկնել տալ: Զննածը մաս աշակերտի արտայայտութիւններով ձևակերպել տալ, և ատա թէ ամբողջը ի մի ձուլված վերաստեղծել տալ, այնպէս որ աշակերտը միշտ զգայ, թէ ինչ որ արտայայտում է, այն իւր հոգու անկապտելի էր (ցոյց տալով ուղարկ պատկերը): Դա ի՞նչ տեսակ է:—Դուք ասում եք ընտանի ի: Հերիք չէ, կենդանի է:

Ո Ւ Ղ Տ.

Այս տեղ նկարած կենդանուն շատ անգամ տեսել լինդականական պիտի պատկերը): Դա ի՞նչ տեսակ էր (ցոյց տալով ուղարկ պատկերը): Դա ի՞նչ տեսակ էր (ցոյց տալով ուղարկ պատկերը): Դա ի՞նչ տեսակ էր (ցոյց տալով ուղարկ պատկերը):

որ ասէք, թէ ընտանի կենդանի է. շունը. կատուն—
նոյնպէս ընտանի կենդանիներ են, բայց միթէ ուղղու
այդ կարգի կենդանի է: Ամենայն ընտանի կենդանի
որ և է օգուտ է տալիս տան տնտեսութեան. մէկը ա-
ռուելապէս լոկ զուարձութեան առարկայ է, միւսը եր-
գիչ է, երրորդը պահապան է, չորրորդը որսի է նը-
պաստում, հինգերրորդը կաթ ու միս է տալիս, ուրիշ-
ները մեղր կամ մետաքս և այլն: Ուղար առաւելապէս
ի՞նչ բանի պիտանի է: Դա այն կենդանիներից է,
որոնք տեղից տեղ բեռներ են կրում: Այն, հէնց
այդ կողմից պիտի նայենք դորա վրա. դա բ եռն ա-
կիր կ ենդ անի է.

ՄԵՆՔ ունինք ուրիշ բեռնակիր կենդանիներ ևս:
Որո՞նք են.—Այս ուղար շատ տարբեր է տեսքով մեր
բեռնակիրներից: Կարծես թէ ուրիշ աշխարհի կննդա-
նի լինի: Հէսց այդպէս էլ է: դա օտար երկրի կենդա-
նի է, կուղէք ասացէք, թէ մեզ մօտ հիւր է, գաղթա-
կան է: Երբ որ իմանաք այն աշխարհը, որ տեղից որ
դա մեզ գաղթել է, այն ժամանակ աւելի լաւ կը հաս-
կանաք դորա տարօրինակ կազմութիւնը, որ մեր բեռ-
նակիրների կազմութիւնից այնպէս զանազան է:

Մեր երկիրը մի օրհնած երկիր է: Այս տեղ կայ ճոխ բուսականութիւն—ծաղիկներ, ծառեր, անտառներ. ջուր շատ կայ, որը կենդանութիւն է տալիք այն բուսականութեանը: Ժամանակին անձրեներ են գալիս, որով մեր գետնի հողը առատ նիւթ է ստանում և աւելի ևս պարարտանում է: Բայց աշխարհքում ամէն տեղ այդպէս չէ, Դուք լսած կըլինիք Արքիկէ (Եղիպտոսի ժօտ Սահարա), Արարիա, Ասիա աշխարհների անունները: Անա այդ երկիրներում կան այնպիսի մեծ տարածութիւններ, որոնք բոլորովին զուրկ են ջրերից, բուսականութիւնից և մեր հողի պարարտութիւնից: Այն տեղ միայն չոր աւագներ են չորս բոլորը և մերկ քարքարոտ ապառաժներ: Այն երկիրները ամուլ ան ա-

պատճեն է ը են: Մարդիկ և անասուններ այն տեղ շատ
են չարչարվում շոգից և ծարաւութիւնից. երկնքից
կրակ է թափվում, բայց ոչ անձրև, գետնի երեսին ոչ
շուաք կայ, ոչ զովարար ջուր. այլ միայն աւազ ու ա-
ւագ: Սակայն այդ ընդարձակ անապատների մէջ տեղ
տեղ անսպասելի կերպով պատահում են ջրարբի և գա-
լար վայրեր, որոնք կոչվում են անապատի ովասի ս-
ներ: (Անօգուտ չէ ցոյց տալ անապատների քարտէզը
մեր աշխարհի համեմատութեամբ, կամ նկարել գրա-
տախտակի վրա):

Հիմի երևակայեցէք, որ մեր ուղարի բուն հայրեանիքը հէսց այդ անապատներն են և այնպէս հետազօտեցէք նորա զարմանալի կաղմութիւնը:

Նայեցէք մէջքին ինչ ունի: Սա կոչվում է սապլ տա, որ մեր բնեսակիրների վրա չենք տեսնում: Այս սապատը նեղութեան օրերին մեծ բարիք է դառնում տառապող ուղտի համար: Խճչակս պէտք է կարողանար ուղտը այն անապատ տեղերը շարունակ օրեր ու շաբաթներ քալել սոված ծարաւ, ուր չի գտնում ոչ խոս, ոչ ջուր: Կա անշուշտ պէտք է սատակէր: Բայց Կա սննդեան պաշար ունի ամբարած իւր սապատի մէջ, որ այն մեծ ճանապարհին հետզիետէ հաշում, նուազում և փոքրանում է: Այդ սապատը կենդանուն ներգում և փոքրանում է: Երբ որ գուրսը անունդի պակասուսից կերպում է: Երբ որ գուրսը անունդի պակասուսից կացած է զգացվում: Այդ բոլոր պատճառներով ուղտը թիւն է զգացվում: Պատճառն է, որ Կա ամբողջ մեծածաւականանում: Պատճառն է, որ Կա ամբողջ մեծածաւականանում: Պատճառն է, որ Կա ամբողջ մեծածաւականանում:

Ուղարկած էլ այսպէս և ու առաջարկ է պահպան կերպած կետեկի երկար է պահում պաշտը, այսինքն կերպած կեռակուրքն ու խմած ջուրը՝ ահակ թաթի լայնութիւնը,

Հիմի տեսէք սորա տափակ թագը ւոյ և բայց
որ ձիու սմբակի պէս պինդ և սերտ չէ, բայց

որչափ աւելի յարմար է անապատի խախուտ աւազների վրա քալելու համար:

Նայեցէք սորա աչքերն ինչպէս պաշտպանած են իրա երկայն արտևանունքով՝ անապատի փոթորկող փոշիներից և աւագներից:

Սորա ահազին ծնկները հեշտ կերպով ծալվում են. այնպէս որ կենդանին անտրտունջ չոքում է և առանց գժուարանալու բեռներ է շալկում իւր մէջքին:

Ի՞նչ են ցոյց տալիս այս բոլոր նշանները: Այն, որ ուղար զարմանալի յարմարութեամբ կազմված է ոչ միայն բեռներ կրելու, այլ և այն վայրերի համար, որոնք նորա բուն հայրենիքն են:

ՓՈԹԱՌԻԿ.

Ես տեսնում եմ, որ այսօրուայ վայլակն ու որոտամուքը բոլորովին գրաւել են ձեր ուշազրութեամբ: Ուրեմն դադարեցրէք ընթերցանութիւնը, պահեցէք դրքերը:

Այսպիսի եղանակը, օդի այսպիսի փոփոխութիւնն ինչպէս է կոչվում: Փոթորիկ, չէսց փոթորկի մասին է լ իսոսենք այժմ և կը փորձէնք այն նկարագրել:

Մի ժամ առաջ ձեզանից ոմանք գանգատվում էին օդից. իսկապէս ձեզ ինչ էր նեղացնում: Տօթի սաստիութիւնը: Օդի փոփոխութիւնն ուրեմն սկսվեցաւ տօթով: Այն ժամանակ երկնքում ինչ նկատեցիք: Ամպեր: Էին նոքա: Ո՞չ, սկզբում հատ հատ ամպեր էին, սումեծացան, սեացան, ամբող երկնքը պատեցին, չորս դուք ի հարկէ անհանգուացաք, վախեցաք, բայց արշօք միայն դուք: Մեր ազաւսիները վախեցած եկան-

տանիքի վրա հաւաքվեցան և էլ չհամարձակվեցան պատսպարած տեղից գուրս գալ, էլ չհեռացան զբունելու, ինչպէս որ սովոր էին: Ուրիշ ինչ նկատեցիք, ծառերը հանգիստ մնացին: Ո՞չ, սաստիկ քամի բարձրացաւ, ամենայն ինչ շարժվեցաւ, ցըսեց, օդը պատըովում էր և շանթերից լուսաւորվում էր, երկինքը գոռուց, ինչպէս և այժմ որոտում և փայլում է: Միթէ առաջ որոտում և յետոյ վայլատակում: Ո՞չ, նախ վայլատակում է:

Այս անգամ վայլատակումից յետոյ մինչև որոտալը համարեցէք բախմամբ: Ո՞րքան հաշուեցիք: Վեց:

Բայց ձեր նկարազրութեան մէջ ամենագլխաւորը գեռ չիշատակեցինք: Այն բոլոր փոփոխութիւններից յետոյ, յանկարծ սկսեց անձրել կաթել, բայց յետոյ յետոյ, յանկարծ սկսեց անձրել կաթել, բայց յետոյ յանձրել դարձաւ: Մէկ սկսեց դադարել, բայց իսկոյն անձրել վերստին յորդացաւ...

Երեխայք, կրկին վայլատակեց: Մէկ, երկու... վեց, եօթը: Առաջ համարեցինք վեց, այժմ եօթը. դա վեց, եօթը: Առաջ համարեցինք վեց, այնպէս սկստկացաւ, որ կատարեալ տեղատարափը այնպէս սկստկացաւ, որ կատարեալ յըհեղէղ դարձաւ: Մէկ սկսեց դադարել, բայց իսկոյն անձրել վերստին յորդացաւ...

Այժմ մեր պատուհաններից նայեցէք փողոցը: Ի՞նչ եք տեսնում: Փողոցը վարարվել, ծով է գարձել: Լով գիտէ որ աղքատի տունն է կաթում, ում պատն Ո՞վ գիտէ որ աղքատի տունն է կաթում, ում պատն է քանդվում, քանի՞ ձի, շուն, կատու, մարդիկ հազիւ է պատճենում են հեղեղից, կամ նաև վասպում:

Մեր գիմացի սարից ջրի սահանքներ են թափավում, մվ գիտէ մեր գիտն էլ ինչպէս ուռել, բարձրավում, մվ գիտէ մեր գիտն էլ ինչպէս ուռել, բարձրավում, ցել և իւր ափերից հեռու գուրս է գնացել դարմանը, ցել և իւր ափերից հոտը ջրով ծածկել:

Կամաց կամաց անձրել դադարում է, երկինքը բացվում է, օդը պայջառանում է, թարմանում է մաքըը բացվում է, օդը պայջառանում է, աղտանիները աշխուժանում են: վում է, տաքանում է, աղտանիները

ԿՐԿՆԵՆՔ և կազմենք փոթորկի պատկերը.

Փոքուրկից առաջ—տօթ.

ամպեր—հատ հատ,
կուտակումն,
սեանալը,
փռվիլը երկնակամարում,
մթնում է.
մարդիկ և կենդանն անհանգստ.

Բուհ փոքորիկը—բամի.

յըտանալը.
որու և փայլատակը.
անձրի, տեղատարափ

Փորուկի հետեւը—փողոցի հեղեղներ,

աների կաթելը,
պատերի քանու-
անառունների խեղու-
սարերի սահանքն,
գետի ուռչիլը,

Փորութիւն դադարումը—Եղիշենք ու

օդը թարմ., մաք., տաքանում է
կենդանիները աշխուժանում են:

(Այսպիսի անպահոյք տախտակը շատ էլ հեշտ չի կազմվում, ուստի ուսուցիչը ամէն անգամ կանխաւ ինքը իր համար պէտք է ձևացնէ, որպէս զի դասի ժամանակ ժամավաճառ չինի և դժուարութիւններ չպատճառէ թէ իրան և թէ աշակերտներին):

Պատուիրել աշակելաներին, որ ուրիշ անգամ
աւելի լաւ դիտեն փոթորկի, անձրևի, հեղեղի բո-
լոր մանրամասնութիւններ:

ԿԵՆԳՈՒՐՈՒ,

Այսօր պէտք է խօսենք մի կենդանու մասին, որ մեզանում չի դառնվում, նա հեռու աշխարհի կենդանի:

Է—Աւտրալիայի կենդանի։ Ահա պատկերը. այս
տեղ նկարած է կէն գուր ու կամ ազեվազ կենդանի։

ի՞նչ տարօրինակ բան էք զանում սորա մէջ: Գլ-
լուխը փոքր, մէջքը մեծ: Այս, մարմնի առաջակողմեան
բոլոր կազմութիւնը փոքր է, իսկ ընդհակառակ յետա-
կողմեան ամէն մասերն՝ անդամները և ագին՝ շատ մեծ
են: Բայց մեր ուշադրութիւնը զարձնենք այն մասի
վրա, որ աւելի աչքի են ընկնում: Տեսէք այս երկայն
և ուժեղ եղի ոտները, այս հաստ ագին, պոչը (այնքան
հաստ, ինչպէս իմ բազուկը), և յետոյ՝ այս կարճ և
թոյլ առջեկի ոտները: Եղի ոտները (միշտ պատկերի
մէջ ցոյց տալով) ոստնող ոտներ են, ագին ծառայում
է որպէս յենարան և օգնում է ոտնելու ժամանակ
(ագի—ագեվագ): Թէպէտ այս անասունը կոչվում է ա-
ագեվագ, բայց սա ոչ թէ վազում է, այլ իւր զօրաւոր
եղի ոտների և երկայն ագիի վրայ յեցած՝ արագապէս
ոստնում է: Եղի ոտի վրա մի պճեղ նոյնպէս աչքի է
ընկնում իւր մէծութեամբ և սմբակի պէս տափակ մա-
զիւով: Այդ մագիլը գետնի մէջ խրելով՝ անասունը
կարողանում է հաստատուն անվրէպ ոստիւն գործել:
Բայց ի՞նչպէս է ոստնում դա: Ուշ զբեցէք, առջեկի ոտ-
ները շատ բարակ են, երեք տարեկան երեխայի ձեռ-
քի հաստութեամբ: Բայց չմոռանաք, որ ինքը անա-
պէս մի մեծ հորթի չափ է, այն ևս մօտ 6 փութ
ծանրութեամբ: Այսպիսի բարակ ոտները այս ծանր
անասունին ի՞նչ օգուտ կարող են տալ ոստնելիս: Մա-
ստաւանդ որ կէնդուրով ամէն մի ոստիւնը այս մեր
սեհեակի երկայնութիւն ունի (6—8 մետր): Մա ուրեմն
կատուի պէս ոստնել չի կարող (եղի ոտներով ոստիւն,
առջեկի ոտներով նեցուկ): Ի՞նչո՞ւ: (Մարմնի մէծութիւնն
ու ծանրութիւնը—առջի ոտների թուլութիւնը, որ կը
փշրվէին այնքան ծանրութեան տակ): Դա ոստնում
է եղի ոտներով և գարձեալ այդ ոտներով էլ գետինն
է ի՞նչում: Առջի ոտները դործ է ածում նա (տ. պատ-
է ի՞նչում:

կերը) աւելի որպէս ձեռներ, կարելի է թէ նոցա վրա
յենվի միայն հանգիստ կերակուր փնտնելիս:

Բայց դորա կերակուրը ի՞նչ կարող է լինել Նը-
կատեցէք դորա գլուխը և դորան շրջապատող վայրը:
Դլուխը նման է մեր ջէյրանին (այծեամնին). նորա գոյնն
էլ այծեամնի գոյն է), և վայրն անշուշտ մի մարդա-
գետին է կամ մացառ: Խոտ, գալարիք, տերեներ—ահա
սնունդը: Ուրեմն զա պէտք է լինի խոտաճարակ
կենդանիների կարգից:

Այս անսասունը մի անհամեմատ առանձնայատ-
կութիւն ևս ունի: Դա իւր որովայնի վրայ ունի մի
պարկ կամ գրպան, ուր որ գոնվում են ստինքը (ծը-
ծերը): Այս տարօրինակ կազմութիւնը մի խորհուրդ
պէտք է ունենայ: Շատ անգամ պատահում է, որ կէն-
գուրուն իւր ձագերին այս պարկի մէջ է գնուում իւր
առջեկի ոսներով (ուրեմն իբրև ձեռքեր գործածելով) և
յետոյ մեծ մեծ ոստիւններով տեղից հնուանում է: Նա
ուրեմն նոցա պատսպարում է ցըտից, եղանակի փոռ-
փոխութիւնից, թշնամու հալածանքից: Զագերը ան-
կերպարան մսի գնդեր են, աւելի անօգնական, քան
կատուի կոյր ձագերը: Նոցա գլխաւոր մասերը—գը-
լուխը, իբանը, անդամները—մի կերպ էլի որոշվում են.
Բայց աշքերը, ականջները, քիթը լոկ միայն նշանած
են—ամբողջութիւնը շարժողութեան գրեթէ անընդու-
նակ. կարծես թէ խմորից շինած կենդանակերպ ըլիթ
լինին՝ աշքը, քիթը, բերանը—չամիչներով, որ մանու-
սիրի սիրած ընծայ են. Այդ անձեւ էակները պարկի
մէջ ոչ միայն պաշտպանութիւն են ստանում, այլ այն
տեղ գտնում են իրանց կաթը, մինչեւ որ շատ շաբաթ-
ներից յետոյ կարողանան իսպառ թողնել այս պարկը
իրանց մանկանոց-ձագատունը: Ահա այսպէս ամենայն
արարած խնամում է իւր ձագերը, իսկ Մայր-բնու-
թիւնը խնամում է ամբողջ արարչութիւնը, որպէս զի ոչ
մի արարած ժամանակից առաջ չնշվի գետնի երեսից:

Որովհնակ հէնգուրուն էրէներին է նմանում, իւր
պարկի պատճառով կոչվում նաև պար կէ ր է, ինչ-
պէս իւր պգիի պատճառով՝ առ ե վազ կ են դանի:

ՆԱՏՐՈՒՄ ԿԱՄ ՍՕԳՈ

(Թոկապէս երկբնածխաւ նաւունի).

I. Անցեալներում մենք շատ տեսակ փոշիներ
տեսանք. նոցա կարգիցն է նաև ահա այս նատարոնը
կամ սօգան:

II. Պատմեցէք ձեր տան մէջ ի՞նչ գէպքերում սօ-
գա են գործ ածում:—

III. Այժմ ես ձեզ հասկացնեմ, թէ զա ի՞նչ առար-
կայ է: Նախ և առաջ լեզուով քիչ փորձեցէք այդ նատ-
րոնը: Ի՞նչ համ ունի: Փոքր ի՞նչ աղէնամ է, աւելի
զառնահամ: Մենք պէտք է մի քանի փորձեր կատա-
րենք, առարկայի լաւ ծանօթութիւն ստանալու համար-

Ահա այս փորձանակի (ապակէ նեղ ամանի) մէջ
կիսով չափ գաղջ ջուր եմ լցնում. մէջը ածում եմ դա-
կասով ծայրով փոքր ի՞նչ նատրոն և խառնում եմ: Նատ-
րոնը անյայտանում է, այսինքն ջրի մէջ լուծվում է:
Փորձեցէք այս լուծուածքի համը: Զուրը նատրոնի զառ-
նահամութիւն ստացաւ, ինչպէս որ շաբարից ջուրը
քաղցը համ է ստանում:

Այժմ քիչ նատրոնը աւելացնում եմ լուծ-
ուածքի մէջ և միշտ խառնում եմ: Վերջապէս ջուրն
այլ ես նատրոն չի ընդունում, կարծես թէ կշտացել է,
մենք ուրեմն ստացանք նատրոնի կշտացած, յագեցած
հեղուկ:

Յագեցած հեղուկի մէջ տելացնում եմ այնքան
նատրոն, որ նստած մրուրը հեղուկի կէս տարածու-
նատրոն, որ նստած մրուրը հեղուկի կէս տակաւ առ
թիւն է բռնում: Ապա այդ հեղանիթը տակաւ առ
թիւն է բռնում: Ապա այդ հեղանիթը կանթեղի վրա ըլու-
տակաւ տաքացնում եմ սպիրտի կանթեղի վրա ըլու-

նած; ի՞նչ ենք տեսնում, պղպճակներ են կազմվում։ Միթէ եփ է գալիս հերուկը։ Ո՞չ Ահա տեսնում էք, փորձանակը ձեռքս չի այրում, մինչև անգամ հազիւ տաքացել է։ Դուք էլ կարող էք ձեռքով փորձել սորա տաքութիւնը։ Ուրեմն եփ չի գալիս։ Տեսէք, և ոչ ջուրն է գոլորշիանում, այլ նոյն իսկ նատրոնի մրուրից են բարձրանում պղպճակները։ Հապա ուրեմն դոքա պէտք է լինեն օդի պղպճակներ, և ոչ թէ գոլորշը պղպճակներ։

Առ այժմ փորձանակը մի կողմ դնենք; և մեր ասածները ամ փոփ ենք։

Նատրոնը դառն աղի համ ունի։ Նատրոնը ջրի մէջ լուծվում է։ Այն ևս լուծվում է ոչ թէ անսահման չափով, այլ մինչև յագենալը։ Եթէ յագենալուց յետոյ ջրի մէջ դարձեալ նատրոն աելացնենք, փորձանակի յատակին կը նստի նատրոնը և կը կազմվի մրուր։ Տաքացրած փորձանակի մէջ կազմվում են պղպճակներ։ Այդ նշան չէ, թէ հեղուկը եփ է գալիս։ Ուրեմն ոչ թէ հեղուկը գոլորշիանում է, այլ հէնց նոյն իսկ նատրոնից են բարձրանում պղպճակները։ Հետեապէս պլղպճակը պէտք է լինի օդ, և ոչ թէ գոլորշի։

Տարունակութիւն.

Երբ որ մի բաժակ սառը ջուր տուն բերեն և տաք սենեակում մնայ, բաժակի մէջ նոյնպէս օդի պղպճակներ կը կազմվին։ Ահա այս փորձանակի մէջ նոյնպէս սառը ջուր եմ տաքացնում, և դուք տեսնում էք, որ այս տեղ պղպճակներ են կազմվում։ Զրի մէջ եղած օդը տաքութիւնից դուրս է գալիս։ Արդեօք երբ որ նատրոնը տաքացրեցինք՝ մի և նոյն բանը չկատարվեցաւ։

Այդ բանը ճշդիւ իմանալու համար՝ մի փորձանակի մէջ ջուր եմ եփ տալիս, ապա փորձանակը կրակից հեռացնում եմ։ Եփ գալը դադարեց։ Հիմի գանակի ծայրով նատրոն եմ թափում այն տաք ջրի մէջ։ Իսկոյն սկսում է սաստիկ խշոց, այսինքն շառաչմամբ

պղպճակներ են արձակվում։ Այս երեսոյթը եփ գալ չի կարող լինել. անկրակ բնչպէս կարող է եփ գալ։ Այն, այս տեղ օդ է կազմվում—այն ևս ակներկ է, որ հէնց նոյն նատրոնից է կազմվում—բայց թէ ի՞նչ օդ։ Մենք պէտք է աշխատենք ժողովել այդ օդը, որ այսպէս ցայտում—ցնդում է։

Դարձեալ կը վերցնեմ նոյն փորձանակը, որ առաջ մի կողմ զբեցի, և որի մէջ ջուր և նատրոնի մրուր կար։ Ապակէ կոր խողովակի կամ սիփոնի մի սրունքը կոխում եմ այդ փորձանակի մէջ, որ լցուած է գաղջ ջրով։ Եթէ առաջուայ պէս նատրոնի փորձանակը տաքացնեմ, իսկոյն դարձեալ կը բարձրանան օդի պղպճակները, այն ևս անկասկած հէնց նոյն իսկ նատրոնից։ Օդի պղպճակները մէկմէկու հետեից կանցնին սիփոնի սրունքներով միւս փորձանակի մէջ այնպէս, որ սիփոնից ջուրը կը մղեն, և այն տեղ այլ ևս ջուր չի մնայ։ Սիփոնը թունում է իբրև թէ դատարկ է, բայց անշուշտ մէջը այն օդն է, որ նատրոնից էր բղիսում։ Այդ օդը անգոյն է, ինչպէս մեզ շրջապատող մթնոլորտի օդն է։ Բայց դա մեր օդը չէ, ինչպէս որ իսկոյն պիտի համոզվինք։ Ահա մի վառած լուցկի մխում եմ մի ուրիշ դատարկ և բաց խողովակի մէջ։ Ի՞նչ է պատահում։ Լուցկին շարունակում է այրվել մինչև որ բոցը կամաց հանգչում է, թէպէտ և տակաւին շարունակում է մխալ։ Հիմի վառած լուցկին մացնում եմ մեր սիփոնի մէջ, ուր որ հաւաքված կայ մեզ անծանօթ լուցկին իսկոյն հանգչում է, մինչև անգամ չի էլ մըլուցկին իսկոյն հանգչում է, մինչև անգամ չի էլ լուցկին իսկոյն բղիսում անգոյն օդը հանցնում է կրախում։ Նատրոնից բղիսում անգոյն օդը հանցնում է կրախում։ Այդ օդը կոչում ենք այդ առաջ թթուուաւ։

Ամփոփում։ Սառը ջուրը տաք սենեակի մէջ լուրդակի վրա պղպճակներ է կազմում, որ մեր մթնուրաժակի սկավարակ պղպճակներ են։ Միաժամանակ օդի պղպճակներ են։ Եփ տուած ջուրն էլ պղպճակներ է կազմում, բայց էնսնք ջրի պղպճակներ են։

Տաքացրած ջրի մէջ նատրոնը նոյնպէս պղպճակեր է կազմում, բայց էստնք ոչ մեր մթնոլորտի օդ և ոչ ջուր, այլ բնած խական թթուռաւած:

Կրկնել երկու ամփոփումները միասին:
Շարունակութիւն.

Մնացած նատրոնի հեղանիւթը ահա ես եփ եմ տալիս յաղճապակեայ (խեցեղէն) անօթի մէջ և վերան քիչ քիչ աւելացնուում եմ նատրոնի երկրնածխատը (մեր սկզբնական սօդան), քանի որ շարունակում է խշոցով լուծվել: (Զգոյշ. այսինքն հեռու, որպէս զի տաք կաթիները չցայտեն մամուլիների հրեսին):

(Եթէ ամանի եղերքին ջրի մրուր կամ ցամաք աղ հաւաքվի, պէտք է փայտէ կամ ապակէ ձողիկներով դարձեալ հեղանիւթի մէջ եղ դարձնել):

Ես այժմ դադարեցնուում եմ եփ տալը, հանգնուում եմ կանթեղը, որովհետև ինչպէս տեսնում էք՝ հեղանիւթի երեսին արդէն կաղմվել է աղի պէս կարծր շերտ:

Այս հեղանիւթի անօթը հէնց այսպէս էլ կը պահենք մի հով տեղ: Մենք շուտով կը տեսնենք նորաբիւրեղները:

Դուք տեսաք, որ բնածխակոն թթուռը (ածխաթթուն) ցնդեց, ուրմն կարծիք չկայ, որ ջրի մէջ մի ուրիշ օտար բան պէտք է մնացած լինի, ես վերցնուում եմ հեղուկից մի կաթիլ (կամ եթէ արդէն բիւրալացել է՝ մի փոքր կտոր այն աղից), խառնուում եմ ջրի մէջ: Հիմի տեսէք համը: Կծու զգուելի համ է, առելի գառն, քան նախկին «սօդան»: (Այժմեանն էլ առօրեայ կեանքի մէջ «սօդա» է կոչվում: Ուրեմն երկու տեսակ «սօդա» կայ, որնց զանազանութիւնը շուտով կիմանանքը):

Ահա զարմանալի թղթի կտորներ—կարմիր և կապոյտ, բայց չատ օգտաւէտ թղթեր: Երկուսն էլ կոչվում են լակմութիւն (օպաղեղի—tournesol-ի

—մէջ թաթախած թուղթ), բայց երկուսն էլ մի և նոյն բաններ են. մենք կը տեսնենք, որ որոշ հանգամանքներում կարմիրը կապոյտ է դառնում, կապոյտը կարմիր:

Արդ մեր հեղանիւթի մէջ թաթխում եմ կարմիր լակմուսի թաց շերտը: Ի՞նչ էք նկատում: Կարմիր շերտը կապտեց: Այս փոփոխութիւնը ջրից չի ծագում, այլ հեղանիւթի մէջ մի ուրիշ բան էլ կայ լուծուած, որ էնոր իրա համն է տալիս և կարմիր գոյնը կապոյտ գոյնի է փոխում:

Հիմի ես ձեզ ցոյց կու տամ մի ուրիշ հեղուկ, աղաթթու (esprit de sel—acide chlorhydrique): Դա զրեթէ անգոյն է, փոքր ինչ կանաչի տուող դեղնագոյն է, դորանից ծուխ է բարձրանում: Այդ հեղուկից մի բաժակի մէջ ածում եմ 10 կաթիլ և յետոյ բաժակը ջրով լցնում եմ. այդպէս ջրալի հեղուկը բոլորավին անվըլցնում եմ. այդպէս ջրալի խառնուրդի մի կաթիլը փորնաս դարձաւ: Այս ջրալի խառնուրդի մի կաթիլը փորնացէք: Թթու է, և բոլորավին այլ համ ունի, քան նախկին հեղանիւթը:

Արդիօք այս աղաթթուն էլ կարմիր շերտի գոյնը կը փոխի: Ես թաթխում եմ աղաթթուի մէջ կարմիր կը փոխի: Ի՞նչ փոփոխութիւն տեսաք: Գոյնը չփոխեց: Դա շերտը, ի՞նչ փոփոխութիւն տեսաք: Գոյնը չփոխեց: Դա շերտը, մեր առաջնուայ հեղանիւթից տարբեր բան է, ուրիմն մեր առաջնուայ հեղանիւթից տարբեր բան է, ուրիմն էլ տարբեր է: Բայց կարելի է կապոյտ շերտի գոյնամն էլ տարբեր է: Հիմի թաթխում եմ մէջը կապոյտ շերտը: Նը փոխի: Հիմի թաթխում եմ մէջը կապոյտ շերտը: Արդարն կապոյտը կարմիրէց: Դամն սօդայի համը կոչ: Արդարն կապոյտը կարմիրէց: Դամն սօդայի համը կոչ: Իսկ վում է աւ կամ աւ կամ զանամոխրի համ, իսկ վում է աւ կամ աւ կամ զանամոխրի թթու: Դուք տեսաք, որ լակմուաղաթթուի համը՝ թթու: Դուք տեսաք, որ լակմուաղաթթուի համը՝ թթու: Ինչպէս սի թուղթը կարծես նոյնպէս համ է զգում, ինչպէս սի թուղթը կարմիրէց: Դամն սօդայի համը կոչ:

բը. թարմ կաթը և (մի կաթիլ թթուուկով) թթուած կաթը. լակմուսի թուղթ, համը):

Զմոռանաք, որ աղաթթուն ևս սաստիկ ջրով
խառնեցի. 10 կաթիլը մի բաժակ ջրի մէջ խառնեցի:
Հիմի տեսէք, թէ զուտ աղաթթուի մի կաթիլը (ապա-
կէ ձողիկով հանել կաթիլը) ինչպէս «ուտում», «մա-
շում» է բրդի կտորը, թուղթը. մարդու ձեռքը կարող
է դաղել, բշտիկներով ծածկել. այն ուրեմն ս ա ս տ ի կ
թ ո յ ն է:

Հիմի վեր առնենք մի փոքր կտոր կարծրացած հեղանիւթից, որ ուզում էինք հով տեղը պահել: Այդ կտորը մի լայն փորձանակի մէջ ձգենք, վերան չուր ածենք և յետոյ տաքացնենք: Կարծր կտորը ջուրի մէջ լուծվեցաւ: Մի կաթիլ աղաթթուու եմ խառնում մէջը: Ինչ էք տեսնում: Պղպճակներ են շառաչում: Հետզհետէ դարձեալ կաթիլներ եմ աւելացնում: (Կրակից հեռու): Կրկին օդ է կազմվում: Միթէ ուրեմն մէջը գարձեալ բնածխական թթուուտ է եղել: Վառած լուցքին այդ օդից հանգչում է և չի մխում: ուրեմն այս փորձով հաստատվում է, որ այդ օդը արդարև բնածխական թթուուտ է եղել: Լակմուսի կապոյտ թաց թուղթը կարմրում է. դարձեալ նոյն է հաստատվում: Բը նածխական թթուուտը մի թթ ու ու ու տ է:

Աւրեմն՝ Նատրոնը ջրով տաքացը ծկորցնումէ բնածիան թթուուտ: Աղաթթուն վրէն աւելացնելով նատրոնը դարձեալ կորցնումէ բնածիան թթուուտ: Հետեապէ նա պարունակումէ իւրմէջ երկու անգամ կամ երկու մասըն ածիան թթուուտ: Այդ պատճառով մեր գործ դրած սպիտակ փոշին կոչվում է երկրնածիան:

Ես դարձեալ շարունակում եմ փորձը և տեսնեմ արդեօք կը ճանաչէք նոր ստացուելիք մարմինը, որ

հանրածանօթ մարմին է:—Ահա այս յախճապակեայ
սկաւառակի մէջ ածում եմ մեր հեղանիւթը կամ լուծ-
ուածքը և շարունակ տաքացնելով՝ վերան կաթեցնում
եմ ջրալի աղաթթուն (1:10) այսքան ժամանակ, մին-
չեւ որ շառաչումն ու պղպձակների կազմութիւնը վեր-
ջանայ: Որպէս զի ճիշտ իմանանք, թէ Ի՞րը է վերջա-
նում խշցոցը, ահա անդադար հեղանիւթը փորձում եմ
կարմիր և կապոյտ լակմուսի շերտերով: (Եթէ սխալ-
մամբ թթուուալ չափեց աւելի թափվի, պէտք է հե-
կանիւթի մէջ քիչ երկրնածխական նատրոն ցանել):
Հիմի փորձեցէք այս նոր հեղանիւթի համը: Դա կորց-
րել է իւր ալկալեան (դառնամոխրի) համը. բայց
թթու էլ չէ, այլ դա սովորական պարզ աղի համ ու-
նի: Ստացած հեղանիւթը շոգիացնում եմ, մինչեւ որ
երեսը աղի մաշկով ծածկվի: Այս հեղանիւթը թափում
եմ մի տափակ ամանի մէջ, ափսէի մէջ (բայց այնպէս,
որ եղրը չթացացնենք), թողից զերծ պահելու համար
ծածկում եմ բարակ ծծան թղթով, տակը գնելով փայ-
տի ձողիկներ, և կը թողնեմ, որ արեկ տակ ցամքի
չորանայ: Տեսնենք թէ մի քանի ժամանակից յետոյ
ի՞նչ կը ստանանք: (Միւս օրը աշակերտները պէտք է
առ աչօք համոզվին, որ կազմվել են իրանց ծանօթ
խորանարդածե բիւրեղները: Ի՞նչ համ ունի:—Մենք
ստացանք սեղանի համար առաջ առաջ առաջ առաջ:

թթուն կարծես թէ ոչնչացաւ. դոնէ լուծուածքը թթուն համ չպահեց և կապոյտ լակմուսը չկարմրեց. Սակայն և ոչ կարմիր շերտը կապտեց. ապացոյց, որ հեղանիւթը նաև ալկալեան (դառնամոխը) յատկութիւնը կորցրեց: Արդ նորա համը ոչ թթուն և ոչ զառնահամ էր, այլ աղի էր: Այսպէս մենք ստացանք նոր մարմին, այն է զուտ սե ղանի հասարակ աղ:

(Թող այս փորձերը չդժուարացնեն անփորձ ուսուցչին, շատ չնշին բաներ են: Բայց ապահովութեան համար՝ պէտք է խորհուրդ հարցնել տեղական բժշկից կամ նաև դեղագործից:—Իսկ թէ ոիփոնը ինչ հասարակ անօթներից կարելի է սարգել, պէտք է կարդալ 1908 թուի «Աղբիւրի» դեկտեմբեր համարում սարգի նկարագրութիւնը—պատկերով հանդերձ):

ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ

ԲՈՒԽԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Երմաս եւ տերենիներ.

1. Վեր առ մի կտոր ստուարաթուղթ (գրքի կազմ), կենդրոնում գուլս կտրիր մի փոքր բոլորակ և այդ տեղից մինչեւ թղթի եղերքը ձեղք բաց արա: Գետնից արմատով հանած մի մատաղ բոյս անցկացրու ձեղքով մինչեւ թղթի կենդրոնը և այդ թղթով ծածկիր ջրով լիբը մի բաժակ այնպէս, որ արմատը բաժակի մէջ կախ ընկած մնայ: Բաժակը իւր բոյսով արեգակի դէմ դիր:—Մի ուրիշ բաժակով և նոյն տեսակ ծածկոցով հակառակ փորձը կատարիր, այսինքն բոյսը գլխիվայր տերեներով դիր արեգակի դէմ:—Մի քանի ժամից յետոյ երկու բոյսերը իրար հետ համեմատիր:

2. Մի և նոյնն արա, ինչ որ վերը սկզբում ասվեցաւ, միայն թէ մի դատարկ, մաքուր, բոլորովին չոր բաժակով խուփի պէս ծածկիր բոյսի տերեները, և այդ բոլորը դարձեալ արեգակի դէմ դիր:—Տես թէ ի՞նչ կը նկատիս գլխի բաժակի ներսի երեսի վրա:—Այսոեղ էլ հակառակ փորձը կատարիր, այսինքն հիմի խուփով ծածկիր բոյսի արմատը, և այդ կերպով արևի դէմ դիր:—Խուփը զննիր և նկատածը խօսքով արտայայտիր:

Գետնի տակի ցողունը.

3. Ինչով է բազմանում հասարակ սեղը (Triticum repens) այնպէս արագ:

4. Գետնախնձոր բոյսի այն մասը զննիր, որ մենք ուստում ենք. և ըստ այնմ եղբակացըրու, թէ բոյսի որ մասը պէտք է լինի այն:

5. Լաւ քննիր այս գետնախնձորը, որ մառանում

ծլել և նորընձիւղ է արձակել:—Ո՞ր տեղերումն է երեւում ընձիւղը:—Ինչ կերպարանք ունին այդ ընձիւղները:

6. Ինչով կարող ես հեշտութեամբ ճանաչել մեր ծառերի հասակը (հիւսների խանութում, սղոցարաններում, փայտ ջարդելիս, անտառի ծառը կարելիս, խոհանոցի ածուխը զննելիս):

7. Մեր ծառերը միայն մի անգամ նորընձիւղ են արձակում, այն ևս գարունքին, թէ տարուայ նաև այլ եղանակին:

8. Գարունքին հետամուտ եղիք, թէ ծառը ո՞ր տեղերումն է բողբոջում:

9. Հնադանրապէս ինչ զանազանութիւնն է նկատվում տանձենու և խնձորենու սաղարթի ձերի մէջ:

Պատառուկ տունկեր. .

10. Դիտիր լուրիայի տունկը (Phaseolus multiflorus) ծլելու օրից սկսած:—Ի՞նչ նկատեցիր մինչեւ այն միջոցը, երբ որ սկսեց փաթաթվել կշտին տնկած ձողի վրա:—Հետզհետէ ի՞նչ կերպով փոփոխվում են ձողի վրա գալարումները:

11. Հետազօտիր պատավարդի (անտառի որթի, clematis), արտիճի (փիզնի—վայրի ոլորի, vicia), սոսի (elematis), պարտէզներում գետնի վրա տարածվող անձերվում (ervum), պարտէզներում գետնի վրա (vitis) վրա, թէ տունկի խոտի (fumaria cirrosa) և որթի (vitis) վրա, թէ տունկի հր մասը պատահած կ-ց ո զ ո ւ ն է դառնում:

Լանաչ տերենիներ.

12. Մեզ մօտ գտնված մշտադալար տունկերի անունները տեղեկացիր:

13. Ո՞ր ծառերն ամէնից առաջ կանաչում են: 14. Ո՞ր ծառը ամենից ուշ է զարդարվում տերեներով:

15. Տարուայ չորս եղանակներին զննիր թղկի (acer), թղտենու (betula), փեկոնի (fagus), (պիծխիի, acer), թղտենու (rubus), բաղեղի (hedera), սոճու կաղնու, մորենու (rubus), բաղեղի (hedera), սոճու (pinus) տերեները:—Իւրաքանչիւրի մէջ ի՞նչ ես նկատում՝ գարունքին, ամառը, աշունքին, ձմեռը:

16. Նկատիր լուրիայի տերեների դիրքը կէսօրին

և նկատածդդ զրի առ:—Զափիր այն անկիւնը, որ այդ ժամանակ կազմում է զլիխաւոր տերերի կոթը ցողունի հետ:—Նոյնը դիտիր և չափիր նաև երեկոյեան (ժամի 8-ին) և նկատիր առաջ եկած փոփոխութիւնները:

17. Նոյն դիտողութիւնները կրկնիր կարմիր առույտի՝ ապա և թթուառույտի (զառնականջիկի, oxalis acetosella) տերեների նկատմամբ:

18. Անձրեկու ժամանակ նկատիր մի քանի ծառերի, զոր օր. լորու (tilia), թղիկի (acer) երկայնածագ կամ սրածայր տերեները: Մանաւանդ ծաղի գործողութեան վրա ուշ զարձրու:

19. Կաղամբի (brassica) մի տերելը թաթախիր չըի մէջ: Ի՞նչ երեսյթ նկատեցիր:

20. Աշունքին վայր թափած տերեները ի՞նչպէս են փոփոխում հ ե տ զ հ ե տ է:

21. Թառամած տերեներից որ մասն աւելի երկարակեաց է մնում:

❖ Փաղկափրութիւն. ❖

22. Նշանակիր այն խոտերը, որոնք տերեների դարգացումից առաջ են ծաղկում:

23. Գրի առ այն ծառերի անունները, որոնք տերեկ կապելուց առաջ են ծաղկում:

24. Արձանագրիր այն ծառերը, որոնք տերեների բացվելու հետ միան ու ագ են ծաղկում:

25. Այն ծառերի անունները տուր, որոնք տերեների բացվելուց յ ե տ ո յ են ծաղկում:

26. Ի՞նչ ես նկատել ձնադաղկի (colchicum autumnale) ծաղկման և տերեներ երկալու ժամանակական յաջորդութեան մասին:

27. Չորս չորս տունկերի անունները գրիր, որոնք միայն գարունքին, կամ միայն ամառը, և կամ միայն աշունքին են ծաղկում:

28. Մի քանի տունկեր հետազոտիր, թէ մի ծաղկի ծաղկման ժամանակի որքան է տեսում:

29. Շատ տունկեր հետազոտիր, թէ նոցանից ինչ կարգով են թափվում սերմափակը (pistil), առէջը (etamine), ծաղկանց պսակը (corolle) և բաժակը (calice):

30. Հետազոտիր երկայն հասկածե ծաղիկներ կամ իրացեայք (amentacees) ունեցող ծառերի վրա (կաղ-

նու, թղտենու (betula), բարտիի, դողդոջուն կաղամախիի (populus tremula), լատտենիի (alnus), կնճնիի (ulmus), փեկոնի (fagus) վրա), թէ քամին ինչպէս հեշտ կերպով նոցա ծաղկափոշին թափ է տալիս և ամէն կողմ տարածում է: Ի՞նքդ թափ տուր այդ ծառերի բունը և փորձով տեղեկացիր նոյն բանը:—Մի և նոյնը հետազոտիր կոնարեր (coniferes) ծառերի վրա:

❖ Ծաղկիներ եւ միջատներ. ❖

31. Շարունակ դիտիր, թէ որ ծաղիկներին միջատները (մեղուներ, ճանձեր և այլն) շուտ շուտ այցելութեան են զալիս:

32. Պարտիղի մէջ մի կամ երկու լաւ զարգացած առուոյտը ծաղկելուց առաջ ծածկիր թանգի կտորով կամ երկաթաթել հիւսուածքով այնքան զգուշութեամբ, որ մասը միջատները ներս սողալու հնաշութիւն չունենան: Ժամանակ առ ժամանակ բաւորութիւն ծաղկելու ժամանակը անցնետունկերը ջրով թրջիր: Ծաղկելու ժամանակը անցնետունկերի լուց յետոյ հետազոտիր, թէ ծածկած և անծածկոյթ լուց յետոյ հետազոտիր ծաղկեների վրա քանի պտուղ են զալիս քո հետազուցացել: Ի՞նչ եղանակացութեան ես գալիս քո հետազուցութիւններով:

❖ Պ Տ Ո Ւ Պ. ❖

33. Բազմաթիւ տունկերի վրա դիտողութիւններ արա, թէ ծաղկից հետզետէ ի՞նչպէս է զարդանում պտուղը: Նկատած փոփոխութիւնները գրի առ, մինչև պտուղը նկարներով ներկայացրու: Չոր օրինակ. անգամ պարզ նկարներով ծառ (cornus),

ա. Հունի կամ չումի ծառ (cornus spinosa),

բ. Մամիի (վայրի սալորենի, prunus spinosa),

գ. Կաղին (corylus avellana),

դ. Մալխաղազիկ (capsella bursa pastoris),

է. Ելակենի (fragaria vesca),

զ. Փշուտ հաղարջ (ribes grossularia),

է. Ողկուզաւոր (կարմիր) հաղարջ (ribes rubrum),

ը. Կեռաս (prunus avium),

թ. Սալորենի (prunus domestica),

ժ. Տանձենի (pirus communis),

ի. Խնձորենի (pirus malus),

- Պարսիկի ռլուն (pisum sativum),
 - Մորմ կամ շնկաղող (solanum nigrum)
 - Խաշխաչ (papaver rhoeas),
 - Մարենի (rosa canina),
 - Գետնախնձոր (solanum tuberosum),
 - Սպիտակ թզկի (acer pseudo-platanus).

34. Մեծ ծաղկիկների, զոր օր. զանգակի կամ կաքոտ ծաղկիկների (campanularia) միջից՝ կոկոն կկչելուց առաջ՝ աշխատիր զգուշութեամբ հեռացնել մի անգամ բոլոր առէջքները (արգասաւոր փոշամանները), իսկ միւս անգամ բոլոր կնիքները (ձուարանի գագաթները) և այլպէս ձևացած տունկերի մէջ հետազօտիր պտուզի զարգացումը:

35. Մի շարք պտուղների անունը տուր, նոյնպէս և այն կենդանիներինը, որոնք ախորժով ուտում են նոյն պտուղները:

Եերմի սփռումը.

36. Φη μαστορούθιανερή համեմատ ո՞ր սունկեց սերմը սփովում է քամու միջնորդութեամբ, որոնց սերմը ջրի միջնորդութեամբ, և որոնց սերմը կենդանիների միջնորդութեամբ:

37. Ամառ ժամանակ վեր առ եփ տուած ջրից մի մասը՝ բաց գաւաթով, միւսը՝ նեղաբերան և դարձեալ բաց շնով, և դիր բացօթեայ արկի տակ. նոյն ջրից մի մաս էլ պահիր լաւ խցանած ապակեակի մէջ. այս օրինակները երկար ժամանակ դիտիր:—ի՞նչ կարող ես զեկուցանել իրաքանչիւրի մասին:

38. Ամառը հողով լիքը ծաղկամաններ դիր բացօղեայ և շուտ շուտ աչքի անցուրի:—Ի՞նչ գտար:

• 1 n u s G

39. Ապրիլի, մայիսի, յունիոի և յուլիսի ճիշդ ամսամտին և ամսակիսին տնկիր գետնի մէջ ոլոռի, լուրիայի, կտաւատի, հաճարի և դդմի երեք երեք հատ սերմ, 1, 2, 3, 4 և 5 հարիւրամետր խորութեամբ, և իւրաքանչիւրի կշտի փայտիկի վրա նշանակիր առունը, ամսաթիւը և խորութիւնը:—Քանի օրից յետոյ երեսցաւ իւրաքանչիւր օրինակի ընձիւղը գետնի երե-

սին:—Ո՞ր օրինակներում բնաւ ոչինչ չերևեցաւ: Շարունակ հետագոտիք բողոքումը, և զեկուցիք, արդեօք տարբերութիւններ նշմարվնելմ ևն այն տունկերի մէջ, որոնք տարբեր ժամանակներում և տարբեր խորութեամբ են տնկված:

40. Եզրիպտացորենի (սիմինդրի), ինձորի, լուրիայի, ոլոսի և վառունգի սերմերը թաղիր թրջված սղոցուքով լցված և տաք տեղ դրած արկղիկի մէջ, փայտի կտորների վրա նշանակելով, թէ այն սերմերից իւրաքանչիւրը ո՛ր տեղ է թաղված, և վերջինները թող այդ տեղ երկու օր մնան: — Ապա արկղիկից դուրս հանած սերմերը համեմատիր չցանած նոյն կարգի սերմերի հետ և զանազան կարգի սերմերի կճիկն ու միջուկը իրար հետ համեմատիր: — Նոյցանից որո՞նք ունին միայն ծիլ, և որինք ծիլ և սպիտուկ (albumin): — Համեմատիր հատ հատ օրինակները բլթակների (cotyledon), արմատիկի և բողոքնուկի նկատմամբ:

Snezhka bu pijn.

41. Հետամուտ եղիք այն տունկերին, որոնք ա-
րևմբ լոյս են ստանում միակողմանի ուղղութեամբ (ա-
սենք թէ պատուհանում դրած տեղը) և զեկուցիք, թէ
ի՞նչ տեսար տերեների դիրքի և ուղղութեան վերաբե-
րութեամբ:

42. Արողի վայրի հաղարք (ալար) և կողմանց
riola) տերեների գլխաւոր ռեզութիւնը ըստ կողմանց
աշխարհի:

ՅԱԿԱՐԴԱՎՈՐ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

43. Վեր առ կոնարեր (coniferae) կամ ասղնաւոր ծառերի, կաղնուռ, թղկու, լատենու, ուռու, վազի (որ-թի, ապա և պարտիզի և սենեակի մէջ շատ անգամ բուսցը ած փուքսենու (fuchsia coccinea) և տարեղածաղ-կի (pelargonium zonale) ոստերը, նոյնպէս և խոտերի և բանջարների մասերը, տնկիր խօնաւ հողի մէջ և զի-տիր:—Բաւական ժամանակ անցնելուց յետոյ ինչ ես տեսնում գետնի մէջ տնկած իւրաքանչիւր տունկի մա-սին գետնի մէջ վեր:—Ելդպէս աճեցած տունկերի վրա ինչ ես գտնում գետնի տակ:

44. Ժամանակ առ ժամանակի զիտիք առուիք ջրի մէջ տնկած ուռենառ աղուբինսերը (ձղերը) և զրի առ, թէ իւրաքանչիւր անգամ ի՞նչ մի նոր բան եսնկատել:

45. Նոյն իսկ վաղ գարնանամտին, նախ քան
ըրպեռջի բացման, կտրիր ուռենու սոսալ (Salix fragilis
կամ *viminalis*) գրեթէ $\frac{1}{2}$ մետր երկայնութեամբ և 1
հարթերամեար արամագծով, տնկիր այն իւր հիմքով
մի ծաղկամանի խոնաւ հաղի մէջ և նկատիր այն փո-
փոխութիւնները, որ սոտի վրա հետզհետէ կերեան:

ՆԻՒԹՈԵՐ

Phi Beta Sigma

Զի. Սա ուրախութիւնն ու երկիւղը յայտնում է պնչերից կրակ թափելով և խրխնջալով։ Վիզը կամարաձև, վեբն բաշ, զլուխը դէպի վեր բռնած։ Ագիով պաշտպանվում է հանճերից։ Ոսները բարակ, երկայն, սուրբ. ամբակ։ Գեղեցիկ վազողը՝ երիվար, կտրիճն ու վառվոռնը՝ նժոյզ, բեռներ կրողը՝ գրաստ։ Խելօք, քտջասիրա, հնաղանդ, տիրասէք։ Չորքոտանի։ Քուռակ։ Կով։ Պաշտպանվում է պողերով։ Աչքերը մեծ և պղտոր (ինչպէս այծի), ոչ շան աշխուժութիւնն ու խելք են արտայայտում, և ոչ ձիու քաջարառութիւնը։ Դասչը մեծ, լայն և միշտ թաց։ Պարանոցի ըուզադ (հնդկահաւի պէս աւելորդ կախ ընկած մորթ)։ Պոչի ծայրին փնջիկ։ Երկու կճղակ։ Որոճում է (կերակուրը կիսով չափ ծամած կուլ է տալիս, լետոյ կուլ տուածը կրկին բերանն է հանում և նորից ծամծմում է), Մոնչում, բչում է։ Միս, կաթ, կարագ, պանիր—ձրագու, կաշի, եղջրանիր։ Հորթ։

Խող. Խոճկոր. Քիթը՝ կնճիթ։ Տգեղ, անշնորհ
մարմին, մազի տեղ՝ խոզանակ, պոչը ոլուած։ Խանչում
է, վերջը անտանելի սուր ճիչ է հանում։ Անմաքուր,
շատակեր, ամենակեր կենդանի է։

Ոչիսար, Գառն, պարուբածե եղիւրներ, կողմնաւ-
կի հակված, Բրդոտ: Պոչը գրեթէ ամբողջովին դմակ
(մեղանում): Բառաշում է: Համբերող, երկոտ, յիմար:

Այժ. Ուշ. մօրուք. եղջիւրը զէպի յետ ծռած:
Մկնում է: Կայսարու, ամէն բանի հետաքրթիր, մինչև
ժայռի սուր ծայրերը բարձրացող, սրտոտ:

ՀԱՅ. ՃՈՒՄ, ՎԱՐԵԼԻ: ԶՈՒ. ԹՈՎԱԽԱ: ՓԵԿՈՒՐ, ԿՐ-
ՄՈՒՐ մէջը լեզու, բայց ոչ ատամ: Աքաղաղ—կարմիր
կատար, երկու մսեղ ըլթակ, սուր բիտ (ոսի խթան):
Թոշելու անշնորհ իրանց կարճ թևերպի, Աքաղաղը
խօսում, կանչում է, հաւը կրկնում է: Աքաղաղը հը-
պարտ, բանակալ, կուռասէր է:

Աղաւնի, Հեղ և փոքր աչքեր ունի. պարանոցի
շարունակութիւնն է կանառը կամ խրիբը. Փետուրը
փարիւն և հարթ նստած. Ապրում են զոյգ զոյգ:
Տնասէր: Փոստի աղաւնի:

• w r s t q

Պարտուզ. Փշապատ, ցանկապատ կամ որմով և
բարտիներով պատաճ: Մէջը—պտղատու ծառեր, բան-
ջարներ, ծաղիկներ: Մարգեր, սիզաւէտ վայրեր, հո-
վասուն ձանապարհներ, ջղի եղբներին՝ ուսիի: Ալփի-
որդառնենկ: Զերմանոց: Ճճիներ, որդունք, միջատներ,
թրթուռ, թիթեռ—թուչուններ, խլուրդ, մեղու: Պար-
տիզպան, այցեպան. շուն:

Մանկական գոտում հասնում տաղրպ, որ ծառերի, խոտերի տակ ծածուկ բննում է: Խրձաւը արմատ, սրտաձեւ, ատամնաւոր տերեւ. հնգափերթ ծաղիկ, փերթերից մէկն ունի բիտ (խթան). հնգափերթ բաժակ:

բառակ. Կակաչ. Դեղնեցիկ, անհոտ ծաղիկ. զայրը և սշակ-
վող. արմատի մէջ մի սոխ ուռնի հօթը մաշկերով. ցո-
ղունի տակից երկու անկոթուն, պատատուն տերեններ.
զողունի վրա միայն մի ծաղիկ վեցատերեկ, զանգակա-
ցի, (Բնոր կարմիր, սիլոտը սկ):

Ճամանակ առաջ լուս երկուուժ են մարմնի զատ
թեան:

Մեղմ. Վրան շատ լաւ է

զատ մասերը՝ գլուխ, կուրծք, պորտ—մէջէմէջ կտրած (միջ-ատ). բրդուտ: Փեթակ: Թագուհի կամ պարսմայր —մեծ շափով, քան միւս մեղուները. զործաւոր կամ չեղոք մեղու—խայթող, կնճիթ. արուները (անգործ ծոյլերը) խայթոց չունին, աւելի հաստ են. զործաւորները ծաղիկներից մեղրի և մեղրամոմի հիւթ են հաւաքում: Խորիսիս: Մեղրամոմից վեցանկիւնի բջիջներ. բջիջներից ամբողջ պան: Որդ կամ թրթուր. հարսնեակ: Մեղուների բազմութիւնը կոչում է պարս կամ բոյլ. իւրաքանչիւր պարսի մէջ մի թագուհի, բազմաթիւ գործաւոր, որնք պաշար են բերում, բջիջներ են շինում, աւելորդ ծոյլ արուներին վենտում կամ սատակեցնում են և դիակներին ամենայն ինսամով գուրս են տանում, որպէս զի փեթակի մէջ օդը միշտ մաքուր լինի:

Կադամքամթիթեռ. Բանջարներին վնասող շատ թրթուրներ և թիթեններ կան, կաղամբն ու շաղդամն էլ ունին մի այդպիսի շատակեր թշնամի. Թրթուրն ունի երկայն, դեղնաւուն մազեր. բերանին՝ եղերային աքցան. չսրս զոյդ թաթեր: Թրթուրը դառնում է հարսնեակ (բոժոժի մէջ փաթթված հանգիստ մնում է), իսկ հարսնեակը՝ թիթեռ: Կաղամբի թիթեռը սպիտակ է, միայն առաջակողմեան թերերի վրա ու բծեր: Գլխին երկու անշարժ աչք, երկու երկայն, բարակ բողկուկ և մի կնճիթ: Կրծքին՝ երկու մեծ և երկու փոքր թերեր, վեց թաթ: Պորտը երկայն և բարակ, քան մեղուներինը: Թերերը ծածկված են շատ նուրբ փոշիով (թեփով):

Ուսուցիչը կարող է շատ թրթուրներ պահել բաժակի մէջ և էնորս կերպարանափոխութիւնները աշակերտներին դիտել տալ:

Ա. Ի. Տ.

Արմենիք. 1) Հաճար՝ ցողունը հանգուցաւոր, դաշտարկ. տերենները երկայն, նեղ և սուր. հասկի քիստ (փշտեսակ մազ): Գարնանացան, աշնանացան:

2) Ցորեն՝ ցողունը աւելի հաստ և զօրեղ, քան հաճարինը, տերենները փոքր ինչ աւելի լայն. հասկը քառակող (հաճարինը՝ տափակ), քիստով:

3) Գարիք՝ ցողունը կարճ, քիստը շատ երկայն, հատիկները երկու կարգով դասաւորած (հասկը երկ-կարգ):

4) Վարսակ՝ չունի հասկ, այլ ողկուզաձև պլուզ. իւրաքանչիւր հատիկը ջոկ կոթ ունի. հատիկը երկայն, բարակ և սուր է:

Արմտիթի չոր ցողունները կոչվում են յարդ: Արտոյտ. Գարնանաբեր փոքրիկ թաշուն: Ոչ տան, ոչ պարտիզում չի պատահում, այլ միշտ դաշտում (արտոյտ, զոյն էլ արտի հողի նման է, զորշ է). այն տեղ էլ իւր բոյնն է զնում: Եղեկի մատի վրա ունի երկայն խթան, աքաղաղի բաի նման, որով արտի փունքը մէջ ընկնելու առաջ է առնում: Ամբողջ տարի եռանդով երգում է (միւս երգիչ թուշունները ձագ հաւանաց յետոյ գրեթէ միշտ դադարում են երգել), կաւնելուց յետոյ գրեթէ միշտ դադարում են երգել: Լաւ ճախրում է զէպի վեր, և արագութեամբ էլ վայր է իջնախրում: Դորան շատ նմանում է կատարաւոր արտոյտը, որին մենք կոչում ենք արեգ զագ ած ագ, որ նոյնպէս քաղցր երգիչ է:

Գ. Ի. Տ.

Ջուլ. Թաց է անում, թրջում է: Թափանցիկ, անգոյն է, համ չունի (չասել՝ ան համ), հոտ չունի, ծողոյն է, միամ չունի (կաթկթող), հոսանուա, հեղուկ է: Զիւն, սառոյց—րելի (կաթկթող), հոսանուա, հեղուկ է: Զիւն, սառոյց—գարունքին հալչող: Եփ է գալիս, եռում է. եփ տուածը շողիանում է, թացը, խոնաւը՝ գոլորշիանում, ցամացողիանում է: Առողջարար ըմպելիք է մարդու, անասունի և քում է: Կիրակուր ենք պատրաստում, լուացվում բոյսի համար: Կիրակուր ենք սրբում ենք: Հրզեհը հանգնում ենք: Հրզեհը հանգնում ենք: Զրաղաց ենք բանեցնում: Մակոյի, նաւ:

Աղրիւրից մինչև ծով. Առուն աղբիւրն եր, ունի, տաշտի մէջ է հոսում, երկու ափ ունի՝ ձախ, ունի, տաշտի մէջ է հոսում, երկու ափ ունի, մանուածապատ, ծուռ ու մուռ ընաց, բերան ունի, մանուածապատ, ծուռ ու մուռ ընացը ովով է հոսում: Շատ առուններից կազմվում է վըթացքով է հոսում: Շատ պնումից էլ գետ է, սոցանից էլ գետ է, որ գնում թափում է ծուռ ու մուռ ընացը կայուն: Վառուն հոսուն ջուր է, լիճը՝ կայուն:

Գորտ. Կարող է ջրի մէջ և ցամաքի վրա կենաւ, երկականցաղ է, Մորթը մերկ կաշի է: Մեծ և լայն երկականցաղ է: Մորթը մերկ կաշի է: Մեծ և լայն երկան՝ լեզուն կապած է ծնօտի առաջակողմին, ծալած բերան՝ լեզուն կապած է ծնօտի առաջակողմին, ծալած դապահում է մէջը, որ հարկ եղած ժամանակ՝ ծալած դապահում է մէջը, որ հարկ եղած դապահում է մէջը: Մեծ աչքերը նակի պէս բաց անելով դուրս հանէ: Մեծ աչքերը նակի պէս բաց անելով դապահում է մէջը: Ցամաքի վրա ոստիիստ դուրս կարկառած են դէմքից: Ցամաքի վրա ոստիիստ դուրս կարկառած են դէմքից: Գլխի երկու մատիր է շարժկում, ջրի մէջ լող է տալիս: Գլխի երկու

կողմից ունի մի մի մաշկ, որ ձայն հանելիս՝ ուռչում է բշտիկի պէս և կրկողը ուժեղացնում է: Նա կրկում է, «Թեոխին մեռել է, մեռել է. Ի՞ր, Ի՞ր, Ի՞ր. մէկէկէլ օրոր, մէկէկէլ օրոր. զ՞որթ, զ՞որթ, զ՞որթ:»

Մարզագետնի.

Արօտութեան կամաց տեղերումն է լինում (լճի, աղբիւրների, գետի մօտ), ուստի և միշտ թաց է այն տեղ: Հազարաւոր սիպային տռւնկեր—խիտ առ խիտ, նոյնչափ ևս դաշտային սիրուն ծաղկիները: Պակաս չեն նաև անասուններ՝ արագիլ, գորտ, մորեխ, թիթեռ, միզու:

Խորտինելծը. Հնձում են գերանդիով. հնձած խո-
տը կոյտ կոյտ է զիզիում: Դիզված դալարի խոտը
փողխով փոռմ են, որպէս զի շուտ չորանայ. երեկոյ-
եան խոտը հաւաքում են խուրձ խուրձ: Շատ անգամ
խոտը երկրորդ անգամ գլուխ է բարձրացնում, եր-
կրորդ անգամ աճում է, բայց առաջուայ պէս չի զար-
դարգում. ծաղիկը չի համում: Աշունքին խոտը գար-
եեալ հնձում են: Խոտը պէտք է չոր տուն տանել, ա-
պա թէ ոչ կը փթի: Անժամանակ անձրև: Երաշտին
խոտը խանձիում է:

Ճարծիք. (գոմշածաղկ, одуванчикъ, leontodon taraxacum) ճանապարհների վրա յաճախ պատահող այս զեղին ծաղիկը կովերի սիրելի կերակուր է: Տերեները ցողունի շուրջ շարած են պսակի նման: Իւրաքանչիւր տերեւը շատ երկայն է և երկու եղբներից մեծ մեծ տամներ ունի, ուստի ծաղիկը ամէն լեզուներով կոշկում է նաև առիւծի առամ: Ցողունը դատարկ է և պարունակում է մածուցիկ կաթ: Ծաղկապսակը բազմաթիւ ուկեցոյն ծաղիկներից է բաղկացած, այսինքն ամէն մի ծաղիկը շատ ծաղիկ է:

Արագիլ. Ես բարձրաստուն թռչունն ունի կարծիքը կտուց, երկայն թևեր, կարմիր ոտներ, կարճ տուտ, սպիտակ փետուրներ, բայց ու են միայն տուտն ու թևերը: Ապրում է ձախճախուռ վայրերում: Կերակը գում է գորտերով, միներով, խլուրդներով, բայց և մեղուներով և բաղերով: Սիրում է իւր փշոտ խոփւների բոյնը շինել գիւղականի տանիքի վրա: Աշունքին մերերկից չուռմ է հնոու աշխարհներ:

Ճաճղուկների և ուրիշ թռչունների բնի մէջ մի մի ձու է ածուս և նոցա հոգացողութեան է թողնում թխումը. հազիւ թէ ձագը ձուից դուրս է դալիս, իւր թերով անիրաւաբար ճնճղուկի ձագերին դուրս է թափում բնից, որպէս զի նոցա մօր միամտաբար բերած բոլոր կերակութը ինքն ուտէ: Գարունն աւետող թոյզուն է:

Երկից.

Երկինքը. Շատ, շատ բարձր է մեզանից: Կամացածն է և ոչ տափակ. ալնպէս է թուռում, իբրև թէ երկընքի կամարը երկրի վրա է հաստատած: Պարզ օրերին կապոյտ է, մշուշին՝ մոխրագոյն և սև է: Այն տեղ տեսնում ենք—արեգակ, լուսին, աստղեր և ամպեր:

Արեգակ. Երկնային մարմին. Թուռում է սկալա-
ռակի չափ: Գմբէթի գլխին աշխատող արհեստաւորը,
գետնից բարձրացած օդապարիկը, հեռացող կառա-
խումբը, վեր սացող կոռւնկը որդքան փոքր են երևում.
Քանի հեռու է առարկան, այնքան աւելի փոքր է թը-
ւում: Արեգակը շատ մեծ գունդ պէտք է լինի: Պայ-
ծառ ոսկեգոյն է. նորա ճառագայթը մեր աշքը ծակ-
ծակում է: Առաւօտեան և երեկոյեան կարմրաւուն գոյն
է ստանում: Երկիրը լուսաւորում է և տաքացնում.
ամէնքը կարողանում են աշխատել և ապրել: Արեգի
տակը տաք է, ստուերի տակը հով է: Առաւօտեան—
ծագում է, երեկոյեան—մայր է մտնում: Ժամանակ-
ներ—օր, գիշեր, առաւօտ, կէսօր, երեկոյ. գիշերա-
տիւ (օր ամբողջ, գիշեր ցերցկ, ԾՏԿԻ):

Swrḥ.

Գարունը. Արեգակն աւելի տաք է թուռում, քան ձմեռը. ձիւնն ու սառոյցը հալչում են. օրերը երկարանում են: Զնծաղիկ, մանշշակ, անթառում (amaranth), վարդ, զարնանածաղիկ (primula): Դաշտ ու մարգագետինը կանաչում են, զարդարվում են. ծառերն ու թփերը փթթում են, կոկոն են հանում: Արագիլ, ծիծեռնակ, սոխակ և այլ չուող թոչունները գալիս են. նոքասկուում են բոյներ շինել: Մեղու, թիթեռ, մժղուկ գործ և այլ կենդանիք կարծես քնից նոր են զարթնում: Հովիւը հօտը դուրս է բերում արածացնելու. երկրագործը իւր յանդն է սկսում մշակել: Գարունը տեսում է

3 ամիս, մարտին արդէն երբեմն գեղեցիկ օրեր են լինում, ապրիլը փոփոխական է—և անձրև, և արևի ճառագայթներ մի և նոյն օրին, իսկ մայիսը գարնան արդէն գեղեցկագոյն ամիս է:

Զիւն. Փաթիլները ամպերից են իշնում: Ձես
հատը մի աստղ է վեց ճառագայթիներով: Ասատիկ ցըր-
տին հատերն աւելի փոքր են լինում, քան թէ ցրտի
մեղմութեան ժամանակ: Զիւնաբեր բուք, Զիւնը թե-
թև, աչըլ խտղող սպիտակ և սառն է: Ցանքսը ձեսն
տակը տաք է պահվում: Զիւնը տաքութիւնից հալչում
է, առուներն ու գետերը լցնում է: Զիւնակոյտ լանջեր
ձիւնով մշտածածկ սարեր:

Զիամանը. Թաւալած ձնագումարը մեծանուս և
աճում է. մէկ գնդով ոտքերն ու փեշերքը շինքեցան,
մէկ գնդով էլ գլուխը: Ձնամարդի աչքերը, ականջները,
քիթն ու բրանը ածուխից շինեցին, մի մի երկայն
աւելիներ էլ խովեցան, որ ձեռքեր դառնան. մի մահակ
էլ ձեռքը դրեցին: Այս անձունի կազանը շատ հպարտ է,
պէտք է պատժվի և հալածվի: Եթեինէք հաւաքվեցան
չորս բոլորը, ձեռաց փոքրիկ գնտակներ շինեցին ձիւնից
և սկսեցին ոմբակլոծել կոպտառ կազանին. այնքան
տուեցին ու տուեցին գնտակներով, մինչև որ կազանի
գլուխը թացը եցին: Եղ անշնորհը ոչ փախչել է կարո-
ղանում, ոչ ահազին մահակը բանեցնում է, էնց միա-
լար սառած ջանաւարի պէս կանգնած է մասել: Աւելի
ծիծաղելին այն էր, որ արեգակի երևալով հալած
եղի պէս ծուլ ծուլ կաթեց, կաթեց, և գետնին հաւա-
սարվեց:

Օդ. Քամու ներգործութեամբ իսանուս սպ, որ
կայ օդ, այն ևս ամենայն տեղ՝ սենեակում, փողոցում,
քաղաքում, գաշտում, մեր շուրջը, մեր ներսը։ Անտե-
սանելի է, բայց զգալի է նորա գոյութիւնը, թափանցիկ,
առածգական է (օգով լցրած բշտիկը ձեռքերի մէջ սղմել
և օհչ օհչ թուլացնել ճնշումը):

և Քիչ քիչ խուլացած է ՀՀ Ազգային պատմական թանգարանը՝ Աշունքի հոգով է, ձմեռուանը ցուրտ է, գարուս-
քինը մեղմ է (չափաւոր տաք, բարեխառն), ամառուանը
խիստ տաք է, շոգ է, մինչև անդամ տօթագին է: Օդը
անհրաժեշտ է մարդու, անսասունի և բոյսի կենդանութեան
համար: Առողջութիւնը պահանջում է միշտ թարմ օդ
ծծել (զբօսնելու գնալ) և սենեակը ամենայն ջանքով
հովահարել (օդափոխել):

Տարեմուտ. Աշակերտներին պատուիրել, որ լաւ
հետեւին իրանց տանը տօնած այս տօնին և ապա նոյնը
նկարագրեն այս ծրագրով.¹⁾ տօնի նախօրեայ պատրաս-
տութիւնները և իրանց (աշակերտների) օգնութիւնները
ծնողներին նոյն պատրաստութիւնների մէջ.²⁾ բռն
տօնախմբութեան արտաքին շքեղութիւնները, և այն
միջոցին վայելած բոլոր ուրախութիւնները, մանաւանդ
իրանց անձնական մասնակցութիւնը, տօնն աւելի զը-
ւարթացնելու համար.³⁾ ինչպէս են շնորհաւորել տան
բոլոր անդամներին, մեծերին և փոքրերին.⁴⁾ ուրիշ ինչ
որ իրանք կարևոր դատին աւելացնելու:

Ց Ա Ն Կ.

հր.

ա—պ.

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԴԱՍԵՐ

Հայելի	11
Մատներ	13
Գրատախտակ և քարետախտակ	15
Զանգակ	17
Շունը	19
Աւազ	21
Ապակի	22
Կիր	25
Ճնճղուկ	27
Կեռաս	32
Կատուներ	34
Դասարան	46


	50
Ժամացոյց	55
Խնձոր	57
Ծիծեռնակ	62
Աղ և շիր	63
Կատու	73
«Ապ-յուն-սե-նոյ»	77
Լամբար	82
Զղիկ	87
Խոհանոց	91
Ոջիլ	

Սպիտակ փոյիներ	92
 Աշխարհի կողմերը	94
Զկներ	96
«Սատանի շուաք»	99
Մեծ փայտփոր	102
Կարէ մեքենայ	108
Սեսեակների հովանարութիւն	110
Ուղարք	113
Փռթորիկ	116
Կէնգուրու	118
Նատրոն կամ սօդա	121
 ՅԱՀԵԼՈՒԱԾՆԵՐ.	
1. Աշակերտների բուսաբ. դիտողութիւնները	131
2. Նիւթեր դպրոցական զբուանքներից	137

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՈՒՃԾԴՐՈՒԹԵԱՆ

Հրատարակելով դասագրքերիսնոր շարքը, այն է «Նոր Այբբենարանը», «Իրազըննական դասերը», «Խրեստոմատիա»-ներիս ա. Բ. հատորները (գ. և դ. հատորները տակաւին անտիպ են մնում), ես կատարեցի իմ նուիրական պարտքը—նոր հոգի և շունչ փշել մեր դպրոցների մէջ, վերանորոգել և թարմացնել (այն տեղ անփութութեան մատնված) դասատութեան եղանակը: Արդ գործող դասատուների, աւագ ուսուցիչների, տեսուչների, մանկավարժական ժողովների վրա ևս պարտք է ծանրանում, որ նոքա էլ իրանց կողմից խուլ չմնան և լըրջութեամբ փորձեն ու ստուգեն իմ դաւանած մանկավարժական ճշմարտութիւնները: Նորերիս իմ ուռւսերէն դասագրքի գործադրութեան արդիւնքը անժխտելի կերպով յայտնագործեց (նոյն խոկ թովմա անհաւատների առաջ), թէ իզուր ջանքեր չեմ թափել իմ դասագրքերի կազմութեան վերա, որոնք ամենայն անարդարութեամբ (թերևս անհասկանալի անմտութեամբ և անդըր-ջրհեղեղեան նախապաշտութեամբ) մեր



մանկավարժ կոչվածների ուշադրութեան
չեն արժանանում: Բաց արա աչքի, հայ
ուսուցիչ, ճանաչիր սուրբ առաքելութիւնդ
և կենդանացրու մատաղ սերնդեան դպրո-
ցական տաղտուկ և մեռելական տարիները:

Ե. Մ.

ԾԱՆՈԹ. Տակաւին «Նոր Այբբենարանիս» տպա-
րանական մուրը չի չորացել, բայց արդէն սուտ-ման-
կավարժների պարագուկի Դաղարոս Աղայեանցը սկսել
է իւր շահատակութիւնները և խրատում է մեր ուսու-
ցիչներին չուտումնասիրել զրել-կարդացնելու իսկական
արուեստը: Կան խոստովանութիւններ, որոնք արժեն
մարդու ամբողջ կենսագրութեան: Աղայեանը իւր ման-
կավարժական գործունէութիւնը կոչում է «վաճառա-
կանութիւն» ??? Ոհ, ինչպէս կենդանի կերպով պատ-
կերացրեց իմ առաջ այս խոստովանութիւնը Աղայեա-
նի մանկավարժական գործունէութիւնը Շուշուայ թեմ:
դպրանոցում, երբ որ ես այն տեղ տեսուչ էի: Այն
ժամանակուայ էպիզոդներից մէկն էլ այն էր, որ նա—
Աղայեանը—կամենալով դրամով բարերարել դպրանոցը՝
անյաջող կերպով փորձեց զեղոագրութեան դասեր (այն,
զեղագրութեան դասեր) ստանալ (??), նոյն բարերա-
րած դրամի և վրէն էլ քառապատիկ գումարի վարձա-
տրութեամբ: Ուրեմն այն ժամանակ գրօշների շարչի,
այսօր էլ գրօշների շարչի: Արժէ, որ այս մօլանաս-
րէդինեան բարերարութիւնը հայ մանկավարժութեան
պատմութեան մէջ սկ տառերով արձանագրվի, որպէս
զի հայ ուսուցիչը այդ աղուէսագրոշմով ճանաչէ մեր
տիպիկական առաջնորդներին և սովորէ ապրել իւր
անձնական փորձառութեամբ և իւր սեպհական խել-
քով: (Յամենայն դէպս կարդա «Սուրհանդակի» № 17
և 18-ը և «Մշակի» № 182-ը):

ՀՀ Ազգային գրադարան



NL0248881

ՀԵՂԻՆԱԿԻ ԿԱԶՄԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

«Բնուանեկան աշխարհ»,
«Գիւցազնական աշխարհ»,
«Նահապետական աշխարհ»,
ՀԵՂԻՆԱԿԻ թուարանական խնդիրներ,
Կետնքի հանգամանքների համեմատ
Թուարանաթիւն,

Խрестомատիաներ,
Իրազնական գտուելու,
Նոր Այրենապահն:

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ՝ Պիտի ՊԱՏՐԱՍՏՎԵԱՆ.

ՀԵՂԻՆԱԿԻ մանկավարժական յօդուածների ժողովածուում,
«Իրազնական գտուելու» վերաբերեալ աշակերտական ալլուստ,

«Նոր Այրենապահնը» յարմարեցրած վրացախոս մանուկների զպուցներում գործածելու համար:

(Պէտք է նախ գտնվել նրանարակիչներ):

79-147

674.

